BnF
gallica
BIBLIOTHÈQUE NUMÉRIQUE

Diwan Or E Tagaran : Erkrord Tpagrowt'iwn

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Hisarian, Hovhannes (1827-1916). Diwan Or E Tagaran : Erkrord Tpagrowt'iwn. 1910.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF.Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :
*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.
*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer ici pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.
*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.

b2097

Մ. Յ. ՀԻՍԱՐԵԱՆ

ԴԻՒԱՆ

ՏՈՒՓ ՊԱՆԴՈՐԻ — ԽԻԿԱՐԻ ԿՏԱԿԸ
ՖԻՐՏԷՎՍԻ — ԱՌԿՈՅ ԱՌԱԿ — ԱՂՈՒԷՍՆ ՀՈԳԵՎԱՐՔ
ՎԱՐԴԱՎԱՌ — ՈՒԼՈՒՆՔ ՇԱՄԻՐԱՄԱՅ Ի ԾՈՎ
ԵՒ ԱՅԼ ՔԵՐԹՈՒԱԾՔ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԱՒԵԼԵԱԼ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐԶՈՒՄԱՆ
Զաքմաքճըլար Յակոբեան խան
1910

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

ԴԻԻԱՆ

2008-129975

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ ՆՈՅՆ ՄԱՏԵՆԱԳՐԻՆ

ԿԱՐՃԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԵԾԻՆ ՆԱՔՕԼԷՕՆԻ. *տպագրութիւն Միւհէնտիսեան, Կ. Պոլիս*, 1848։

ԲԱՆԱՍԷՐ, Հանդէս ամսօրեայ, երկհատոր, տպագրութիւն Հ. Գայօլ, Կ. Պոլիս, 1851 *և* 1852։

ՆԵՌՆ ԿԱՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՐՀԻ. տպագրութիւն Սրբազեան, Կ. Պոլիս, 1866։

KHOSROF ET MAKROUHI. Traduction française de G. S. Babayan. Paris, Lefrançois, 1869.

ԽՈՍՐՈՎ ՈՒ ՄԱՔՐՈՒՀԻ. գաղիերէն թարգմանութիւն Բանասէրի մէջ հրատարակեալ նոյն մատենագրի հայ վէպին։

ԴԻՒԱՆ. քանք չափաւ, առաջին տպագրութիւն Միւհէնտիսեան, Կ. Պոլիս, 1871։

Մ. Յ. ՀԻՍԱՐԵԱՆ

ԴԻԻԱՆ

որ է

ՏԱՂԱՐԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ՅԱՒԵԼՈՒԱԾՈՎՔ ՀՈԽԱՅԵԱԼ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐԶՈՒՄԱՆ
Զամամաքաշար Յակոբեան խան
1909

Bnf
L&

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Սակայն Տաղարան իւր համեմատեալ հատուածոց հետ ուրիշ յարակցութիւն չ'ունի բայց միայն զչափ ոտանաւորաց։ Տաղարան էր առ նոսին ծաղկաքաղ Լրոց հաղուարդաց երգոցն հայրապետաց մերոց։ Իսկ Տաղարան է յարդիս հատուածոց խառնուածիցն հաղուարդ ասելոց հետ երգոց ինձանից կամ ոմանց հեծութեան զանազան քերդուածոց։ Ուստի կանխաւ յաչ ասելոյ թէ ասացեալքս ինքեանց մէջ ոչ նոսին ոգեսուելի վայելութիւն է գտանի, ոչ յեանց ճարտարի հանճարն, որք էին ասուածք Ոսկիփորիկի և Տաղարանի սոքա էին զամէն ոգի ոգի արարեալ կամ քերդուած հատուածք 'ի միասին և արանել 'ի մատեանս։

Պարտիս քերդուածս ասացուածն է ասանել իւրաքանչիւր զիւր քերդուածս 'ի մի մասանն, զոր ի'անուանեն Տիւան, ասել մերս Դիւան, այս է անդի արանեալ կամ դարան յիշատակաց։ Այս կարգ քերդուածս զերծոնչակ արարուածս կը հանեալ էնիւրի իւր սրանչելի Տիւանաւն։ Վասուց ծանօթ էր առ մեզ իսկ այս օրինակ քերդուածքն, որոց հետևանքք եղած են երդիչք Կաւկասեան դուռաց, կոչեալք Աշուղ, Պարսիկ անուանակոչութեամբ (Աշուգ)։ Յայսմ կարգէ են Սայաթնովայ, Աղբար Սրամ և այլք, որոց մեկնանանք իսկ արարիչքն բարբառով նշանակեն Սուրնանդակ, Սերոց, (Սէյեդ, Էղպէր) ևն։

Սոցա երգերն, լի գեղեցիկ իմաստով և եռանդուն ոգով, պիտի մնան իբր նախատիպ գաղափարք պարտականաց կամ արևելեան քերդողութեան։ Ցաւալի է որ պարսիկ բառից յաճախութիւնն շատ հեղ անհամակիրի կը յարդարէ զնոսին, իբր այն թէ ազգային բարբառս, անկարող յարմարելոյ զյորդառատս զգացմունս և զիմաստս վսեմական, ու հարկի զանկարգի յաղթութիւն օտարս։ Յիրաւի զանեղի ազգասիրութեան անլոր է 'ի հայթայթել զամենայն պայմանս ձոխ և յղկեալ լեզուի։ Սակայն ուստիկ է գրողին լի գանձս փարթամութեան և անմոռանալի վայելչութեան։ Եւ ո՞ր այն է լաւագոյն, զիմա՞ն ու մնալոն ազգութեան մեր, թէ քերել ու ոտս օտարին կամ ոգալ 'ի ստոր ոտիկանն ոճոյ։

Բանի մի խօսք ալ 'ի վերոյ չափաբերութեան։ Յայտնի է թէ պարսիկ ոտաչափութիւնն յօրով.ք (hurkfh) կը բաժնէ յիրերոց զմիջոցս հանդուսանն, ինչպէս հելլենականն չէչափ։ Իսկ արդ, կարծեմք թէ հայերէն ուռդանութիւնն ընդունակ է, ինչպէս յունականն, ոչ միայն 'ի ոգութիւն և 'ի կարճութիւն, որպէս ոմն երբեմն, Բագրատունին, ցոյց ետ Շարակնոցու, այլև, միրճակից 'ի բնէ և զուգորդ ոգոյից պարսկերէն լեզուին, 'ի յօդս և 'ի խոպս, այս է յեղանակաւոր անդամատութիւն և յերկար միջոցս հանդուսանն։ Այս ոճով գրեալ են շատ երգք Սայաթ-Նովայ և Ալքար Ալամոյ, ըստ օրինակի Շահնազարեանց Գիրաէլանի և Սայեր Կիւլիսանեանց։ Այն չափով է նաև Խիզարի կտակն մեր, զոր ու 'ի փոքր չարամբրած ենք, հնգեամանոնանեան և յերկուս միջոցս բաժանեալ, իւրաքանչիւն բաղկացեալ յեօթն և ութ վանկից։ Այս է պարսկական մեծաչափն, որոյ բազմազիմի փոքրագոյն չափեր ալ կան, միշտ նոյն եղանակաւոր ձեւոյ վերայ գաղափարեալ։ Ցանկալի էր որ Կաւկասեան

երդչաց օրինակն մեր տարաշափութեան օրինաց տարա-
կալի միտաձեւութիւնն այլափոխէր, խնդիր մի զոր յա-
ղելոյ և լուծելոյ մեծ հարկ ի վերայ կայ։ Թէպէտ զեղծ
տպարութիւնն և խանգարեալ ճաշակք առ հորաձեւու-
թիւն կամ յանդգնութիւն հոմարիցին զոյն զոր մեք
անհրաժեշտ պէտս հոմարիմք, սակայն կարծեմք եթէ
այս խորհուրդն մեր չ'ելցայ բոլորովին յամենք և տարբ-
գիւն 'ի ձեռն ազգասիրացն գրչաց։

1871

ԴԻՒԱՆԻ այս երկրորդ տպագրութիւնն յաւելեալ են
երրորդ և չորրորդ մասեր որք կը բովանդակեն 1900 էջն
'ի վեր չտպագրուած տողեր։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԴԻՒԱՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԾԱՌ ԿԵՆԱՑ

Արեւելք 'ի հնուց որպան խնամուեան
Եւ ուաճար բանաւոր երգ արանց եղան։
Վասուց ոսկրուեան է մէջ արեւելեայց
Հանդէս ասպարիզի կարգալոյ քերդողաց,
Ելնել 'ի բանական երգս սէր ըմբշամարտս,
Առնել երարս հեռ հանճարոյ զօրեմարտս,
Եւ որ յախոյեանէն կանգնէ ըզյաղթանակ
Այր զընկեր նըւաճեալ, ասնի ըմբերյանակ։
Երբեմն էր ասպարէզն 'ի Պարսատ և Պարտ,
Ուր քերթողաց զարդիւ ինքն այր Խալիֆա,
Յետոյ 'ի Պարկասան, ու Հրաչակի Ճիրաղ,
Ճիրակայ ապէս քերթի, Գողթան ապէս 'ի Ճիրայս,
Գողթան, ուր Հայրենիք են գինոյ և բամբռան,
Ճիրակ, յորմէ Ճիրաղ ժառանգեաց զերկասան,
Ուրանօր երգեցին Սասին և Ֆիրէտէխ,
Ուր Ճահ Մահմուտ կարգայր նըշան ասպարիզի։

Քերթող մի 'ի Շիրազ էր անուն Մուսմոքի,
Ի հանճար զերազանց և եռանդուն ոգվի.
Հրմուռ էր ոչ միայն ազգեն մուսային,
Այլ և հոգեկանաց երկնատար խիզախց,
Այլ և երկրաւորացըս պէտքն զիտութեանց,
Նաև հրազանի շատ լեզուաց և ուսմանց,
Մինչ զի ընդ ամենայն երկիր բարբառ նորուն
Եւ մինչ 'ի ծագըս ել աշխարհի իւր անուն.
Եւ յամենայն կողմանց բազաք 'ի քաղաքէ
Գային 'ի սեռանել ըզՇէյխն յիւր թէքէ,
Գային և յազգէն յարքէն յարդարառս,
Ընդ ունորսն բանին և բուսոյ ճառագայթս։
Քերթողն զարբազան անձն 'ի վազուց հետէ
Մխանգամնայն ձայնի խնամուն, մարդպէտ.
Զի միշտ 'ի նա շունչ ոգւոյն սատանային
Եւ զերազ 'ի զլուխ բոց հրոյ երկնային։

Այլ ամն, որ 'ի գաւառ քերթողաց 'ի Գանդէր,
Եկեալ ուս Մուսոմքա կոչեաց զայն 'ի կրթէս.
Եհաց զսատանայոն ըզՇէյխն հրաշակերտ,
—Խնդրեսցուք եթէ զիտուս, ասէ, թէ ինչ է նոր,
Նոր ինչ անուս, զոր ոչ յաշխարհի զ՚ուսաս,
Զոր ոչ ակն հուսաս և ոչ ականջն լուսաս,
Եւ ոչ 'ի սիրտ մարդոյ անկեալ է տակուսին,
Նոր ինչ ըզբանչելի, մեծ քան ըզբնուսին,
Եւ որոյ զիտութիւն շահուէս 'ի մարդն է,
Սանուանոք թէ սատանայ ըզմեզ անմահս առնէ։

Այսպէս ասաց քերթողն եկաւոր և յաւել
Թէ խընդրոյն լուծումն միրյանակն էր վայել։
Պահիկ մի լռութիւն 'ի վիճակէն ոչխաց,
Յորում քերթողքն զուշ կ'ամփոփէին միտաց,
Ինչպէս կը ժողվէ զուժ ընթշամարտ կորովի,
Յառաջ քան ըղձանչաց ընդդէմ առ երկոքին.
—Ոչինչ է նոր, ասէ նա, ո՛վ քաջ, յաշխարհի.
Օր առաւ նրմանէ և դիշեր զիշերի.
Ամէն կին կը շընթէ, ամէն այր կը ցանկայ,
Ամէն արարած ծընած առեն զոչէ անկաց.
Աղբ և լեռաք հանցին են ներեալք յԱդամայ.
Եւ կինն է հանմանայր 'ի նախամայրն Եւա.
Դիւցազունք չ'անցանեն քան ըզդիւցազուն անդր.
Ալէքսանդր է Կեսար և Կեսար Ալէքսանդր.
Ամէն գիրք յիրերաց են օրինակութիւն,
Զեպոռն է վարժապետ, և այլք իւր ձեռասուն.
Արարքը դաղանի հետ բարբարին նրման,
Զերթ երկու կաթիլ ջուր, չ'են եւել զանազան.
Ներկայն է միշտ անցեալ, անցեալն է ապագայն,
Ամենայն ինչ է հին, նորն է մահ մի միայն։
— Ոչ թէ մահ. հինաւուրց է նա քան զամենայն,
Ասէ հակառակորդն, այլ դեղ անմահութեան.
Սա է նոր զոր խընդրեմն և յուսամ գտանել,
Յառաջ քան ըզմահն ժանեաց զիս յոշոտել։
Կորուսեր, դու ո՛վ քաջ, ըզմիրյանակն որ իմ։—
Ժրպտեց առատաձախոս ալէգարդ ծերունին.
—Գիւտս այս չ'է 'ի նորոյ, ասէ, այլ վաղեմի.

Իսկ .բս չէ՞ ընթերցեալ ձեզ զԵսայեայն Բան մի ;
Որ ասէր զայս ծանեալս, որ ասացեալն հատեալ
Ի Պատրոյ 'ի Պողոսոս ուստ ընդ սնեալ սատեալ.
Որ 'ի գիրս զերանն գերեալս հանեցարուալ
Ասելոյն հրաշալի պատմել սնեալս հոգեալ.
«Զուտ, ասէ, այր պատուոյ լուսէր զանանհոմեանն
Էր ,Յոգին. իսկ երբ մարդ կրայր զանանդրամեանն,
Զեռինք սէրտնոսկան, խլեալ սրմնատրի,
Բարձին ,երկրէ ,երկին ըզծառն հատնալու
Զի թե ոչ, պէտք էին զամէն ինչ փոխելոյ,
Ըստարերոյ սատանայեանն, ըստոյգ սնարանոյ,
Զօրէնս ,յաւանենից կարգեալ սիրելոյ,
Զօրէնս իսկ մարդկերէն և ըստնարանոյ կարգեալ.
Նաեւ զամենայ շրջան 'ի կարգ անճառելի,
Որ գրաշնեն 'ի ճակատս կընիք անջնջելի.
Նաեւ ամենայն շունչ և անբան կենդանի
Պէտք էր փոխել զիւր վարս բարոյ վայրենի.
Հարկ ընէր գազանին վայրագ, երբեւ զոչխար
Անմեղական վարս.ք առնել ,յոչ իւր գազար,
Կամ', Հրէա մարդասէր, գայ սպրկ հեռ մարդկան
Անիծան և վրդի, օձոյ և սխտեռան :
Այլ որ մեծ .քան զամէն և գրժուարին 'ի գործ,
Պարզկային բնութեան նորոգութեան էր գործ,
Որ 'ի կեալ ,յաւիտեան ,յանդարձ այր ընդ ընկեր,
Այն որ առ ժամանակ զիրար չէր հանդուրժեր,
Այն որ .քան ընդարան վայրի է մարդասանձ,
Որ ընտր և ընտիր անօրհնաս ճարտարեաց :

Դարձեալ հարկ էր ըզհարկս ամենայն մերկանալ.
Ոչ մանուկ, և ոչ ծեր, ամէնն հաւասար ըլլալ.
Ոչ հարուստ, ոչ ապքաստ, ոչ զեղ և ոչ արգեղ.
Այլ փոխել զամէն ինչ զոր արար ձեռն անեղ։
Եւ ո՞ հաճի ընդ այս, ո՞վ է մարդ երկրաւոր
Որ չըցանկայ լինել զերազոյն թագաւոր,
Որ ելնէ 'ի գահէն, թողու ըզգաւազան,
Ինչանէ 'ի ստորեւ ամենայն ընկերական։
Եւ ո՞ւր զայնչափ մարդիկ բընակեցուցանել.
Ոչ անհուն անապատք կարէին իսկ բաւել,
Ոչ թէ ծով մինչ 'ի ծայր բեւեռային ծագաց
Փոխէր յերկիր ցամաք ըզկայս ստամանեաց,
Եթէ դար մի միայն անմահ եղեալ մարդկան,
Աճէր և բազմանայր քան զաւազ առ ափան։
Վասն որոյ խրլեայ ոչ, ասէ, ըզծառն և զեղ։
—Եւ ո՞ւր, եհարց հընդիկն, ուր է արդ նորին տեղ։
—Ի մահ, պատասխանի արար Մէվլանայն մեծ,
Ի մահ, յորմէ նոր կեանս առնուլ օրէն է մեզ,
Ի մահ, յորոյ 'ի բայ, ոչ ինչ նոր յաշխարհի,
Եւ մահն է մի միայն ծառ կենացն անմահի։

ԾՈՒՌ ԱՇԽԱՐՀ

Քաղքի մը մէջ կայր առեղծք
Ծեր խմաստուն ծաղկած ալեօք.
Տիեզերաց ծիրն ամենայն
Քալած և շատ տեսած էր բան.
Երկրագունախս ամեն ազգեր,
Ամէն քաղաք նաև գեղեր
Դիտած էր, նա և մարդոց բարք,
Ճարտարութեան գործք և հընարք.
Եւ այս ամէն այցելութեան
Արդիւնք դիզեց դանձս հըմտութեան։

Ցուրտ ձըմեռուան յերկար գիշեր,
Երբ ժողովին խիտ ակումբներ
Շուրջանակի վառարանին,
Ունկըն դընել նըմա գային
Ծերք և տղայք և կանանք։
Արկածք անլուր բազմադիմի
Եւ աշխարհաց նըկարագիր

Եւ անհամար զբրոյց անգիր,
Ազգ եւ լեզուք ամենեքեան
Գային 'ի վէպքն յերեւան։

Պատմեմ ձեզ, ուեարք, ասայ օր մի,
Բան որ դբրոյ մէջ չը պատմի,
Որուն անձամբ ականատես
Ի ականջալուր վկայ եմ ես.
Էր, ասէ, վայր զարմանալի,
Քաղաք մեծի թագաւորի,
Զբգիտեմ ճիշդ յո՛ր աստիճան
Կ'ինայ լայնքի 'ւ երկայնութեան
Կիսագունախս այս 'ի վերայ,
Եւ ոչ զանուն յիշեմ հիմա։

Զ'ըլլայ կարծէք եթէ ասրբեր
Ցայլ քաղաքայ, եղկիւր մ'ունէր,
Կամ, ըստ բանին Ղատրաբոնեան,
Էր աչք մարդոյ 'ի գագաթան,
Եւ կերակուր նոցա լուսոյ.
Կամ Ա.ժդահակայ կանանց դաս,
Պառաւ վիհուկ խարտեանի,
Ընակութիւն դեռնախշաի,
Երկաներեսայլ, յուշկապարիկ.
Ո՛չ. այլ նման մեզ են մարդիկ։

Քաղաք մըտայ կէս դիշերին,
Լուսաւորեալ նըմին օրին,
Մըրջնոյ պէս ժիր և փութաջան
Էր ժողովուրդ առատանդական.
Նաեւ ձիւնն և անասուն
Երթեւեկեն դիշերն 'ի բուն,
Եւ դըղըրդի սալայատակ
'Ի դոփմանէն սալասըմբակ.
Լուսցաւ, և մարդ քուն մըտանէր.—
Անդ դիշեր ոչ, ոչուն էր դիշեր։

Անդորձ ոչխարք կը շըրջէի
Այս թանձրաքուն քաղքին մէջի,
Աւերակաց քրնոյ նըման,
Կամ զերթ թըմբիր մարտոլական։
Դուռն ընդ առաջ էր հոյակապ,
Մըտայ, անդ էր տեղ և տարափ
Մեծ խընջոյից, հեռք զեղխութեան.
Ընկոզմանեալ հանդիսական
Նընջէր 'ի քուն թանձր և խորդալր,
'Ի դինեբուոյն կոյծակնահար։

Ելայ արտաքս, անցի յառաջ,—
Թըշուառական յահեակ և յաջ,
Կարծըր դեռնին վերայ սրփռեալ,
Աւելի մերկ քան թէ զգեցեալ,

Պատառուտուն ձորձ ցընցուտի,
Հիւծեալ, թափեալ գոյն ծընօտի,
Թըմբրեալք քաղցու և 'ի ցըրտոյ
Քան թէ ծանրեալ աչք 'ի քընոյ. —
Հոն կը մեռնէր հէգն և հարուստ
ՈՀն ի քաղցէ և ոմն կուշտ։ —

Անցի յառաջ. — կառք քառաձի
Տանէր հեծեալ չորք կանայի,
Պըճնեալ զարդուց մէջ շողշողուն,
Մըրափելով աչքերն անքուն։ —
Էր կանանի ճոխ մեծատան,
Հացկերութին լեալ կոչնական,
Եւ արձակեալ իւրաքանչիւր,
Այդուն առնէր դարձ 'ի տուն իւր
Հանդչել 'ի քուն, պատրաստական
Երեկոյին դալոյ հըսկման։

Մինչ արշաւէր վայրկեանանման
Զորից հարանց կառք 'ի կայան,
Անդուստ թափոր սեաւ կուսանի
Յառաջէր մի զմիոյ կընի.
Յեռոյ բոկոտն և ողջախոհ
Կրօնաւորաց կըգայր գըլուխ.
Էին կուսանք փոքք գ'ըթութեան,
Այլք Միանձունք ողջմըտութեան. —

Էր բընակիչ այս քաղաքին
Ոմն ամուրի, ա՛յլ բազմակին։

Պալատ մի կայ շատ մեծաշէն,
Որու Ատեան անուն կոչեն,
Ուր իրաւանց 'ւ արդարութեան
Կ'ըսէին թէ վըճիռ կուտան։
Ոմն էր փըրած զաչս ընկերին.
Զերկուս ոտխս յատեան բերին.
Ցետ շատ խօսից, շատ հարցփորձներ,
Արտաքս ելին դատախազներ. —
Գընաց յանցաւոր ձեռն 'ի գըրպան,
Իսկ աչք փըրեալն 'ի կախազան։

Լըռեց այս տեղ ծեր վիպասան. —
Մընաց յապուշ հանդիսական.
Ցետոյ հարցուածք հետաքըրքիրք
Ցամեն կողմանց և բիւր խընդիրք
Պաշարեն զայրն հըրաշաբան. —
Ի՞նչ անուն այս ազգի մարդկան,
Ի՞նչ անուն այս քաղաքին էր,
Ո՞ր կողմն երկրի նա գըտանէր.
Ի՞նչ էր լուծումն այս հանգուցին,
Եւ ի՞նչ խորհուրդ ծածկէր խորին։

—Ինչո՞ւ խորհուրդ լծուի ձեզ մեծ,
Կունա ծերունին պատասխանեց,

Ի՞նչ զարմանք են թէ ծուռ աշխարհք
Երկնաւորին արնկեցին աչք։
Ինչպէս չինեց մեծ Նիւարէտին
Հիմն 'ի վեր տուն երբ առնոյր կին,
Որ զայն հիմանց դայր տապալել,
Զերթ պիտի դայ ասա Գաբրիէլ.
Եւ այն առեն այս ծուռ աշխարհք
Կործանելով, կանգնի չիտակ։

Եւ ո՞ւր է ձեր ուռած աշխարհ
Ուր ամէն ինչ ըլլայ հաւասար,
Ուր ոչ հարուստ և ոչ աղքատ,
Ոչ անօթի, ոչ վէճ ու դատ,
Ոչ բռնութիւն և ոչ առեան.
Այլ է անդ դահ արդարութեան։
Ի՞նչ հարկ լինէր կոչել յայնժամ
Աշխարհ անուն ըղձալուխտ զայն։ —
Իսկ տո՛ւր անուն մեր քաղքին խօլ
Կ'ուզես Փարիզ, կ'ուզես Ստամբօլ։

ԳԱՂՏՆԻՔ ԵՐԱՆՈՒԹԵԱՆ

Մելամաղձոտ ես շատ անդամ
Գերեզմանաց մէջ ժուռ կըգամ,
Լուռ մունջ, մթաոք վարանական,
Անդ մենաւոր թափառական,
Սիրեմ, հեռի 'ի մարդկանէ
Եւ յերկրաւոր աղմկանէ,
Զուշ ամփոփել զիմ և խորհել,
Եւ ըզմեռեալս հարցափորձել
Ի պէսպէս շար տապանադրի,
Ցոր շատ խորհուրդ պարունակի.
Շատ դարաւոր մեռած մարդկան
Կ'ելնէ յայնժամ յոտն ուրուական,
Գայ և ընդիս լինի ընկեր,
Հետ կը խօսիմք շատ առակներ
Անցեալ, ներկայ և ապագայ
Եւ բիւր հազար նիւթոց վերայ։
Յայնժամ մթաոք վերացական,
Կ'ելնեմ յերկնից բարձր աստիճան,

Եւ մարդկային հոգոյ բեռինք
Ընկճեալ վանին դէթ ի վայրիկ։

Խորասուզեալ ի ընթերցման
Տապանագրի վերտառութեան,
Պատահեցայ երկտող քանի
Ի սրբատաշ վէմ դամբանի,
Թէ «Այս տապան է Հանգրատեան
Խուլ և համեր երանական»։
Այսքան և եթ, և այլ ոչինչ,
Բայց միայն քար ողորկ և ջինջ։
Շատ խորհելով խորաքննին,
Զ'եղէ հատու մտայոյ բանին.
Ի՞նչպէս օրէն խուլ եւ համեր
Երանաւոր լինելոյ էր.
Եւ հանելուկս այս շատ դժար
Ինձ դերեզման փակեալ մընայր,
Երբ ծերունի ատանդական,
Տեսեալ զիմ չան վարանական,
Եւ դրժայեալ առ իս արդեօք,
Եկաւ ըստ ինձ արտրնօք.
—Մի՛ տագնապիր, երիտասարդ.
Ահա՛ լուծումն բանիդ այդ.
Ես համոզեալ եմ թէ ընութիւն
է ընդհանուր հակասութիւն,
Եւ թէ շատ ինչ է դժուարին
Ընդդէմ մտայոյս մարդկային.

Ճլճլոյն խոնարհ ի՞նչ է օգուտ,
Զոր օրինակ, դիտեմ անուտ
Թէ կը մաքրէ 'ի փըշոյ զարտ,
Յեցն օձակեր փըրկէ ըզմարդ։ —
Բայց է մրտաց անհատական
Շատ կարծեցեալ ինչ բընական. —
Լեզուին ի՞նչ շահ, զոր օրինակ,
Եւ ականջաց ի՞նչ նըպաստակ,
Զըդիտեմ ես, և կարծեմ ոչ
Թէ բաց ձայնէ ինչ բարձրագոչ
Կարեն ընել պիտանացու
Ըզդայարանք ձայնեալ լեզու,
Ի բաց առեալ զընդունարան
Ըզսընընդաց կոչեալ բերան։
Իսկ ականջաց միակ դիտումն
Է բընութեան մեր խոնարհումն
Ի կենդանւոյն նըմանութիւն
Այս որ ականջն է վերհագոյն,
Քան թէ առ այլ շունչ ամենայն
Զաղարակերպ 'ի գործարան։
Գիտեմ թէ է ոտին պաշտօն
Տանել ըզմեզ այս տեղէս հոն,
Գիտեմ թէ աչք չըկային մեր,
Գըլուխս 'ի յորմն հարեալ փըշրէր. —
Սակայն թէ չ'էր լեզու 'ւ ականջ,
Գուցէ կեանքն էր յոյժ դերագանչ։
Լեզո՛ւ, ո՛վ թեալ հաղորդութեան

Մարդոյ ընդ մարդ ունայնաբան,
Դո՛ւ եւս անօթ այս հեռադրին,
Սուր լսելի, ոուն թըմբկին,
Քանի՞ չարեայ բոյն ցիրուցան
Քանդէր թէ զձեզ վակէր խըլցան։
Ո՞չ թէ այլուր չար բաւական
Է վիճակեալ ազգի մարդկան։
Ի սկըզբանէ անտի լեզու
Թափէ յականջ թոյն մահացու.
Սովաւ զնեա օձն խաբեայ,
Սա 'ի դրախտէն եհան 'ի քայ,
Սա ծընաւ վէճն ու թըշնամանք
Սորա շընորհ դիտեն մախանք։
Եւ ի՞նչ զարմանք են թէ որ մէկն
Առանց սրա ապրի երբէկ.
Երանի՞ ում բոլոր կենաց
Մէջ ոչ լսեց և ոչ խօսաց,
Ինչպէս էր այս լուսահոգի
Որ խուլ և համր էր 'ի ծընէ։—
Այսպէս ասաց ինձ ծերունի,
Ցեռոյ 'ի քաց գընաց ինծմէ։

Ցիմար էր մեծն Հերակլիտէս,
Եւ բըլթամիտ Դիմոկրիտէս,
Տակառաբնակ շընիկն անմիտ։
Ոչ արուաստք զօրեն, ոչ խինդ,
Ոչ 'ի լերին, յանապատի

Հալածական , վրտարանդի ,
Եւ ոչ ճրգնել խոտաճարակ
Կարէ ամեն երկրաբնակ ։
Այլ համր և խուլ պէտք են լինել
Կեանս անվրդով առ 'ի գլխել ։
Է առասպել մխիթարութիւն ,
Եւ սէրն է լոկ շաղփաղփութիւն ,
Պատրանք ունայն մխայց մարդկան ։
Այլ ճանապարհ երջանկութեան
Է լսելեաց 'ի խլութիւն
Եւ 'ի լեզուին մեր համրութիւն ։

ԱՐԾԱԹ

Ի մայր քաղաքն Ղստամպոլի
Կար երբեմն այր առաքինի,
Յոյժ իմաստուն և խոհական,
Եւ հեռեւոյ արդարութեան.
Իւր նըմանեաց բարիք ընել
Եւ 'ի չարէն սիրեր խորշել.
Շատ ա՛յլ ձիրքեր ունէր պարծանք։
Մի միայն էր նորա յանցանք.
Նա չ'ունէր արծաթ.
Ըսին. — Անշա՛հ մարդ։

Խե՛ղճ մարդ, արնած որբ 'ի ծնողէ,
Շատ զբրկանաց նա տըր է.
Կանուխ բացաւ ակօս խորին
Թարմ ճակատուն վրայ քրտին,
Կանուխ անոր ոտքն ու դաստակ,
Պատառոտեց փուշ և տատակ,

Խեղճըն կանուխ դիտաց ըզյաւ,
Պատառ մի հացի դիմն ուսաւ։
Այլ չ՚ունէր արծաթ.
—Տես ի՛նչ ապուշ մարդ։

Բարեսէրիլ, գեղայարմար,
Աչքեր ունէր թուխ և պայծառ,
Անուշ նայուածք հրաշալի,
Բարձրահասակ և նազելի,
Շատ գեղեցիկ օրիորդաց
Հրապուրիչ էր ինք մի խայծ.
Բայց իբր յանարդ անդամալոյծ
Ոչ ոք ՚ի նա աչքս կառոյց։
Զի չ՚ունէր արծաթ.
—Ո՛հ ի՛նչ աղքատ մարդ։

Մարդկան վերայ յոյս չ՚էր դրած,
Բոլոր իր յոյսն էր առ Աստուած,
Հաստատութեան ընթանչելեաց
Եւ կազմութեան տիեզերաց,
Այլ և հրաշից բնութեան բոլոր
Նա խելամուտ էր օր քան զօր.
Նաև զուտումն ազգի մարդկան
Դիզէր յիւր գանձն իմաստութեան։
Բայց չ՚ունէր արծաթ։
Ըսին. — Ի՛նչ խեղճ մարդ։

Ինք որ գլխաճ էր մարդասէր,
Մէկ մլատերիմ սիրտ չ'էր գլաեր,
Ոչ բարեկամ, ոչ կարեկից.
Ոչ նեցուկ մ'էր նըմին, այլ կից։
Ոչ թէ մարդու տեղ չ'էր ինքնին,
Եւ ոչ անբան, ոչ բաուերին,
«Շունչ մի մեռեալ, դի անկենդան»
Ըսին, 'ւ անոր քովէն անցան։
Ոսկի և արծաթ
Չ'ունէր, — նա չ'էր մարդ։

Այլն իմաստուն տեսաւ թէ «չ'է
Մարդ 'ի քաղաք իւր մարդարէ»,
Տակեց մոխաղ, օր մի երաւ
Քաղքին ըսաւ. մընա՛ս բարեաւ։
Տաս ժամանակ յոտար երկիր
Պանդխտեցաւ նա ժըրաժիր։
Աստուած օրհնեց ըզքան նորուն,
Բաղդ նըմին եւս ժըպիտ ողջոյն.
Ոսկի և արծաթ
Տահեցաւ նա շատ։

Դարձաւ եկաւ յիւր Հայրենիք
Արծուի նըման զըլուխ բարձրիկ,
Կամ ինչպէս էր մեծըն Կեսար
Երբ յաղթականն անցաւ կամար։
Աչք 'ի յոկւոյն խըտրելով

Խոնարհեցաւ աշխարհ ահով,
Եւ ընդ առաջ ցընծութեամբ եկ
Ոսկւոյ բաղնին երկիր պարել։
Արծաթ և ոսկին
Ասուած մարդն ըրին։

Պարտք մ՚է ինծի ըսել սակայն,
Ի վրկայել ճըշմարտութեան,
Թէ այս փարձոյ մէջ քուրային
Ամենայն ինչ չ՚էր զուտ ոսկին.
Կ՚ըսեն նաև ձայնիւ ցածուն
Թէ վեստուրք ինչ արդարութիւն
Զըրդեց անդէն եւլած աստեն.
Բայց ասանցմէ մեզ ի՞նչ փոյթ են.
Ունէր շատ արծաթ,
Ոսին. — Ի՛նչ լաւ մարդ։

Դարձեալ երբ ինք օտար աշխարհ
Գընաց, ի ժողուց գիրքն արհամարհ,
Գոյեց էջերն իմաստութեան
Եւ չքաւաւ անուն Ուսման.
Իրաւ ալ է թէ սա որդի
Է Ասուծոյ նախանձորդի,
Եւ թէ երբէք իմաստութիւն
Չէ՛ լծակից վատ հոգերուն։
Բայց կ՚ընէ արծաթ
Իմաստուն ըզմարդ։

Մինչդէին արեւ ջերմիկ,
Տօթ բացօթեայ և ցուրտ հողմիկ
Նորա այտերքն կարմրորակ
Թառամեցուցեր էին ցամաք.
Խոժոռադէմ սեւամորթիկ
Կը նըմանէր 'ի թուխ խափշիկ.
Բայց. — Ի ոկին լաւ քան ըզտես,
Ըսին կանայք, ի՞նչ փոյթ է մեզ։
Ունի ոկի շատ,
Այս ի՞նչ աղտոտ մարդ։

Եկէ՛ք, պատմեմ ձեզ նոր հըրաշք
Զոր ամէն օր տեսնէ աշխարհ.
Էր այր արդար, ըսին թէ չար,
Էր խմաստուն, ըսին տըխմար,
Էր գեղանի, ըսին տըխեղծ,
Ինչ նոր հըրէշ Աստուած ըստեղծ.
Մա՞րդ թէ անբան է կենդանի.
Ոչ ունի ոկի,
Այս ի՞նչ տեսակ խելագար մարդ,
Եւ ոչ իսկ արծաթ։

Յանկարծ այս հրէշ փոխակերպէր.
Զարին ըսին թէ բարի էր.
Տըխմարն եղաւ այր խմաստուն,
Տըգեղն եղաւ գեղով սիրուն,

Ոսկի՛, ո՛վ մեծ, որուն կուտաց
«Վերն Աստուած վար վաթսունց»
Ըսին. դու մեծ կ՚ընես ըզմարդ
Որ ունի արծաթ,
Խոնարհ կ՚ընես զայր որ չ՚ունի
Արծաթ և ոսկի։

ԽՆԴԻՐ ԵՐԶԱՆԿՈՒԹԵԱՆ

Յերկրին բրիտանական է ախտ մի ահարկու,
Կէս մի տարափոխիկ և յաճախ մահացու,
Ախտ չար անբուժելի, որուն նըման չըկայ
Ուրեք հիւանդութիւն երկրագունախս վըրայ.
Որուն ճար մի 'ի ծայր հըրաշինու գըտան,
Որուն անուն ղաքլին անգլիարէն կըտան,
Որ ի հայումն յըտակ թարգմանի խենդութիւն,
Եւ զոր անգլիային ղըրէ յիմաստութիւն։
Յաճախ այս ախտին զոհ է հարուստն ու փարթամ
Որուն ա՛յլ չըպակսի բայց մեռնիլ տարաժամ.
Որ՝ յաճախ տաղտկութեամբ այս միակերպ կենաց
Տարեալ ելրտին ձանձրին յամէն կողմն աշխարհաց,
Խընդրէ և ոչ գըտնէ զոր ինչ ոչ գիտէ իսկ,
Եւ ոչ ինչ գոհութիւն գըտանեն նորա իղձք։

Այր մի էր 'ի դատէս այսորիկ, մեծատուն,
Ճոխ իբրեւ Կըրաւոս, բազմակին զերթ Սոլոմոն,
Ոսկւով աչքն առաւել քան ըզբոլըս ըլցեալ,

Կանացի նենգութեամբ սիրան էր յոյժ յապեցեալ.
Պէտս ինչ չ՚ունէր և ոչ դործ ի ընդբալանաց.
Ի՞նչ էր աշխարհի մէջ նորա պաշտօն կենաց.
Երանելին զանձն իւր դրատանէր եղկելի,
Եղկելի 'ի հազար և բիւր դանձ լիուլի։
Յայնժամ ել 'ի խընդիր ընդ ոլորաբս երկրի
Փոքր ինչ երանութեան որով ոդին բերկրի.
Խընդրեաց և ոչ եդիտ, ոչ յարքունի դարպաս,
Ուր խեղդամամբ առնէ զեղուն դանձուցն բազաս,
Եւ ոչ տվալբլուկ խեղճ յաղքատին տրնակ,
Ոչ տուտ և ոչ այլուր ի ծոգած ամենչ 'ի ծոգ...
Ամենուրեք տաղտո՞ւկ, մարդն ամեն տեղ թ՚ըշուտ՞ռ։
Ապա յուսահատեալ, զէն ի ձեռին էառ....
Էառ և ըմբռնաւն ի զբապան դրնտակին
Մերձեցուց... վայրիկ մի եւ, և փըչէր զոդին...
Ուշ ի կուրծքս ինէր յանկարծ այս Կրքատս
Թէ լրատ էր ինել Տէրվիշ մի յՅեդիպտոս,
Յեդիպտոս ուր երբեմն էր դիտութեանց օրրան,
Ուր ցայսօր Արեւելք 'ի փառքս իւր պանծան.
Ո՞վ դիտէ ի՞նչ դանձեր դեռ ծածկէր այս երկիր,
Մի՛ դուցէ Տէրվիշն այն լուծանէր զիւր խընդիր...
Եթող զէնն ի ձեռայ, դործն էր խնտատութեան,
Անց յեդիպտոս առնել խընդիր երանութեան.
Եդիտ ըզՄէվլանայն ըզմեծանուն Տէրվիշ,
Ի կարդէ Պէքթաշի; ծամելով զիւր Հաշիշ.
Լեռնական ծերունոյն ժառանգ զեղօրէի,
Ժառանգորդ Էտրարին 'ի հազար բիւր հիւրի։

—Ով ծերունի, ասէ, խընդրեմ երանութիւն.
Ամէն կողմն աշխարհի խընդրեցի, էր թագուն,
ՅԵւրոպայ վինչ 'ի ծայր ծագաց ասիական.
Արդեօք հընար ի՞նչ է գըտանել այսրէն զայն։
—Այս միայն է խընդիր քոյին, եւ պատասխան
Ծերունին, որ հըմուտ հրաշից եգիպտական,
Գիտէր ըզհին և նոր զամէն արուեստ մոգուց,
Որով է պանծալի Եգիպտոս 'ի վաղուց։
—Քանի՞ ունկի խընդրես.—Քանի՞.—Այո՛, քանի,
Կէս վաղուց վաճառեմ իւրաքանչիւր ունկի.
Բայց լաւն է, և բաւեն օրն երկու հատիկներ,
Կ'ուզես ա՛ռ ու փորձէ, կ'ուզես, հոգ չէ, ո՞ւռներ։
Անգիտային առաւ խաշար հատ մի կըլլեց։
Իսկոյն մէջ երակաց նորա թըմբիր ասեց,
Եւ հոն հոսած արեան շըրջանքն դադրեցուց,
Եւ անոնց թունոն արգել, և զարկերքն կեցուց,
Եւ հազիւ թէ ձեռքէն ընկնին ունոն թոլած,
Ի քուն անուշ մընաս, գեանի վերայ պրկուած,
Եւ նընջէր և խորդայր, և սեռանէր երազ,
Տեսիլ անճառելի, գերահրաշ և անհաս
Երկրաւոր մարմնեղէն և հոգեղէն մըտաց...
Սաւառնայեալ թեւօք թըռչէր արագընթաց
Ընդ մէջ քաւեանից, հըրեշտակ հըրեղէն
Եւ յանմիւթ արարած վոխուած յանկարծօրէն,
Իշխան միահեծան ծովու և ցամաքի,
Որք վոխէին զերեսս ըստ նորուն ակնարկի,
Ցամաք մըրընչելով յաչեաց ապայատակ,

Եւ ծով դողդողելով դոփմամբ սալաբմբակ։
Ոչ գիշեր, ոչ լոյս էր, ոչ միջոց և ոչ ժամ,
Եւ նոյնքան հաշուէր անդ մանրերկրորդ մի և ամ։
Զէր ինչ անհընարին, և ոչ մի ինչ բաղձանք
Որոյ ըրումն չէր 'ի քրթթել անդ ակն։
Քանի ժամ, չգիտեմ, և կամ քանի տարի
Ապրեցաւ այսորին կենաք Անգլիայի,
Հեռի 'ի Լոնտոնի տաղտուկ ձանձրութենէ,
Միգամած դողդշոյ, շոգւոյն թանձրութենէ,
Անասելոր երկնահրաշ հաճոյից մէջ թաղուած,
Եւ անճառ գոհութեան, խելքէ մլաքէ չ'անցած,
Յարաժամ անյաղդուրդ, լուսի յաղեցեալ...
Երբ զարթեաւ 'ի քընոյ, երեկոյ էր հասեալ...
Անգլիացին դեղէն հազար ակոց դընեց.
Կըլեց ու քընացաւ, զարթեաւ, նորէն քընեց,
Եւ այս հաստիկներուն մէջ, զանգեալ խաշխաշով,
Եդիտ զերանութիւն հանապազօր քընով։
Կատարեալ թիրեաֆի, թըմբուած մէջ ապշութեան,
Մոռացաւ աշխարհի ձանձրոյթըն ամենայն։
Լիտըներով տարաւ այս դեղէն 'ի Լոնտոն,
Բաշխեց բարեկամաց և շատ տարածեց հոն.
Անյպէս որ բընաջինջ առնելու օր քան զօր
Ըսպառնան այս հաստիկք զախտն ցաքցին մեծազօր։—
Իսկ մեծատունն երկար և անխոյժ ապրեցաւ,
Մանաւանդ թէ բոլոր իւր կեանքըն քընացաւ.
Միայն տուեր էր նա ըսել թէ Արթնութիւն
Ծընած էր յաշխարհի ամէն դըժբաղդութիւն.
Թէ հեռի 'ի հոգոց, բարձին վրայ 'ի քուն
Խընդրելի էր միայն անքոյթ երանութիւն։

ԱՆԿ ԼՈՒՍՆՈՑ

Ազգ մի զարմանալի է աշխարհիս վերայ,
Որ զեռնոյ պէս զազիր յերեսս երկրի եռայ,
Որ գոռայ ամպոց պէս, ողայ նըման օձու,
Պատռելի ի մակդիր կոչի և տիրացու.
Յաթոռըս բարձերէց նըստի նա վարժապետ. —
Սա է գիտնականն դաս, յորմէ չէ ինչ տըդէտ.
—Այս ի՞նչ հակասութիւն, — լսեմ՝ եթէ դոչեն։
—Այո՛, հակասութիւն. ապէ, ի՞նչ զարմանք են.
Ո՞ր է այն յաշխարհի որ չէ հակասական,
Ո՞ր մարդ կամ կենդանի ընդ որ չը զարմանան,
Որ հակառակ տեսչանք և կըրքեր չ՝ունենայ,
Որ թըզուկ, 'ի բարձունս հասանել չը ցանկայ,
Որ թայ դեռանին վըրայ կըծկած հէր չը քաւոր,
Զըկարծէ օր մ՝ըլլալ աշխարհի թագաւոր։
Սապէս և որ կոչին աշխարհի մէջ գիտուն
Յաճախ է բըմբամիտ ինքնակոչ իմաստուն։
Յաճախ Արիստոտել և Սոկրատէս տըխմար,
Եւ քան զիմաստունն է իմաստնագոյն. Խիկար,

Որ ոչ բարձրէն թըռչի, վերանայ մէջ ամպոց,
Ի բան կարկընաչափ քուն ածէ զըւարթնոց,
Ի գըրոց 'ի գըրուած, յօրագրէ յօրագիր,
Իմաստ հալածական ածէ մեղ և թըմբիր։
Ազգըս այս օր աւուր ածի և զարդանայ,
Եւ զաշխարհի երես ծածկելու ըսպառնայ,
Իբրու տարափոխիկ ախտ մի վարակի հոծ.
Տակաւ իմաստութիւն լցուցէ ըզմտաց,
Եւ զարեւ յարեւելս խաւարեցուցէ,
Եւ տեսցեն յարեւմուտս թէ օրէ՞ն իցէ։

Ինչպէս կը տեսնէին օր մի որ ժողովեալ,
Ըզլուսին և զարեւ էին հարցափորձեալ,
Մինչդեռ յիմաստնոց ատուքն զերես իւր ծածկէր։
Յետոյ երկրորդունախս վերայ բերին աչքեր,
Ճառ մի տարերց վերայ խօսեցան և ա՛յլ ճառ
Բուսոց և կենդանեաց և 'ի մարդոց կաճառ.
Յետոյ 'ի պատմութիւն իմաստասիրաբար,
Յետոյ բազմապիսի խօսք և բիւր դաղափար,
Որոց իւրաքանչիւր մի մի հակառութիւն
Եւ ինքնահաճ մրտաց էին թիւր տրքնութիւն։
Ծեր ոմն 'ի նոցանէ որ մինայր անհամբեր
Ունկընդրաց լսելի լինելոյ, յոր ճրդնէր,
Ցոտքն կայ, ըզբարբառ թախանձելով ինքեան,
Որոյ 'ի տես ալեայ լրեց հանդիսական։
Կունտ էր նորա դէմքն և աչք խոր և տարտամ,
Եղեսական անդրոյն պէս 'ի ձեռն էր դրրամ։

—Սա է, ասէ, Աբգար և որդի Աբգարու,
Որդի միւս Աբգարու, կեցեալ յերկրորդ դարու,
Իշխան Եդեսիոյ, քաղաք Միջագետաց,
Դըրամ՝ ցայսօր անդիւռ և զոր իմ է դըրած,
Որոյ տարեդրութիւն լուծէ զանըյծ խընդիր
Եւ չըրէ ըզկարծիս փրկչին գալ ժամադիր։
Այլ և է սահմանեալ 'ի ձըգել ըյս պայծառ
Ի շատ բան պատմութեան, արկեալ ցարդ 'ի խաւար.
Զոր աւելորդ ճառելն է մի բան միոջէ,
Զոր 'ի դիր թանձրը, տեսրը, արձանագրեմ՝, գոչէ։
Եւ ըզժամըս բարձուն անձանձիր և անյագ
Հընդէս ծերունին խօսէր զայս օրինակ,
Առանց ուշ ունելոյ ամուշադիր մարդկան,
Որ նընջէր և խորտայր 'ի թըմբիր տաղտկութեան,
Մինչդեռ ճարտասանին 'ի ծարոյ մինչ 'ի ծաղ
Վանէր Միջագետաց ըզնա, պէս զըսարակ,
Եւ տակուին շատ ինչ 'ի խելամըտութիւն
Ունէր ասել, թէ ոչ ընդմիջէր ձայն նորուն . . .

Յանկարծ, ո՞վ հըրաշքին անճառելի 'ի բան . . .
Զայն բարբառոյ հընչեաց 'ի խորոց բարձրաձայն,
Շարժեցաւ 'ի տեղոյն ուր էր եղեալ դըրամ՝,
Եւ լուեաց ահաբեկ իմաստնոցըն երամ՝.
—Յիմարք և կոյրք, ասէ, որ 'ի ծով անսահման
Իբրու քաջ նաւուղիկ կարծէք նաւել ուսման,
Եւ գիտէք ոչ շարի արկանել զայրն առ քէ,
Իբրու մանուկ մի խակ որ հազիւ թէ հեգէ.

Ի խորոց անդընդոց և յարգանդէ երկրի
Վերանայ.ք 'ի բարձունս աստիճանաց երկնի .
Ոմն 'ի ձէնջ ըզգունտէն յոր դընիք խօսեցաւ ,
Այլ ոմն ըզմեռաղաց զոր ծածկէ նորին խաւ ,
Այլ ոմն ըզկենդանեաց և ըզբուսոց երկրի ,
Եւ ոմն ըզմարդկանէ որ այդրէն ըբնակի ,
Յետոյ ոմն ըզմարդոց որք անցին վէպս ասոյ ,
Եւ 'ի վրկայութիւն եդ զիս ոմն ըստ դիպաց ։
Իակ ապդ ես, որ վրկայս եմ այդ ամենեցուն ,
Աստ եթէ ասդէաք է.ք դըլխովին դոյուն .
Ոչ զերկին և զերկիր և ոչ զոր անդ գիտէ.ք ,
Եւ թիւր է ամենայն որ զանցելոյն դատէ.ք .
Ո՞ 'ի ձէնջ թափանցել կարէ զայն խոր խաւար ,
Երբ չըգիտէ ճըճին զոր կոխէ դարշապար ։

Եկի ես 'ի ծոյոյ հոգւոյն, 'ի բոլս հանքի ,
Յառաջ քան ըզկինելն դըրամ, եմ ոսկի .
Ոսկին չ'է ինքնուրոյն, ինչպէս կարծէ.ք, զանդուած,
Այլ է բազադրութիւն զանազան մետաղաց ,
Յորոյ 'ի ծոյ երկրի դարուց 'ի դար ղըտեալ,
Գոյանայ նախագոյն քան ըզդըտեղդ 'ի հալ ։
Դըրամ, չեմ ես Աբգար կեցեալ յերկրորդ դարուն,
Այլ տարեգիր միայն դըրոշմեալ 'ի նորուն .
Եւ ոչ Աբգարն անուն է որդի 'ի Հօրէ ,
Այլ թարգմանի իշխան , արքայ կամ մարգարէ ։
Առաջին եմ Աբգար տիրեալ Միջագետաց ,
Յառաջագոյն ամօք քան ձեր թըւականաց ,

Զորոց շատ նախագոյն էր ըստեղծեալ աշխարհ,
Որոյ մնատացածին ճըշդէ.ք թ ըստահամար։
Ալիք պատկառելի տիոցըս են վըկայ,
Թէ շատ ինչ եմ տեսեր որ գըրոց մէջ չըկայ.
Տեսի ըզնահապետն ես Հանուրց մարդկութեան,
Տեսի զաշխարհակալս, զորդիս իմաստութեան,
Տեսի ըզՍոկրատէս, ըզմեծն Աղեքսանդրոս,
Ըզ Մովսէս մարգարէ, ըզ.քերթողն Հոմերոս,
Ըզ Փարաւոնս, որք են արքայ.ք Եգիպտացի,
Եւ ըզմիւսն Մովսէս կոչեալ Խորենացի.
Տեսի ես ըզպաշտօն ըզդից Օլմըզդական,
Տեսի ըզխանձարուրըս քրիստոնական.
Հոմեր զոր տեսի ես, չ'է զոր կոչէ.ք Հոմեր.
Այլ ճըշդըստիւ յեղումն է 'ի բառէն Փիլեր։
Սոկրատէս իմաստուն չ'էր այլ փառատէր,
Որ ըզհանճար այլոյ ինքն ինքեան ըստանձնէր.
Աղէ.քսանդրոսք բազում կային, զորոց նախնի
Միայնոյ ընծայէ.ք, Մակեդոնացւոյն ժիր։
Են են շատ մինչ.քորք և տըխմարք, տգիտատես
Առ 'ի ձէնջ առձայնեալ և զոր ոչ որք ետես։
Են այլք, որոց ոչ զոն հետք մի և յիշատակ,
Զորոց աճիւն հողմոց հետ ցընդեց ժամանակ։
Շատ արկածից հաղորդ եղէ և շատ գործոց,
Պէտպէս տակարկուլթեանց մէջ մըտի ես մարդոց.
Եղէ ես շատ դիպաց և խորհըրդոց ոգի.
Զեռն ի ձեռն անհամար անցեալ իբրու գործի։
Ի գանձ արքունական պահեց զիս թագաւոր,

Կաշառակուրծ ձեռայ մէջ էաւ դաւաւոր։
Յաճախ եմ զարդարած կանայի պարանոյ,
Եւ դիտեմ ի մօտոյ զուշ նային խորհրդոյ։
Ամեն աչք և ականջք անդուլ զիս յանկացան,
Շատ արկածից պատճառք եղէ ես խակական,
Շատ մարդասէր միտայ ընթացեալ նրպատակ,
Շատ փառաւոր բանից մէջ թագուն խրատիկ։
Թուխտեալ, յոր նրման Հրէին անդադար,
Էջք են յիս պատմութեան անքուր դարուց 'ի դար։
Յետին զիս ասացող էր գիտուն Գերմանիկ,
Հնադէտ, և յերկինս ուղղող յօդապարիկ,
Որ ոսկի շղթայիս պարանոցէն կախեալ
Յերկրէ մինչև յերկին ամէն զիս վերացեալ.
Ցոյց ինձ բազմերգեալս բնդ ոտիք ի խոնարհ,
Զերմ Փորձիչն ի բարձանց աշտարակին զաշխարհ։
Օր մի գոնան ոգեկոյ հիմնովն անօրացեալ,
Թլուսկիկ ասր ըզմեզ, զերմ արքաք արքացեալ,
Տարաւ և մերձեցոյց ի ծագքս երկնային,
Որ ոչ օք մինչ ցայն վայր ելնել յանդգնէին...
Եթերական վայրին ամէք ուղչայ խրզէր,
Վայրիկ մի յեռոյ գոնան օդապարիկ ճայթէր,
Եւ գետնաքարշ ձրգմամբ 'ի ծոլ և 'ի ծանծաղ
Թաւալտալեր, փրշրէր իբր ըմնարբ շամանդաղ։

Բայց, ո՞վ ըստանչելիք, երեւեցաւ ոյս մեծ,
Եւ ճառագայթն ըզմեզ իբր 'ի պարան քարշեց,
Քարշեց և 'ի պայծառ տարաւ վայր հաստատուն,

Երկիր անճառելի, լուսոյ աստեղատուն։
Այո՛, տեսլիք, ըզլուսին տեսի որպէս ըզձեզ
Տեսանեմ՝, ըզլուսին և որ շուրջ են զաստեղս,
Ըզլուսին ոչ ըզձեր տեսեալ 'ի դիտակի,
Լերամբ և կենդանեօք, ձկամբ 'ի դետակի,
Մարդկամբ, յոր և նշանն մարդկան որ յաշխարհի.
Ոչ, այլ լուսին դէրսախտ մարդկան ոդեղինի,
Որ ոչ ձեւ մարդկեղէն ունի և ոչ տեսիլ,
Ոչ կարճամիտ միտքք է նորա նշմանիլ.
Ոչ հիւծական տխտոյ մէջ տոպրի մնչեալ,
Ոչ պէտս հարկեցուցիչ տայէ ծոլածաւալ.
Եւ ոչ է նա դերի կրկին անյոգեալի.
Վրկայ ես խակ բանիցդ եմ՝ անժլատելի։
Զիմաստնոյն, ոդեսպառ 'ի վերատոհմանէն,
Մերկացուցին դիակն անկենդան հանդերձէն.
Տեսեալ զոսկի շղթայն յորմէ կախէի ես,
Հանին և հայեցան ժլատելով յիմ երես...
Յետոյ քամահելով արկին զիս ընդ այեր...
Զըդիտեմ՝ ցորչափ ամն եղի 'ի վայր և վեր,
Մինչեւ հասի յերկիր ուստի էի թռուցեալ,
Ուր ձեռն հողագործի ընկալաւ զիս դարձեալ,
Յորմէ շատխօսութիւնդ աժ առջեւ ժողովոյ,
Խորհրդոյ անմատոյց ունկընդիր լինելոյ,
Յորմէ յետոյ դեռ ո՞ւր մընայ ինձ հասանել,
Եւ տակաւին ի՞նչ կայ, չըգիտեմ՝, տեսանել...

ԽՈՐՔ ԽՈՐՈՑ

Եւ եղեւ երեկոյ և եղեւ վաղորդայն.
Եւ հանդեաւ վաստակեալ ծով 'ի խաղաղութեան,
Անվրդով և պայծառ իբրեւ 'ի հայելւոջ,
Եւ սաստ մրրրկածուփ հողմոյն ահեղագոչ
Մընջեց իբրեւ ըզգաւն անմեղ և կամ ըզհաւ
Ի թքեալոյ թքուցեալ ըզհետ ձագուցն, և նաւ...

Ոչ նաւ, ոչ նաւուղիղ և ոչ խակ նաւատի,
Ոչ կայմքն և ոչ զեռակ, ոչ ձորձ առագաստի,
Ոչ սամի, ոչ պարան, ոչ խարիսխ, ոչ մակոյկ,
Ոչ խելք և ոչ զոգ, ոչ հեռք մի կամ բեկորք,
Եւ կամ նըշխարք զերծեալք նաւակոծութենէն,
Եւ ոչ մի ինչ մընայր յոլջոյն ողնափայտէն։

Հապա եթէ ոչ ինչ կայ 'ի լաստէ անտի,
Առ ի՞նչ, ասասցեն մեզ, այդ խօսք վարկպարագի,
Եւ այդ յառաջաբան անջըրդի և ցամաք
Ո՞ւր տանի եթէ ոչ 'ի վերջաբան փանաք.

Եւ ի՞նչ մընայ առնել մեզէն այսուհետեւ,
թէ ոչ փակել ըզդիրս և նընջել ըստորեւ։

Ի՞նչ անուն այս նաւին և նաւակոծելոց.
Գուցէ ըստ սոյանէ ըսկըսանել էր դործ,
Եւ աւարտել անդրէն ուստի ըսկիզբն առի,
Ուր ծով ալէկոծեալ հեղձու ըզնաւատի,
Եւ ըզնաւ և նաւորդ, և մընայ իբր այրի,
Ծով անհուն և ծանծաղ, ուր չէ շունչ կենդանի,

Բայց 'ի ձըկանց 'ի լոյ ընթացեալ ընդ ալեօք,
Ընդ որըս կամ զորոց ճառել չէ ինչ մեզ հոգ,
Քանզի անձնիւր դըրոյ է որիշ նըպատակ.
Եւ թէ իւրաքանչիւր իմաստնոյն օրինակ
Խորհէր կամ թէ խօսէր և կամ եթէ դըրէր,
Այնուհետեւ անպէտ ամենայն դըրեան էր։

Գուցէ չիք ինչ անպէտ քան ըզդիրըս համբուն.
Գէթ այս առհասարակ կարծիք է շատերուն,
Որք կ'ըսեն թէ չ'առներ հայավաճառը զան.
Եւ որք մատենագրի շաղակրատ անուն տան,
Թէ՛ նա յամարս ելնէ գերբընականօրէն,
Թէ՛ յաճի ընդ երկիր լոկ իբրեւ մարմնեղէն,

Թէ՛ ուզենայ դըրոց բարբառով, զերթ ագռաւ,
Փետրովք սիրամարգին սիգալ դըրախտահաւ,
Կամ թէ ելնել յըստորըս աշխարհաբարին,

Տանջել ըզլսելիս ոճով մրտացածին,
Օտարոտի լեզուաւ և անշընորհ շէնքով,
Գլուխիկ, ռամկական և թիւր շարագրածով.

Կամ խնամակօրէն դիզել միզմիով
Անլուր հակասութիւն վերայ հակասութեան,
Զլկանց թռիչ առնուլ, թքուչնց ելալ 'ի ծով,
Կամ թէ, ըստ Պատուոյ ճարտար ակնարկութեան,
Ըզձիոյ պարանոց ձուլել 'ի մարդկեղէն
Պատկեր, և յաւելուլ 'ի նա ձեռ օձեղէն։

Գուցէ ասեն մեզի թէ ա՞ւ է ճիշդ պատկեր
Մեր ոճոյ գլուխեան, և թէ ի գլծել մեր։
Զայլոյ դրկարագիր, ինքնոյին դրշաւակ
Առնելոք ճշգրտաբար զանձն մեր փոխանակ։ —
Ոչինչ իրաւացի. քան զայս ճշմարտութիւն.
Միայն քանի մի խօսք են 'ի գիտղութիւն.

Յիրաւի ոչինչ մեզ է յոյժ անտանելի
Քան թէ ճլկիլ կամաւ յօրէնս անխզելի,
Ի չափ և 'ի սահման զրոյք չէ անցանել,
Որոց է մեզ յաճախ ապրատամբ գլատանել.
Լաւ. հանարեալ շրջիլ ոտիք ըստորերկեայ
Քան թէ չինծու թեւովք թքուչել երկնից վերայ։

Դարձեալ, նրման մեղուին, խոյզ և խընդիր եղեալ,
Վարդին հետ կը ծրծեմք ամէն ծաղկի հիւթն այլ.

Ի գլխոյ բարբառոյ առնումք ըզպարգեւս իւր,
Եւ 'ի ռամկականէն չքիսզճեւմք զոր անձնիւր
Ընծայէ, և զամէնն 'ի մի ձուլեալ խլմոր,
Զանաւք պատշաճելոյ պիտոյից նպատակ։

Գուցէ պարտուեն մեզ շատ ինչ պակասութիւն,
Մանաւանդ թէ այրէն իսկ ըղձասխուութիւն...
Վասնորոյ ուանիկ կարճառօտեմ ըզբան.
Մինչեւ հեծեալ 'ի նաւ էր ոմն ասկական,
Գիրկս ածեալ ըզնոխաւ կին նորա լալագին,
Երդուաւ մինչեւ ցքմնհ մընալ հաւատարիմ։

Մինչեւ 'ի մահ, բա՞ բէ. ո՞չ ապարքէն է շատ.
Մինչեւ 'ի մահ որո՞ւ և կամ՞ ինչի համար.
Ի՞նչ կայ մինչև ցքմնհ հաստատուն յայս աշխարհ.
Եւ կին որ խոստանայ կամ՞ երդնու անուրաստ
Կալ մընալ հաստատուն 'ի խոստմանքն իւրում՞,
Երանի՞ թէ նա ապրի հազարին մէկ լըրումն...

Նա՛ երանի՞ կընոջ որ չըլաւէ իմիք.
Բի՞ւր երանի առն այն որ եղիս զայս վիճնիկ,
Որ գիտայ 'ի բոլոյ հանել ըզզուտ ոսկին,
Որ 'ի սլատուիմնէ քարեց ճըշմարտութիւն.
Եւ այս սեռին դեղոյ և շընորհայ վերայ
Յաւել առ 'ի պլատակ ձիրք մի այլ գերակայ։

Պիտի ասեն մեզի եթէ զբրպապտութիւն
է մեր բրածն ու փուճ դատարկապորտութիւն.
Գուցէ և փոխադարձ և ոչ յանիրաւի,
Պիտի ասեն կանայք զոր ինչ և աւելի
Նոցա համար ասինք, և թէ բաց յայնցանէ,
Շատ աւելի ախտեր էրիկ մարդ կը տածէ։

Եւ իրաւունք ունին. ո՞չ ապաքէն կինն է
Որ ինչ մարդքն չինէ ըզնա և յարդարէ,
Ի՞նչ կըրնանք պարտաւել 'ի նա զոր չ'ունենանք,
Եւ այս սեռ, որ ճըշդիւ է զբրկեալ հըրեշտակ,
Յաճախ քան զէրիկ մարդն է յոյժ առաքինի.
Գէթ ոչ զատածէ նա, թէ և շատ իսկ խօսի։

Ինչպէս կը խօսիմք մեք և կամ թէ կուզեմք,
Մանաւանդ թէ կարծեմ թէ զարթուն երազեմք,
Որ նաւակոծութենէ մեր խօսքն ըսկըսեալ,
Յետ ընդ ծով և ցամաք զընթերցողս ածեալ,
Ի վարդապետութիւն արդ խարիսխ արկանեմք,
Նըպատակ յոր մեք ոչ, յիրաւի, թեկն ածեմք,

Տեսակ մի դըրութիւն, ընդ որ հաճիմք իսկ ոչ,
Թէպէտ մեր դըրածն այլ ոչ քիթ ունի ոչ պոչ.
Յորում ամենայն ինչ խառն 'ի խուռըն խըրկի,
Ուր ոչ ըսկիզբն է ոչ վախճան կատարածի,
Ուր այր և կին մէկտեղ անխըտիր և անճահ...
Կարծեմ դարձեալ գրչիս տակն է խօսք մի անշահ։

Ո՛վ ճակատագրին հրաշից անճառելի,
Ի պահուն յորում նաև խորատուզէր, կէտ մի
Կուլ եւ զամուսինն այն որոյ երդուած էր կին,
Եւ, ըստ սովորութեան այս ուշիմ վիշապին,
Տարեալ փլսեաց ընդ յերկրին Մատակապար,
Զերթ ըզՅովնան ամբողջ և կամ սուտ խելագար։

Ափունք Ափրիկէոյ միրաւանք 'ի վաղուց
Հինից յելուզակաց եղեն և են ցայսօր,
Վաճառաշահք 'ի տուր և առաս դերելոց,
Զորս դընեն այդրէն և վաճառեն այլուր.
Յընչաց քերեալ ըզլուրջ ֆըրանկ նաւատրմաւ,
Որ յակճիռըս կայ անդ առ որսալ ըզհարաւ։

Սարիմ՝, զի այս անուն էր ձրկան փլսխածին
Եւ կանխաւ իւր կընոջ հետ դըրկախառնածին,
Տարեալ յերկրէ յերկիր 'ի գերեվաճառաց,
Իւր միակ ապաւէն յիշատակն անմոռաց
Էր կուսակցին, որպէս զի թէ օր մի փըրկէր,
Յայնժամ՝ 'ի գիրկ նորա վրատհութեամբ դիմէր։

Այս պանդխտութեան մէջ նորա մորթն երեսաց
Խանծեալ էր և խամրեալ ընդ գօտուն այրեցած,
Զի ընդ մակերեւոյթ ծովուն ծայրէ 'ի ծայր
Նաւարկեց նա անդուլ և անխոնջ նաւավար,
Հուսկ ուրեմն յափունս Եգիպտոսի տարեալ,
Վաճառեցին ընդ առ կին մի մեծափառ։

Էր պալատ այս բամբշին և հոյակապ ոսման
Առ եզերք Նեղոսի, զոր պատէր բուրաստան
Բիւր քաղցրաբոյր ծաղկանց, և ծառոց հովանի
Ոստապեղ զովասիւռ, հեշտին ամարանի,
Դըրախտ ըստանչելի, ուր անդիւռն 'ի կանանց
Բազմէր բարձր 'ի դըլուխ թագուհի դեղապանծ։

Ի՞նչ ազգէ էր դըշխոյն, ըստուգիւ չ'ենք գիտեր,
Զորոյ պատմութիւնը լռութեամբ է անցեր.
Հա՞յ էր, Յո՞յն թէ Արաբ, կամ թէ Եւրոպայի,
Կամ Անատոլուոյ ընկիկ քաղաքացի.
Կամ ա՞ղ կըլիմայի արիւն ընդ հըրաշէկ
Խառն յերակունս հոսէր նորա կապուտանեկ։

Էր անուն դըշխոյին դեղապանծի Գոհար,
Որ փայլէր առաւել քան ըզփայլուն զոհար.
Գոհար և աղամանդ և ակն պատուական,
Գինդ և մանեակ և օղ 'ւ ոսկի ապարանչան,
Շողշողեալ 'ի բազուկս նորա և մարմին,
Էին շատ ըստորեւ քան ըզփայլած արին։

Արին ոչ 'ի մարմնոյ հատեալ, այլ կըճակեր,
Ի փըրփրոյ և յատուկ զանգեալ, մէջ.ք փեսրակերպ,
Եւ հատակ դեղաշէջ քան զուռենոյ, սիրուն,
Եւ յոնք աղեղնակերպ և աչքունք ըզմայլուն,
Հերք դըշխոյն ոսկեմետ վերս վերս ոսկեճամուկ,
Եւ բերան մատնոցեալ և փոքրիկատուն մատունք։

Նաժիշտք և ազախնայք էին նորա հազար,
Եւ հազար բիւր գերի, պատանի անհամար,
Ոչ թէ Եվոկպացի կամ սեւամորթ Խափշիկ,
Այլ ըպիտակադէմ և տեսլեամբ գեղեցիկ.
Սեւ աչուի սեւայօն, խարտեաշ կամ սեւահեր,
Եւ շատ հատակագեղ մանուկ մատրուակներ։

Զորըս գընէր յաճախ թագուհին թանկագնոյ,
Եւ ապա արձակէր այս վեհանձն դըշխոյ,
Որ յադեռայր տակաւ, թէպէտ միշտ անյագուրդ,
Որոյ միտհեծան ոչ այլ էր թագաւոր
Բայց ցանկութիւնք սըրտին, որք յորդէին զեղուն
Եւ որոյ ոչ ուրեք էր երբէք յադեցումն։

Քանզի սիրէր նա ճիշդ որպէս Մեսալինէ,
Կամ Կլէոպատրա և կամ Կատարինէ,
Երեքեան թագուհիք ճակատան սըրտանաց,
Ցորոց ոչ տարբերէր ինչ քոյ հըրոյն անանց,
Որ վառէր 'ի սըրտին անբսպառ անարգել,
Եւ զոր չըկարէր ինչ մեղմել և կամ մարել։

Ի՞նչ էր նիւթն այս բոցոյ կամ ի՞նչ խընդրէր անյագ.
Ըզդե՞զ Աղանիսեայ թէ զՈրփէի դաշնակ.
Զիմա՞ստս Ամենասոյ թէ զձիրս Անահտական,
Պայրընի կամ Կէթի հանճա՞ն անհատական,
Ըզգըրկա՞նքս պատշաւ Ջերաջերմ Եռանդեան,
Թէ համբուրկոյ սիրոյ յորդումքն անվախճան։

Ամենայն մարդիկ նոյն քիմն ունին և նոյն մարմ,
Նոյն մարմին և անդամք, նոյն մազ նաև նոյն բուրդ.
Ո՞չ ապաքէն մէկ պորտ պաշտէ ամեն մարմին,
Եւ այր իւրաքանչիւր նման է ընկերին.
Իսկ արդ ի՞նչ են պատճառք և ի՞նչ է յատկութիւն
Որ գերադաս առնէ ըզմին քան ըզմիւսոյն։

Ախտա՜ս հակառութեան մարդկայինս սրտի.
Ոչ գեղ երեսաց են ամենչանք սիրահարի,
Ոչ ժրաժիր մարմնոյ վայելս անհատնում,
Ոչ հոգւոյն անձկայրեաց գրգռանս անպատում,
Ոչ վարդն և ոչ վարդին ըզմայլուն հոտ անուշ.
Այլ զոր սիրեմք 'ի վարդն է յաճախ նորին փուշ։

Զի ախտ մի ահարկու խայթիչ և անդարման
Անդադար կրծեալ կեղէ ըզսիրտ մարդկան.
Զանձրոյթ, դիշերատէմ մազձ մրթին միդամած,
Որ պատեալ պաշարէ ըզհոգի մահացուաց,
Որոյ բրնաբարեալ և նեղեալ 'ի սրտէ,
Փոխէ յօժարութիւնքն և անդամ վտխտէ։

Ինչո՞ւ այսօր է վատ որ երէկն էր բարի,
Ինչո՞ւ ատեմք այդուն զոր սիրեմք դիշերի,
Ի՞նչ են այս եռանդուն ամենչանք և անձկութիւն,
Եւ վերադարձ փութով և վաղ արժգոհութիւն.
Ի նոյնն պահու սէր և անհաշտ դրժտութիւն,
Եւ բիւր հակասական անյադ յօժարութիւն։

Զանձրոյթ, և անձանձիր բաղձանք փոփոխութեան,
Զանձրոյթ, որ առելի կ՝ընծայէ զամենայն .
Զանձրոյթը, ցեց ուտիճ և վիշապ վիթխարի
Քան ըզՊլրոմեթեայ անդեղ լերդակերի...
Զանձիր... Բայց ո՞ւր թողաք ըզԳոհար տաղտկադին
Եւ ըզՍարիմ, որ զիւր իսկ ծանեաւ 'ի նա կին...

Խընդիր մի Դըշխային էր ,յոյժ զարմանալի ,
Առեղծուած անեղծ և անլուծանելի,
Որ տաղնապէր ըզնա տուէ և գիշերի,
Զոր նա առաջարկէր առ ամենայն գերի .
Եւ երբ սա վարանեալ չքարար պատասխանի
Հարցուածոյն, արձակէր յայնժամ՝ ըզպատանի ։

Ոչ ոք էր բաւական լուծումն տալ խընդրոյն ,
Զորոյ և ըզՍարիմ հարցափորձեց դըշխոյն .
Քանզի խորհուրդ մըթին ծածկէր ընդ այս բանիւ
Թէ «Քանիո՞ն ծովու խորութիւն է լըրիւ» ։
Իսկ ո՞ կարէ չափել զոր Ձեռն անմահական
Կանգնով կամ թըզաւ ոչ հասուեց անհատական ։

Ասէ ցնա Սարիմ. — Խորք ծովու ունին կէտ
Մինչ 'ի կայս վիշապին, ուր դընի ձուկըն կէտ ,
Որոյ յոլովայնի ելի ես անդանօր ,
Ուստի վրախեց դարձեալ զիս յափըն երկրաւոր .
Խորոց Ովկիանու սահմանք անհուն են ոչ .
Բայց քանիո՞ն սըրտի խորութիւն է կընոջ ։

Գոհար ծանեաւ 'ի բանս այսոսիկ ըզՍարիմ,
Զամուսին զոր սիրէր անդէր .քան ըզՀիրիմ,
ԸզՍարիմ, ոյր դէրկեաց և եմեաց արտասուք
Զայրոյս և ըզձեռինքս բիւր հեծեծանօք .
Իսկ սա հրաժարեալ 'ի .յողջագուրանաց,
Մեկնեցաւ 'ի դէրկաց .նորին և հեռի կաց ։

Ո՞վ իմ սրբոյս հաստոր, աղաղակեց Գոհար,
Ո՞ կարէ պատմել .քեզ ըզսուգ և ըզխաւար
Խորոց սրբոյս .յօրէ .յորմէ կամ .յուսահատ,
Ըզ.քեզ լալով, ըզ.քեզ, զոր 'ի ձոր և 'ի դաշտ,
Ի ծով և 'ի ցամաք, և 'ի դիրկս անձնիւր
Աղատի կամ դերուոյ խընդրեցի ես 'ի զուր . . .

Սարիմ սատանեցաւ, և դընաց մեկնեցաւ,
Հեծեալ 'ի նաւակ մի, և ա՛յլ մէկ չդարձաւ .
Եւ ա՛յլ ըզխորութիւն չ'եհարց կընոջ սրտի .
Խորխորատ անատակ. վիհ անմատոյց և լի
Ի բիւր հակառութեանց հոլմահար հեղանիւթ,
Զոր ծածկէ .յեղ.յեղուկ շարժուն մակերեւոյթ։

Իսկ Գոհար ի՞նչ եղեւ և ո՞ւր մընաց արդեօք,
Ըզծովու խորութի՞ւն չափելու տարաւ հոգ
Շարունակ, թէ այս փորձն ըզնա տարաւ անդարձ
Ի խորքս, ուստի չիք ինչ հընար փրկանաց .
Պատմութիւնքն ցայս վայր հասանէ և լռէ,
Եւ պատմութիւնքն կարճ կապել խիստ լաւ առնէ։

Նախ, զի չէ պատմութիւն որ անմեղի ճառէ,
Երկրորդ, եթէ զամէնն ուզենամք երկրորդել,
Կարծեմ՝ եթէ ծուխս խորութիւն չըքաւէ
Ըզգործս և զարարս կանայիս տանել.
Եւ երրորդ, յայտնանէ թէ ի՛նչ բարոյութիւն,
Թողումք ընթերցողաց 'ի խելամտութիւն։

ԾԱՂԿՈՑՔ ԿԵՆԱՑ

ԱՅԼԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Դեռահաս մանուկ տըղայ
Յայգի պըտղալից մըտաւ.
Երկիրն ամեն շըրջակայ
Լի բարեաց բիւրովք տեսաւ.
Տեսաւ ծառերն 'ի միրգ լից,
Որթերն յողկոյզ հոլամած,
Պարտէզն 'ի հոտ անուշից,
Եւ բուրաստանք վարդենեաց։
Եւ ա՛յլ մէկ բան չըտեսաւ։
Միտքն ըզմայլած 'ի գեղէն,
Քիմքն հիացեալ 'ի հոտէն,
Ի հովանի անդ նըստաւ։
Յանկարծ լսեց երգ անուշ
Ոստոց մէջէն մերձակայ,
Զայն բարբառոյ շատ քընքուշ

Սոխակին, վարդն այլ նըմառ
Վարդըն կ'ըսէր. — Ո՛վ հիւրիկ,
Ի՞նչ ես եկեր հոս ուզել,
Պըտո՞ւղ, բանջա՞ր թէ ծաղիկ,
Թէ հովանի ծառոյ ծեր։
Հոս դեղձին կը ծանրանայ
Ոստովք իւր շէկ բեռին տակ.
Հոս խընձորն, ոսկի գընատակ,
Ծանձին դէմ առ դէմ խայտայ։
Հոս այգին է լի որթովք,
Որթերն այլ յոյր ողկուզովք,
Ողկոյզքն այլ, ատգի նըման,
Փայլեն դեղնորակ գունովք։
Սոխակն աչքերըն խըփէ,
Լուռ մնալ մընայ այս խօսքին.
Եռեւ պատասխան նըմին.
—Զեմ ուզեր յոյս ամենէ։
—Հապա ի՞նչ, կըրկնեց վարդն ա՛յլ,
Բուրատանն է լի ծաղկամբք,
Յատիկ կանթեղակ փայլ փայլ
Ծաղէ ատպանք ըստեղամբք։
Մեխակն է ինձ նախանձորդ,
Եւ մանիշակն 'ի հօրուտ,
Շուշանըն շոգէ վառ վառ,
Ո՛ր մէկէն կ'ուզես, գու. ա՛ռ։

Սոխակն այլուի ողբաձայն.
—Չեմ ուզեր այս ամէն բան,
Խօսեց, ժըմտեց ու թըռաւ,
Վարդին վըրայ եկ ինջաւ։
Ախա՜ս, հոն թակարդ լարած,
Սոխակն ինկաւ 'ի դարան.
Ուր սիրան երած ու վառած,
Երդեց 'ի վարդն իւր յայնժամ.
—Ինձ դաւ ըրին այդեւանք,
Ինձ դաւ ըրաւ այդեարն...
Բայց վարդին համար պատրանք,
Իմ ուզածս այլ էր այս բան։

Նորահաս մանուկ ոբրայ
Տեսաւ զայս ու գըթացաւ,
Լըսեց խօսքն ու ժըպտեցաւ,
Յետոյ եկաւ որ երթայ...
Բայց, ո՛վ վարանք, դուռն էր դոց,
Եւ որմունք շատ բարձր էին,
Տեսաւ փեղկերն էին հոծ
Ու ցանկապատ ամէն դին։
Տեսաւ թէ ինքն արգիլած
Էր 'ի մէջ այդեւանին...

Ո՞վ հըրաշք անճառելի.
Երեւեալ կոյս նազելի
Ասաց թէ —Դու իմ գերի.

Սակայն ամեն այս ծաղկունք,
Այս պըտուղքն և այս այգի,
Այս ամէն քոյ են, մանուկ։
—Գէշ չէ այդ, ասաց տըղայն,
Սակայն ես չեմ այդեպան,
Ոչ շընորհայն արժանի,
Յոր իմաստունք յաղենան։
Ինձ, յեղյեղուկ պատանի
Եւ բաղձանքով բաղմատենչ,
Քան զարդեան դըրախտի
Լաւ է վազել դաշտայ մէջ։
Թափառական յամեն կողմն,
Ամեն ծաղկի հոտն առնել,
Ոչ կոխել, ոչ ժողվել մէկն,
Այլ միայն տեսնել անցնել։
—Հա՛ պա, ասաց կոյսն յայնժամ,
Այս վարդն այլուի քեզ կըտամ,
Պըտակ 'ի դըստիդ անթառամ,
Տե՛ս..., փախչելու ճար չըկան...

Նորահաս մանուկ տըղայն,
Թէպէտ անփորձ, խորամանկ
Քան ըզհարուստ այդեպան
Եւ ըզդուստրըն էր ոսկայն։
Մէկ մի յայգին հայեցաւ,
Մէկ մ'ի ծաղկունքն որ շուրջ կայր,
Մէկ մի 'ի ծառն հովանեաւ,

Մէկ մ՚այլ յաղթիկն որ խայտայր . . .
Ցեռոյ ասաց. — Այս դա՛ւ է,
Վրկայ ինձ վարդն ու սոխակ,
Դարան է, բայց թո՛ղ ելայ
Աղու աչայ այս պատրանք . . .

Աշխարհս է մեծ մի այգի,
Սոխակն յեղյեղուկ է մարդ,
Խայծը խաբուսիկ է վարդ,
Դարան է աչք գեղեցկի։

ՏՈՒՓ ՊԱՆԴՈՐԻ

Պանդորի առասպելք, ճարտարեալ 'ի նախնեաց,
Ոչ վայրապար են բան և անխորհուրդ առած.
Տուփ մի հրաշալի, յոր Պանդորն հանճարոտ
Նախաստեղծքն Եւա, զամեն չարիք փակեց,
Զոր բացեալ Եպիմէթ, յաշխարհս տարածեց։
Մինակ Յոյսն մընաց, խաբուսիկ տըրիտուր։

Խորհուրդ առեղծուածին չ'է դըժուարակընճիռ,
Եւ առանց դարձուածքի, յըստակ խօսելով բան,
Նըշանակէ թէ կինքն է ամեն իժիր
Ամեն չարեաց պատճառք, հեղինակ բընական.
Թող կանայք ինձ ներեն, ըսողն ես չեմ 'ի դիր.—
Հապա ի՞նչ Ծընընդոց գիրքն է, և ի՞նչ Ադամ։

Ո՞վ է սա որուն այսք վայլեն կարմիր 'և առոյգ,
Որուն դէմք ծիծաղկոտ և աչքերն են զըւարթ,
Յորոյ սիրտ բաբախեն մեծ ակընկալութիւնք,
Եւ վայելք անընպատ տիոց երիտասարդ.

Յանկարծ խորշակ 'ի դէմքն փըչէ դալկահար,
Երանգ-ք ցընդին. եղեղն է նա խորշակահար։

Քանզի կին մի'նդ առաջ ճանապարհի նորա
Անցաւ . . . կայծակնահար կըտրիճքն կը մընայ.
Վառեալ հուր անուխր 'ի մէջ երիկամանց,
Գելու զաղիս նորա, գըլուխն է խոնարհած.
Խընդութիւնքն կորաւ և յոյս թըռաւ ըրտէն,
Զոր ամբողջ գըրաւէ սէրն անդութ անօրէն։

Այդ սէրն ի՞նչ է, ումանք կ'ասեն իբր յանխորհուրդ,
Ի՞նչ նորելուկ հընարք, ի՞նչ եւրոպական սուտ,
Պատուաստ օտարոտի, որոյ հարք մեր փոխան,
Ունէին աղջիկաս, խընամուց ու վեսայն.
Ներեցէք, պարոններ, ներեցէք, խաթուններ,
Տեսնէք թէ աշխարհի չափ դէթ հընուց է սէր։

Չեմ օձն խաբեայ, իսկ ո՞ խաբեայ զՊադամ.
Ի՞նչ Արայն Գեղեցիկ և ի՞նչ է Շամիրամ,
Ի՞նչ է Տըրվադայ պատերազմ ահարկու,
Յորում ազգք և ազինք անցանեն իրարու,
Մէկ Հեղինեայ կուսին ազու աչաց համար,
Զոր առեւանգած էր Պարիսն սիրահար։

Ի՞նչ են վէպք Ալանաց նազելի աղջկան,
Եւ նորա վատուկ մէջք, և շիկափոկ պարան
Արտաշիսի հըզօր թագաւորի ձըգել,

Տալ նրանց շատ լայքա ու 'ի կընութիւն առնել,
Կընութիւն որ շատի նրատաւ Հայաստանեայց,
Առանց որոյ դուցէ Հրատ էր ,յաղթեալ ։

Ի՞նչ են Հազար ու մէկ գիշերք, Լէյլա Մէճնուն,
Որուն խելքը թրատց ժանա սիրահարութիւն ,
Որ լեռներ ու ձորեր ինկած, հեգ խելագար ,
Մաղերուն մէջ թրուչունք բոյն չինեցին հազար,
Եւ հոն հաւկիթ ածին, եւ 'ի թուխրա ձագեր ,
Առանց որ Լէյլայի թրմբիրին թօթափէր ։

Բոլոր հին պատմութիւն և գիրք սիրոյ վերայ
Գրրած են բընաբան , և շարը կ'երկրննայ
Թէ մի ըզմիոչէ զամէնքն ,յիշէք ·
Բաւ է թէ Աստուած սէր է , նոյնպէս արարածք ։
Բայց զի սէր է բարի և է որ շարաչար ,
Զանազան ախտին մօտիկ նրշանակել և ճար ։

Երբ նորա մէկն 'ի ձեռրա մնանի անողրք ,
Եւ խրատապինդ պրրկեն նորա անրոց ոլորք ,
Զիք հրնարք փրրկութեան, և ոչ ճար ու ճարակ ,
Բայց միայն փախրատեամբ 'ի ճիւաղէն վայրագ
Եւ 'ի հրրոյն անշէջ, զերթ Սոդոմն ու Գոմոր ,
Եւ զերթ Ղոմրն երբէք ,յետրս չը նայելով ։

Բայց ուր յիմարութիւն տիրէ, խրրատն ունայն
Եւ ընդունայն են բանք խոհուն իմաստութեան ·

Որոց անբուր մինաց երիտասարդն Արշակ,
Իւր հանանուան նրման արքային բատահակ,
Որ ըզհարբասութիւնն յանդեց Արշակունեաց.
Սակայն մերըս կըտրիճ իւր հօրն ու մօրն հեատեաց,

Հեատեաց և 'ի մահիճ արիւեցաւ ոգեսպառ.
Շատ բըժիշկներ եկան ու շատ դեղավաճառ,
Քանզի հարուստ էր հայրն, ոչք բան չը հասկըցան,
Ոչք ըզլեարդ և ըզմտք յեռ շատ խառնակութեան,
Շատ ոդիք և փոշիք տուին, շատ խաշընդեղ,
Նաեւ կըլեցուցին հատիկով մինկընդեղ։

Կարդն եկաւ տէրտէրոջ, յեռ արուեստին մարդկան
Ոչք դատապարտեցին ըզնա անդարձ մահուան.
Սա էր Տէր Աւետիս, այր ուշիմ և խոհուն,
Որ խակոյն հասկըցաւ նորա հիւանդութիւն,
Որ կարծես մոդական հրաշալեօք փըրկեց
Ըզխեղճ արքայն, որուն արքային մէջ յոյս վառեց։

Խօսեցաւ մօրը հետ և հօրը հետ ծածուկ.
Յետոյ և ծընողաց հետ աղջկան փափուկ,
Զոր ոչ վարկպարապի չէին ուղեր ծընօղք
Արշակայ առնուլ կին, քանզի քանի մի խօսք,
Քանի մի փըսիքսուկ ու շաղեկոց ցաւուն
Զայնիւ կը պատմէին կամայք վերայ նորուն։

Յետոյ տէր Հայր կանչեց ըզժամկոչն ու ըսաւ.
— Կուզե՞ս հազար բոլոր վասարկիլ դուռ։ — Իրա՞ւ.
Հապա. ծառայ եմ, Տէր։ — Ա՛ռ Մաշտոցն ու տվրէ՛։
Թորոս հարսանեայց կարգն օրուան մէջ կը սերտէ.
Եւ տէրտիրոջ հագուստն ու գրվխարկը հագած,
Եկաւ հարսնիք, Աւետը փոքրաւոր տարած։

Ինչ որ Թորոս կապեց, նոյնը Աւետ լուծեց.
Ու Հաղաւորիներին օրհնդէը ժըպտեց,
Ու երբ Արշակ ըսաւ, Տէր եմ, դուռտրը խնդաց,
Թողցէ առ զհայրին, Արշակայ պըսըսած,
Եւ ոչ Խաչ հաւիզպտեան ունկրն մնացոյց, և ոչ
Երթայք խաղաղութեան, այլ ըրաւ քիմ ու պոչ,

Ու վարած ամուսնոյն, քաշեց լիրբն յառաջաստ։
Ապշութեամբ մեկնեցան հարսնեւորքն ըզդաստ.
Այնպէս որ այս պըսակն, 'ի շնորհս Թորոսի,
Եւ շընորհիւ անխիպ և աներէս կուսի,
Եղաւ իրօք և ճիշդ ոչ թէ ամուսնութիւն,
Այլ լիկոր, վայլաշոտ և պիղծ պոռնկութիւն։

Այս կերպ ամուսնութիւն լաստավայոյ վրրկութեան
Է որոյ խելք սիրոյ 'ի ժայռքս վրշրեցան։
Ինչո՞ւ ամուսնութեան բառն է ախորժալուր
Ամուրեաց, իսկ այլոց պրժգալի, տաղտկալուր...
Վանդակ դրժոխքիքեր, կարծրակուռ, յոր կ'ուզեն
Յարտաքուստ մընանել և 'ի ներքուստ ելնեն։

Շուտ հասկցաւ Արշակ իւր ըրած սխալմունք.
Նորա Անուշ ամիս չտեւեց ութ աւուրք.
Նա՛ առակին կատուն պատուելու չեղաւ ժամ՝.
Զի կինըն, Մլխիթար Գօշի կատուին նըման,
Զոր Դիւս փոխած էր 'ի կին, և որ ըզհետ
Մկան, տեսածին պէս, վազեց, ու զան կուլ եա,

Ութ օրուան մէջ բոլոր իւր բարքն 'ի յայտ հանեց.
Բոլոր սըրտին թոյնը 'ի խեղճն Արշակ թափեց.
Պուսաց ու կանչուըտեց, դուռաց յերես նորա,
Մինչեւ ծեծ ու փեռ ալ, կ'ըսեն, տըւաւ նըմա,
Երկդիմի, խաբեբայ, ապցունք կեղծաւորուէր
Ու շատ նպէր թափեց կամապաշտ ու նանիր։

Հակառութիւն, ո՛վ ժանտ կանայի յատկութիւն...
Հակառութիւն անվերջ և միշտ և անընդհատ.
Կընոջ սեւը ճերմակ, ճերմակն է թըխադոյն.
Այնպէս որ Նիւարէատին, այր կին 'ի հեղեղատ
Վիժած էր, հոտանաց դէմ՝ խընդրել զայն կ'ելար.
Ըսելով թէ «'ի վազքս ջըրոյն կին չ'երթար։»

Խե՛ղճ Արշակ, ի՞նչ ընէ. «Բանդի այր արդար է»,
Իւր բաժակին մնըը պէտք է որ լի քամէ...
Առաղաստ սըրբատան և խուլ են սրտակապանք.
Ինչե՛ր ծածկեն դըրունք ընդ նըդաւ ամրափակ,
Ի՞նչ նոխաղերգութիւնք, կամ եղերերգութիւն,
Կամ ի՞նչ ծաղր ու ծանակ և կատակերգութիւն։

Ավա՜ղ, սասանկ եկաւ՝ սասանկ երթայ աշխարհք...
Իւր սրտին ցաւը գոց պահեց լուռիկ Արշակ։
Տարի մ՚ամբողջ անցաւ, որուն մէջ բռնադրօս
Երեք հարիւր վաթսուն և հինգ լսեց քարոզ,
Զորանք անգլիայի հեղինակ մի ճարտար
Ի դիր արձանացոյց, ու քշեց՝ իւր հազար։

Նաև Արշակ խրախեց զայրս նորա վարուց,
Մինչեւ անդամ անձամբ զանձին պուրնկացոյց
Ի նա... Այլ է այսչափ բաւական. մինչեւ որ
Յուսահատած արքայն և լրած օրէ օր,
Անիծեալ ըղձուծն և ըղբեռ ծանրաբերձ.
Զբրհորին փեղկն եբաց և զինքը մէջ ձգեց։

Երբ աչքերըն բացաւ, պառկած էր յանկողին,
Տէրախրոջ ձեռն՝ի ձեռին բռնած լալագին,
Զոր համբուրէր ըստէպ և արտասուօք թանայր,
Որոյ դարոլաիր իւր մանկդիրներ կուտայր,
Որ նորա կրկին հեղ ազատիչն էր եղած,
Գաղանիքը յայտնելով, ու հարցը վրանուած։

Աւելորդ է ասել թէ քոլոր կեանքն Արշակ
Ամուրի ապրեցաւ հանդիսաւ շատ ժամանակ,
Ալէզարդ ծերունւոյ Տէրախրոջ հետ մէկտեղ,
Որոյ ալքը պատուեց յարգանօք ծայրայեղ։
Ո՞վ բարի ժամանակ և բարի ծերունի,
Որոյ անհետացան հետք ի վերայ երկրի...

Միայն երբ նազաբան տեսնէր կին մի շընթօղ,
Եւ կամ թէ ցանկութիւն լինէր սիրան ըզդայօղ.
Յայնժամ զբլուխն առած երկու ձեռացը մէջ
Ըզքարի հարկանել կ՚ըսպառնայր անընդմէջ.
Եւ կամ թէ ժըպտելով սովոր էր ինքիր զէմ
Ըսել եթէ — Հիմա ժամկոչը կը կանչեմ։

Դարձեալ եթէ խորհուրդ մէկն հարցընէր նըմա,
Մի՞թէ ամուսնանայ կամ ամուրի մընայ,
Սայեէի Սասանի Յիշատակարանաց
Յընթերցումն յուզարկէր, և կամ թէ կըծկըտած,
Յաղջկան սըրսկապան օր մ՚այցելու լինիլ...
Եւ, երկանաւ լշոյ կախուած, 'ի ծով նետուիլ։

Զի կընոջ հասարակ զէնք խորագիտութիւն
Են, զըրահ ամրապահ, որուն տակն է թագուն,
Եւ զորըս մերկանայ 'ի մէջ սըրսկապանին,
Որոյ սրմունք պահեն զինք յաչոյ օտարին,
Ուստի, ըսպառազէն զինեալ զըրահաւոր,
Կ՚ելնէ նա վագր արտաքս և գոռայ ահաւոր...

Կաղ Սասանային հետ, ենթադրենք դիշեր մը
Տանց ձեղունք 'ւ առաստաղ բացուած նաև որմը,
Տե՛ս։ Ահա՛ այս աղջիկ զոր կարծէիր անմեղ,
Հըլու իբրեւ զոչխար, է առիւծ մի ահեղ,
Եւ այս կին որ էր հեղ, խոնարհ աղաւնոյ պէս,
Զայրն իւր 'ի խաչ հանէ, և թըքանէ յերես։

Մեղա՛յ. ոչ թէ 'ի խաչ, այլ իբր Արիստոտել,
Զոլքոտանուոյ նըման, «խըլթանի աքացել»
Զըտայ նըմին իսկ թոյլ. այլ, խաղք ու խայտառակ,
Ողնաբեկ, .քըրանաթոր, ոգեապատ զըւարակ,
Գըլել ըզտայն անդուլ, կենայ երազատես . . .
Կընոջ վատն է վատթար, ոչ միջակ և ոչ կէս։

Եկ, Պա՛յրըն, վէրքն ըսէ՛ արտիպ կոզկոզադնի.
Մի՞թէ աւելի ժանտ էր 'ի Մխոլունկի.
Դու ևս, ո՛վ դատնապէտ սիրտ յերաշխէպ, Միւռէ,
Մէկ այրատէմ զինեալ կընոջ մախանքն ըսէ՛,
Եւ ըզհեռն որ անզոյդ մախայտաւ հանճարոյդ,
Եւ ժորժ Սանտի ծըխոյ և զինուոյն մէջ հեզձոյց։

Այս տեղս դիտեմ թէ զիս պարտուեն տիկնայք։
Սակայն թէ մեղանչէ.ք, գո՛նէ մի՛ բարկանայք,
Եւ առանց դատելոյ, զիս մի՛ դատապարտէ.ք.
Զեր բարոյն ցանկայօղ եմ միշտ, հաւատացէ.ք.
Բայց ո՞ւր է տեսնըւած որ երբ զախտ կամ յանցանք
Գըտրվեն, համարուի այն 'ի բանդապուշանք։

Յիրաւի, կանայ.ք մեզ յանդիմանել կարեն
Թ'օրէնք և պատուիրանք որանց ձեռագործ են,
Որք իրենց ուզածին պէս ըծոյ սատակութեան
Եւ մատնած են ըզկին հարըստահարութեան . . .
Ի՞նչ յանցանք են կընոջ եթէ հեատէ նըմին,
Ո՞ր դերի որ դոմէ ըզլուծ ըբռնաւորին։

Մեր խօսք չեն ըզկանանց որք իրենց սրբբազան
Պաշտօնը կատարեն և պարտքը կը ճանչնան.
Որք մատաղ մանկըտեաւ շուրջ և գիրկը ածեալ,
Մընան պատկառելի զարդ մի շըքեղափայլ
Ի տես ամենեցուն, իբր այն «Դին ժըրագլուխ
Ի պըսակ անթառամ առըն իւր Ի գլուխ»։

ՅԻՐՏԻՎՍԻ

Ի՞նչ են այս ցընծութեան ձայնք հրեշտակային,
Փառաց և քրնարաց հընչիւն զլուարթադին,
Կանայք երգահեաց և նրատաց աւաչ,
Եւ ծափաձայն և կայթ և պարտուստայ շառաչ,
Գուսանի շըշնկոց և տակց բիւր դափիւնք,
Եւ տաբ պրբնդոցայ արձագանքի կոչիւնք։
Որո՞ւ են այս խընջոյք և կամ նաւակատիք.
Ի՞նչ ուռնախրմբութիւն է կամ թէ հարսանիք։
—Խընջոյք են բաղանեաց Իշխանին Շիրազի,
Երգասիրին լըսվիս Շահ-Մահմուտ Կաղնէվի,
Որ ոչ ինչ առաւել քան զերկրս ախորժէր,
Ու 'ի բաղանիս անդամ հրճուեալ ասկոր էր։

Էր կից այս բաղանեաց արբահ երկեցողաց,
Այնպէս վարպետութեամբ շինած և յարդարած,
Որ լուացարանին լուացողաց անաես,
Հընչէին 'նրատողք զիւրեանց երգս պէս պէս,
Եւ՝ արձագանք տարեալ բաշխէին զայնս 'ի սիւռ

Ընդ որում չըրջակայ դարպասին ոսկեհուռ ։
Նոյն օր նըւագածուք զորդւոյըն Պարխի ,
Յորմէ Պարսք , երդէին զարարըս պէսպիսի .
Ըզփառըս Բիշտասեանց նախնի նահապետաց ,
Որոց դործք ըսքօղին 'ի ծոց ժամանակաց ,
ԶԱ.քիմենեանց ծադումն առասպելապատում ,
Որոց մեծըն ճէմշիտ ըսքանչելապատում
Համարի նախահայր , ընդ նըմին և Զահակ ,
Զոր Ծերըն Խորենոյ թարգմանէ Աժդահակ
Բիւրասպի , և զոր Պարսք կ'անուանեն Ֆէրիտուն ,
Իբր այն թէ Առաջին պարսիկ իշխանազուն .
Յետոյ Արշակունի և Սասանեանց զարմին
Հայոց և Յունաց հետ անվերջ զըժտութիւնին .
Հուսկ յետոյ Կաղնէվեանց ըզփառըս և պարծանք ,
Որոց բարձր 'ի գլուխ Շահ-Մահմուտ էր պըսակ .
Տի՛ նա ըզԹուրանոյ ըզնախճիրըս քաջի ,
Որ Պարսից Աֆրիկէս թըւի նախ առաջի ,
Զորոյ Խորենացին ըզհատակութիւնսներ
Անցնելով յիշելս ասենը , յառասպել
Գըրէ յանոճ 'ւ անբուր , Իբրեւ ըզՀերակլեայ ,
Դէց հըրաշապատում , և կամ ըզԱհաղնեայ ։

Ըսքանչացեալ Մահմուտ 'ի ըսբ երդարանաց ,
Եւ ըսփոփեալ ոգիքն 'ի շահատակութեանց ,
Եհարց Թղճղիի իւրում թէ ո՞ւմ էին երգեր ,
Եւ ինչ անուն տաղիցս այս հեղինակին էր ։
—Տէր իմ , պատասխանեց Թղճղղի այն ուշեղ ,

Տաղքըդ Շահնամէին են դըրուադ հանճարեղ.
Եւ որոց քերդօղըն է Ցիրտէվսին դըժբաղդ,
Որ աքսորեալ ի քէն պանդըխտի 'ի Պալատա։
—Շուտով, ըսաւ Մահմուտ, թո՛ղ առնեն գերեզարձ
Թըշուառ աքսորելոյն, քերդօղին դերասանձ,
Եւ նորա հանճարոյ հըրաշալիսաւ վայել
Ընդունելութիւն մեծ կ'ուզեմ փոխան ընել։

Ներէ՛, ո՛վ Ցիրտէվսեայ ոգի անմահական,
Թըլուսաւ լեզուին, որ քոյ անուանդ է գովական,
Եւ ապիկար դըրչի որ ըդքոյ Շահնամէ
Յանդըգնի դըծագրել շեղեալ 'ի կարգ բանէ.
Երեսուն տարի զայն դըրեալ տըքնեցար,
Որ պարունակէ տուն հարիւր քըսան հազար.
Անթիւ և անհամար Էվառաձ ու Գաստէ
Եւ նոյնչափ դըրուագներ և Կազէլ ու Պէստէ.
Յորըս զարմին Պարսի ըզգործըս և զարար
Եւ ըզփառըս պատմէ ոճով ծայրէ 'ի ծայր.
Որոց իւրաքանչիւր տողին տակարկութիւն
Ըրած էր Շահ-Մահմուտ ոսկի թիւմէն ուրոյն
Վըճարել, և յետոյ խնդրեց տալ արծաթի.
Ընդ որ յոյժ ըզչարեալ նեղայաւ Ցիրտէվսի.
Արծաթատէր Շահին դանձերն յետըս դարձոյց,
Եւ նորա յապարանս այլ ևս ոտք չի մնացոյց,
Որոյ համար իշխանըն զայրացեալ սըրտիւ,
Աքսորոյ հըրաման տըւած էր մեծ սատիւ...

Պարսաստի ճանապարհն է սրվռեալ ուղտերով,
Շատուր կարաւանաւ, բեռնաբարձ դրրաստով,
Որ վեհանձն իշխանին առատաձեռն ընծայք,
Հարիւր քրան հազար ոսկի թիւմէնի հարկ,
Անթիւ ճոխ ըստաներ, հարուստ կահ կարասի,
Եւ թանկագին նուէրքն անհամար ոսանէին,
Եւ ըզպատճէն Շահին ըզհրամարտակին,
Ինքնագիր ոսկեզօծ, յորում ըզՄիրտէվսի,
Թախանձէր իրեն քով վերադառնալ ներող
Մրաբք, ընդունելով խընդիրն ողբաւոր։

Ա՜ւա՜ղ ասանդ ոսանեանն անոյշք և անդութ . . .
Հասեալ հոս, դրրիչս է վրշրելու հեռանաւ,
Բան թէ 'ի պատմութիւն անցեալն որ առջի կայ.
Հաղիւ մնաս կարաւանն ընդ դուռն Պարսատայ,
Ամբոխ մեծ անհամար ընդ դուռն հանդիպակայ,
Ելեալ յուղարկաւոր դադարի, յաւ բարձած,
Յորում դրնէր մարմին քերթօղին Միրտէվսի,
Որ զանանց քուն նընջած յաւխտենից 'ի ծոց,
Յաղյաւոր կենցաղոյս թողուած էր մեկուսի . . .
Ա՜ւա՜ղ անցաւորի վաւայքս և պատուոյ . . .

Ի՞նչ ըրաւ Շահ-Մահմուտ 'ի լուր անտանելի
Սրկածիցն, լուեն զայն վէպք աղէտալի,
Միայն քերթօղն Հաֆըզ յիւր դեղեցիկ Տիվանի
Կ'ասանդէ սուգ առած ըզբոլոր Պարսկաստան.
Մարդարէին Դաւթի նման, քուրձ ըզգեցեալ

Էր Շահն և 'ի մոխիր նոյն օրը թաթաւեալ...
Ցեռոյ ժամանակին ժանիք անկարեկիր
Սրկին 'ի մռայլոն ըզսուգ փառաց նանիր։

Երանէ՛կ քեզ, Ֆիրդէվսի, որ Մահմուտի պէս Շահ
Զարմացող մ'ունեցար, կենդանութեանդդ շահ,
Եւ 'ի մահու դէթ օր մ'ունեցար լայող զայն
Որ հիւսեց անթառամ պրսակ անմահութեան։
Քանինե՛ր, որք 'ի կեանս հայրդդ չ'եղեն փառայդդ,
Որոյ յուշն է կորած, և ոճին անարգուած...

Դըժբա՛ղդ Ցեր Խորենոյ, մերոյս քերթողահայր,
Որ ազգածանք անուրոյ բոլոր ազգիս եղար,
Ասանօր ըզքեզ, ո՞վ աշխարհիդ, յիշեմ,
Եւ այս եղերական բանիդս քեզ նուիրեմ.
Որ կենօք չափ անդուլ 'ւ անխոնջ աշխատութեամբ,
Ի մռայլութենէ վրրկեցեր զազգն անուամբ.
Այսքանոյ փոխարէն քրտանց և տըքնութեանց,
Ի դըրանէ 'ի դուռն մուրալով զիւր հաց,
Կոյր և հաշմ և ալեօք ծաղկեալ հէք Ցերունին,
Ի սեամն եկեղեցւոյ, կը պատմէ Փարպեցին,
Սըփռած, սովալըլուկ, ուանդեց զիւր հոգին.
Որոյ 'ի վարձ և ոչ մեռելածաղ ըրին։
Եւ այնմ որ զազգն ողբաց ձայնիւ Հոմերական,
Ափ մը հող զըլայան փառաց Խորենական.
Եւ յեռոյ պիղծ ձեռինք ըզգերեզման բացեալ,
Նորա ոսկերքն 'ի հուր մատնեցին անարգեալ,

Եւ այն սուրբ նըշխարաց մընացորդն ու մոխիր
Սրկին 'ի դեռ, և դեռըն տարաւ ցան և ցիր . . .

. . . . . .

Ես, որ եմն ապիկար 'և անարժան սոփեատես,
Սիրաբս երած ողբամ, ո՛վ Ծեր, զիս և ըզքեզ.
Աւա՜ղ, զի եթէ զայդ առնեն ընդ փայտ դալար. . .
Լըռեա՛, երդանք, լըռեա՛, և կարկեա՛ց, իմ քընար. . .

. . . . . .

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ԽԻԿԱՐԻ ԿՏԱԿԸ

ՅՈՐԴՈՐԱԿ ԱՌ Մ. Յ. Գ. Հ.

Աշխարհքը տարընտրիս շահ չի մընար, ո՛վ անձ-
կալի,
Բիւրք եկան բիւրք գընացին, հիւրք անցաւորք
անդառնալի,
Հողանիւթ կեանքը սուտ է, սերմանածը չէ հրն-
ձելի,
Լաւ սերմը լաւ գործը է, նա՛ միայն հետ է տանելի.
Երնէկ թէ պատուիրանքըս գընես ակընջաց
օրակ.

Մարդը կատարեալ չ'ըլար, սիրելի, վարդ ան-
փուշ չ'ըլար,
Կեռասը առանց կուտի, առանց պատենի նուշ
չըլար.

Առանց ցաւոյ խընդութիւն, առանց լեղւոյ անուշ չըլլար.
Կըարիճ կը մեռնի կ'երթայ, իր անունը անյուշ չ'ըլլար.
Լաւ անունը թանկագին է քան ըզմարգըրտի շարք։

Աշխարհքը կըրկէս դիւցիր ու մարդը ըմբշամարտ դիւցի՛ր,
Կեանքը անվերջանալի անհաշտ ճակատամարտ դիւցիր.
Ով այս մարտէն անընկուն ելնէ զայն քաջամարտ դիւցիր.
Սփոփա՜ւ, իւր անկարութեան երթայ նա խեղճ նահատակ։

Անգինը, ո՛վ աչայ ըլլս, գանձուց, սիրէ՛, աշխատանքը,
Մըրջինին օրինակաւ, անձանձրոյթ անդուլ ջանքը.
Աշխատաւորին ձեռքը են ոսկի ապարանջանքը.
Ծոյլ մարդը կարօտութեան մէջը գըլէ թըշուառ կեանքը.
Վազուկ ձին 'ի յաւելուլ, ասեն, զիւր յարդն է ատակ։

Կանանց հետ, ըզդոյշ կացի՛ր, չըլլայ վարքըդ թեթեւ ասեմ.

Կինը արարչութեան մէկ ամենագեղ պարգեւ ասեմ.

Բայց թունալից պտուղը պատէ աղնիւ կեղեւ ասեմ,

Շատ հեղ գայլը ոչխարի մորթը կըրէ վերեւ ասեմ.

Զըլայ ոսկի խընձորը ոսկեզօծ պատիր դընտակ։

Բայց ասեմ. խոհեմութիւն ամէն իմաստից մայրըն է.
Սընափառ հպարտութիւն անմտութեան խորթ հայրըն է,
Երկայնամտութիւնը իմաստութեան տաճարըն է,
Ըզգոյշ եղիր չընեղու այն բանը ինչ որ չարըն է.
Այս է, իմ սրբոյս Հատոր, խրդճուկ Խիկարի կըտակ։

ՀԱՅԱՍՏԱՆ

Իր վառաց յիշատակն անջինջ պիտի մընայ,
Եւ նորա տէրք անուն պիտի ապրի անմահ.
Ծերք և տղայք դարուց 'ի դարս պատմեացեն
Նորա անց.քն անպատում և նախճիրք արութեան,
Եւ ազգէ մինչեւ յազգ ըզնա երանեացեն.
Երանէ՛կ քեզ, Հայաստան։

Երանէ՛կ քեզ, Հայաստան, երկիր երանաշնարհ,
Ուր մարդկային ազգի մերկացան խանձարուրք,
Ուր առաջին խօսքն կանգնեցաւ Աստուծոյ,
Ուր առաջին բարբառ խօսեցաւ Հայկական,
Ուր եկ տապան Նոյի վերայ Արարատայ,
Ուստ 'էջ 'ի Հայաստան։

Հայաստան, հայրենիք հայրեաց դիւցազանց,
Հայկայ և Արամայ, անեղկուն Վարդանանց,
Առիւծուն Լեւոնի և վագեր Տիգրանայ,
Եւ որ հերձոյր ըզվէմքս եղջերամբ Տրդատայն,
Որոց գործք քաջութեան գողացուցին զաշխարհ.
Երանէ՛կ քեզ Հայաստան։

Երիցս երանի՜, երկիր հրաշազան,
Որ պահեցեր զաւանդս ոգւոյն անապական,
Զոր ոչ ցեց և ուռիճ ապականել կարցան,
Եւ ոչ ամենածախ ժամանակին ժանիք,
Երբ ցիր ու ցան սրիռեց բազդին դատակընիք
Զորդիս քոյ, Հայաստան։

Աւա՜ղ քեզ, Հայաստան, երկիր չարաբաստ
Զոր հէն և առապատակ արար ոսկոյ կոխան,
Զորոյ չէն քաղաքներն ու մարդաշատ շէներ
Արարին անբընակ աւերակ հիմն 'ի վեր։
Եւ գերեցան տարան մինչեւ 'ի Խորասան
Դրատերք քո, Հայաստան։

Ուսերք քո և դրատերք, բայց ոչ և ուշ մրատց,
Ուր յանուաշ որձաքար «հայրենիք» են դրուած,
Ոչ ոգիդ որ անդուլ հառաչէ անձկայրեաց,
Եւ չերաչերմ յուսով բորբոքեալ նորազդած,
Տաճար իմաստութեան կանգնէ հիմն անասան
Ի նորոս Հայաստան։

ՅԱՒ

Ա.

Ո՞վ է սա, որոյ ճակատ
Է բիւր կընճռովք ակօսած,
Որուն նայուածքը է ժանտ,
'Ի ակռաները կըրճըտած.
Խոժոռադէմ, ահարկու,
Զորդին սարսափ կը սրփռէ.
Թէ մէկն ականջը խըցէ,
Նորա սիրտը կը զեղու։
Ցամաք ու ծովու վերայ
Մարդուս անմեկին ընկեր,
Եւ իբր անոր սեաւ ստուեր,
Նորա ընդ հետ կը փութայ։
Անկոչ անյագ կոչնական,
Բազմ 'ի խընճոյս նախաթոռ,
Եւ 'ի գրգռիկ մէջ դըրան
Սողայ զեռուն թմունաւոր.
Ի շինական տընակէ

Եւ 'ի մահճէ ալքնութեան
Մինչ 'ի դահն արքունական
Միահեծան նա կ'իշխէ ։
Ի հիւսիսոյ մինչ հարաւ,
Եւ մինչ 'ի դըժոխս անգամ,
Ընդ նորա հըրամանաւ
Խոնարհի ազգըս մարդկան ։
Տառապանք և հեծութիւն,
Նըզովք, արիւն և շարաւ,
Եւ մահ արքանեակք նորուն . . .
Նորա անունը է Յաւ . . .

Բ.

Խոր խաւարին խոժոռ տէր,
Սանդարամետ սեւադէմ
Օր մի բաղմեալ 'ի շեկ բեմ,
Զիւրըս զիւրեւ ժողովէր ։
Սէդ դահերեցն ակըմբին,
Որոյ ամեն մէկ ակնարկ
Եւ ամեն մէկ բան բերնին
Են առ Աստուած հայհոյանք,
Զայնիւ բարձու տըրտընջէր
ԶՄրարչէն ամէնազօր,
Որ զազգ մարդկան է ստեղծեր
Քան ըզդեւոց փառաւոր.
Տիրաշունչ հոգւով պըճնեալ

Եւ մարմնով նրմին զուգորդ,
Եւ ի կեանքս հանդերձեալ
Անմահ փառացքն կրցորդ։
Սեւադէմ տէրքն գոռայ,
Անիծից բրխեց ծորան,
Մինչեւ դրժոխք որոտաց
Եւ դեւք ահիւ սարսեցան։
Յաղեղանէն լայնալիճ
Նետ, թաթախեալ 'ի ճահիճ,
Թունոյ, ճրդեց ժանդալիր,
Եւ ցաւ ծընաւ 'ի յերկիր։
Ցաւ յերկունքս ծրնընդոց,
Զոր, ընդ մրտանել յաշխարհ,
Բերէ ընդ իւրեւ 'ի կոծ
Երեխայն, և 'ի յաշխարհ։
Ի սկզբան անրզդալի,
Դիւրաբեռն և աննրշան,
Յետոյ տակաւ տսկալի,
Յորժամ արքունք լրրանան...
Որդ մի փոքրիկ կամ հիւլէ,
Որ գոյանայ մէջ արրատի.
Զոր կրրծէ, մաշէ, հալէ,
Ծառ որդնակեր, որ փրատի։

. . . . . .

Գ.

Երբ միանգամ յոլովայթ
Իր արկանէ մէկըն ցաւ,
Եւ յօշոտեն ըզնա ժանտ
Ժանիք արիւնաթաթաւ,
Նորա համար ընդունայն
Է յոյս ակընկալութեան.
Արեւն անոր ոչ կ'ելնէ
Եւ ոչ մարը կը մլանէ,
Գանձք ճոխութեան անօգուտ,
Զարն ու բարին այլ է սուտ.
Եւ 'ի ծոց առատութեան
Ի քաղցէ կը լրկի այն։
Որ խաւարի մըղձաւանճ
Իւր անթափանց քօղին տակ
Սեղմէ ըզնա անհառաչ,
Ոչ ճիկ և ոչ հեծկլլտանք...
Թէ դալ ուզէ կամ երթալ
Կամք բաւական չ'ունենար.
Հարթ ճամբուն մէջ ոտքն հասած,
Ծընկըները կը դողան.
Երերած ու այլայլած,
Ըզեղն ու կամքը սառած,
Ինք իրեն 'ւ 'ի շըրջակայ
Ծանրը քեռ մը կը դառնայ։
Շունչ մի թ'առնէ հեշտարար,

Շուտ կը խլդի շընչասպառ։
Ոչ կենդանի, ոչ մեռեալ,
Վարանեալ և տատանեալ,
Ըրածին ըսարբչալով,
Ընելիքն անարգելով,
Յարաժամ հակասութիւն
Եւ առեղծուած մ՚է համբուն։
Յան անիծեալ նորա սիրտ
Եւ դըրաւած է հոգին,
Անպէս որ յար անձանձիր,
Եւ թոյլ երբէք չէ նըմին։
Երբեմն ազատ, միշտ գերի,
Եւ անշարժ կամ յերերի,
Տեղը դամուած կը մընայ,
Զոհ դըժոխոյ անխընայ...

ՈՒՆԱՅՆՈՒԹԻՒՆ ՈՒՆԱՅՆՈՒԹԵԱՆՑ

ԱՌ ԿԻՆ ՄԻ ԱՅՐԻ

Ո՞վ դու, որ նախամօր ժառանգ եւ հեծութեանց
Եւ սիրասուն 'ի մարդս աղխոյց դառնորակ,
Յաւոյ անպարտադիր ծիրն ըստուար պրծած,
Եւ ըզկենաց լեզուն քամած եւ ըղբաժակ.
Քոյ հոգիդ դառնութեամբ լցուած է անպատում,
Կրած եւ ինչ որ կարն է կրել մարդկօրէն,
Ծընօղ և ամուսին, զաւակ և ազգատոհմ,
Ամէնուն տուգն առած, բաժնուած ամենէն,
Ձեռքովդ եւ կախուցեր աչքերնին ու թաղեր
Հազիւ մանկութենէ դու եղած, քոյ մանկունք...
Աղջիկ, կին և մայր, տառապեալ միշտ եղեր,
Եւ եւքս չարաբաստ այրուոյ տառապանօք...
Իրաւ է քո ցաւերն ու դանդատ չ'են խօսքեր.
Աղէտից մէջ ծընած ու սիրտդ շըւարած,
Ցեռոյ սալի նըման բախմանէ զօրայեր,
Եւ խոհական մըտօք յերկրէս է վերացած,

Ո՛չ, չէ գանգատ քու խօսքն, և մինչ հոգիդ ցաւէ
Եւ սրգոյ բեռին տակ հառաչէ անձկայրեայ,
Դեռ զբաղի է երեսդ և զբաղի կը ժըպտէ
Մարդոյ առջեւ, սրտիդ խորին վէրքըն ծածկած.
Լոյս 'ի մէջ գիշերի, զոր խաւար ոչ ծածկէ,
Կայծ անշէջ ընդ մութոյ պահպանեալ հովանեաւ,
Ծաղիկ տերեւաթափ, բայց ոչ զուրկ 'ի հոտէն,
Շուշան 'ի հող ծըռած, բայց ամբիծ բաժակաւ։

Երբեմն 'ի խոր սրտիդ ելեալ խորհրդով,
Եւ մըրրկեալ կենաց քոց անցեալն խոկմամբ,
Կ'ըսես, տակայն, թէ ի՞նչ այս կեանքն է և վերջով,
Երա՞գ է թէ տեսիլ, մըրրիկ, հոգմըն և ամպ.
Սա՞ման արդեօք երկնային, թէ սիրոյ է նըշան,
Պատուհա՞ս երկնաւոր, թէ զոհ մի քաւութեան։
Ի՞նչ է և ինչո՞ւ դուն, 'ի ծոց առատութեան
Ծընած և գեղեցիկ յուսերու յորդան,
Ազնի՛ւ ձըրքերով, աղնուական բարքով,
Ազնուագոյն դիմօք զարդարուած անընման,
Ինչո՞ւ, զուրկ յայս ամէն դու 'ի մանէ բարեաց,
Խրատալէր աղէտից զոհ ըլլաս խոնարհած . . .
Յեռոյ ուշաբերեալ, կ'ըսես, Ունայնութիւն . . .
Ունայնութեանց աշխարհ, ամեն ինչ է ունայն . . .

Կին դու, իրա՛ւ է խօսքդ և իրա՛ւ պատմութիւն,
Պատմութիւն է քոյ կեանք բոլոր ազգի մարդկան.
Ոչ երազ, ոչ տեսիլ, ոչ տուտ, ոչ պատուհաս,

Ոչ, այլ ունայնութիւն, ունայնութի՛ւն բընաւ,
Թէ՛ 'ի ծոց ակներեւ փառաց կամ թէ վըշտաց,
Թէ՛ 'ի վերայ դահուց, թէ՛ հիւղից ընդ յարկաւ...

Երանի՛ որ գիտէ ասել զաշխարհի ցաւն,
Որ, 'ի մէջ ծուլածուփ ալեաց ըսպառազէն,
Զինեալ է արութեամբ յըսառակ յուղել զիւր նաւն,
Որ գիտէ աշխարհի վերայ յոյս չըդընել,
Ոչ 'ի վըշտէն տըրտմիլ, ոչ խընդութեամբ խընդալ.
Պէս մանկան ըզբաղեալ իւր ժամերն անցընել...
Կի՛ն դու, աչքըդ սըրբէ՛... կա՛ն ուրախ օրեր այլ.

. . . . . .

Ի ՄԱՆԿԻԿ ԴԵՌԱՀԱՍ

Գոհար, զոր կը ցանկան սիրտք անյաղ և բաղձանք
Գոհար, զոր կը սիրեն ամեն սրտից տենչանք,
Գոհար, վարդ վառ առեալ, սրտա՞կ մէջ մեռաղայ,
Թէ ընդ դալար խոտով մանիշակ ես ծածկած։
Յո՞ր խորոյ հանքերու կրդաս Հընդկաստանին,
Կամ ո՞ր ճոխ դանձերէ թագաղանց թանկագին.
Գոհա՞ր ես, քար ազնիւ, ադամանդ կամ յակինթ.
Թէ ծաղիկ լուսափայլ, թէ օղ, մանեակ կամ դինդ։

Մէկ մի ամիս, մէկ մ՚արև, մէկ մի լաց, մէկ խընդում,
Մերթ ցօղես մարդերուն շարք աչերէդ տրրտում.
Կամ զբաղթ երեսոք սրիռես ոյս համասիւռ,
Աշխարհս յոսքն կանդնի տեսնել ըդքեզ յակճիռ.
Երբ յօնքերդդ կընճռես, ու ասուես ամէնուն,
Ոչ հայր կը ճանաչես և ոչ մօրդ ես սիրուն,
Ոչ խաղ, ոչ խաղալի, ոչ ժրպիտ դէմք անուշ.
Ասէ՛, ի՞նչ ես, կախա՞րդ, թէ հրեշտակ մի անյուշ։

Գիտես թէ քո նպատակն ամէն մարդ ժուժկալել
Պատրաստ են և յօժար. անոր համար ոչ սատ,
Ոչ խօսք մլատիկ կ'ընես, ամէնը տաս ծաղրել
Քո պարզամիտ բանիւ ու խաղերովն ըզգատ.
Միմոսի պէս զլսարթ, թեւերդ որ կը բանաս,
Կարծես բոլոր աշխարհք անոր մէջ ընդդիմիկ.
Երբեմն ալ անխնայ կ'ելլես սատակել, նպատակ...
Զըզիտես ի՞նչ բաշխել, շնո՞ւրհք թէ պատուհաս։

Դու քո վատն գիտես, գիտես թէ նպատակ
Ամենէն ես դըգուած, ամէնուն փարելի.
Գիտես, չարաճըճի պլրամիտ հանճարով,
Զանազանել քո շուրջ նաժիշտն ըստատուր
Սիրամարդ դաշտերու, գիտես վերտոցըդ զարդ,
Ակն դոհար, գիտես քարին մէջ ապատոյդ,
Երբ դըրկախառն 'ի դիրկ ածիս թեւատրած.
Ըսէ՛ տեսնեմ, մանո՞ւկ թէ տուրան ես անկարծ։

Հապա ի՞նչ ես, իրօք. — Հոգի անճառելի,
Միանդամայն և ա՛յլ ձիրքերով աւելի.
Զի անմեղ ես մանուկ, սիրոդ է տուրք և անկեղծ,
Միտքդ է չարեայց անդէտ, քունդ անպըղտոր անեղծ։
Ո՛հ, քոյ մանուկ սիրոյ երկամեայ գիտցի՛ր գինն.
Ո՞վ գիտէ ի՛նչ պատրանք կան հատուն հատակին,
Քանի՛ տոխց դարան, և քանի՛ սըրտիդ վէրք...
Զըլա՛յ վանակըն տուտ անգին դոհարն, ըստուերք...

ՄԱՂԹԱՆՔ ՄՕՐ

ՈՐԴԵԿԻՆ

Ներնջէ՛, որդեակ, քուն անուշիկ,
Պատե՛ն զըսարթ քեզ երազներ,
Ցորչափ մաղթէ մօրըդ ձայնիկ
Քեզ անհատնում երկան օրեր։

Երբ մօրդ 'ի ծոց ես դըրկըուած
Անհաս ձեռօք բազկատարած,
Դուն ներնջէ՛, ես հրակեմ վըրադ,
Դուն ներնջէ՛, ես երդեմ զըսարթ։

Երնէ՛կ, որդեակ, այս օրերուդ,
Մ'ախ, վաղանցուկ են այդ ժամեր,
Կըարիճ հասակն, որ կուգայ շուտ,
Զըսա՛յ փընտռել քեզ զայն օրեր։

Զըսա՛յ փախչել քենէ այդ քուն,
Զըլա՛յ բախես կուրծ շընչատապառ,

Զլսա՛յ այսինքը շառագոյն
Կընճռօք թռռմել, վարդ դալկահար։

Դուն մօրը յոյս միակ անուա,
Երբ ծեր օրերն ըզնա ընկճեն,
Պիտի դիմէ, որդեակ, քո մօտ,
Ու դուն ըլլաս իր ապաւէն։

Նընջէ՛, որդեակ իմ՝, անդարթուն,
Քեզ 'ի բարձիկ մօրդ են ծոցեր,
Քեզ իմ երդեր տան անուշ քուն,
Քեզ իմ մաղթանք երկան օրեր։

Երբ ըզմայլուն աչօք զարթնուս,
Ժըպիտ 'ի դէմքս կարմրտակ,
Շարժես ատունքդ ու ձեռք և ուս,
Զինչ խոզակէն թռռած հարսնեակ,

Յայնժամ կապերդ ես արձըկեմ,
Ծարաւդ ըստեամբս յադեցընեմ,
Ոսկի խընձոր երեսիդ դէմ,
Շրթունքս անյաղ կարուցանեմ։

Թեւօք մարմնիդ կը պատեմ,
Աչքս 'ի յաչուկդ հանդչեցընեմ,
Գրկիս վրան բազմեցընեմ,
Ու թէ նընջեմ, քեզ երազեմ...

Ի Ղ Զ Բ

Թէ ես թռչուն մ՚ըլլէի,
Երկրէ երկինք թռչէի,
Լեռներ ձորեր կըարէի,
Եարոջ խընդիր ելնէի։

Թէ թիթռան թեւն ունէի,
Անոր խըցիկն ինկնէի,
Բարձիկն 'ի վեր նըստէի,
Բարձիցն 'ի վեր վազէի։

Թէ ես հոգմունք մ՚ըլլէի,
Զով զեփիւռ կը փըչէի,
Անոր մազերուն մէջէն
Երեսիկն համբուրէի։

Թէ արեւ, լուսով պայծառ,
Մարմնոյն վրայ, զերթ գոհար,

Ճառագայթներ սրփռէի,
Որ զինչ վայրակ վարվելար։

Թէ լուսին, եմ ամօթխած
Սիրահար, դիմաք ծածկած,
Ոստոյ տերևոց մէջի
Ծարած աչերով կանդնած։

Զերթ թքուչուն, թիթեռն ու հով,
Թեւ թեթև, արագ ոտով,
Օրն 'ի քուն պէս արևու,
Շուրջ եկայ եարոջ հետով.

Գիշերին, պէս լուանեկի,
Սիրեցի մենակ դաշտեր,
Մենակ խորշերուն մէջի
Փաթթեցի դըրկացս 'ի վեր...

ԵՐԳ ԲԱՂԱՆԵԱՑ

ԲԱՂՆԵՊԱՆ

Զուր
Մաքուր,
Օճառ
Փրփուր
Յոակի թասէ
Ականակուռ
Հոսէ,
Հո՛ս է
Ագբիւր
Ի բոյր
Ջերմիկ ջրոյ,
Հանդիսաւ քրնոյ
Հոս է
Թրմիբիւռ

ԲԱԴԵՆԻՄԻՐ

Ջուր
Մարդ,
Օճառ
Փրփուր
Յաւազանէ
Ոտատակուխ
Յուշիկ,
Յուշիկ,
Կեսո՛ւր,
Լեցո՛ւր.
Փոփուկ բազմոց,
Բարձ և ծածկոց,
Կեսո՛ւր,
Ինձ տո՛ւր։

ԲԱԴԵՆԵՊԱՆ

Հա՛ման իմ, մազերդ են ոսկեթել,
Ու մեռաքէ ունիս ծոպեր,
Ջուր 'ի թոսէ ջերմիկ հասեմ,
Սիրալը բացէ՞ ու ես երգեմ.
Ջուր, ելնե

ԲԱԴԵՆԻՄԻՐ

Ես կը սիրեմ՝ ապ ջրոյ ասաշ,
Կոսիւն կոնքայ, օճառի գաշտ.
Ես կը սիրեմ, մազ հոլանի,

Նըստել 'ի ծայր ջերմարքարի.
Ջուր ելնէ։

ԲԱՂՆԵՊԱՆ

Ասուի նըման այդ .քո մարմին
Համակելով մէջ սապոնին,
Գործ է գիտել շատ դըժուարին
Թէ ո՛ր սապոնն է ո՛ր մարմին։
Ջուր, ելնէ։

ԲԱՂՆԵՒՈՐ

Մա՛յր բաղնեպան, տաքն է խիստ շատ.
Նըստաղեցյաւ հոգիս զըւարթ,
Սեաւ մութ պատեց զիմ ըյս աչքեր,
Քըչիկ մ'ալ պաղ լեցո՛ւ ջըրեր։
Ջուր, ելնէ։

ԲԱՂՆԵՊԱՆ

Քո կուրծք նըման են .յանմաշ .քար
Ասպանիս անմահարար,
Քո ոլորակ .ծիւք և բաղուկ
Փայլեն ոլորկ զինչ կըճեայ սիւնք .
Ջուր, ելնէ։

ԲԱՂՆԵՒՈՐ

Մա՛յր բաղնեպան, ե՛լ դուռը բաց,
Ինձ մեռաքսէ վարշամակ ա՛ծ,

Եկո՛ւ փաթթեմ թև 'ի քոյ ուս,
Տա՛ր զովանոց զիս, հանէ՛ դուրս։
Զուր, ևքն։

ԲԱՂՆԵՊԱՆ

Հարան իմ, սրբե՛մ քեզ շըպարշիւ,
Գըլուխդ օծեմ իւղ անուշիւ,
Թել թել սանտրեմ, տո՛ւր մի համբոյր,
Յեռոյ աչերդ հայելւոյն տո՛ւր։
Զուր, ևքն։

ԲԱՂՆԵՒՈՐ

Անուշ անուշ են այս ջըրեր,
Անուշ անուշ են մօր խօսքեր,
Անուշ է քուն 'ի բաղանեաց,
Անուշ երազ քան ըզկեանաց։
Զուր, ևքն։

ԵՐԱՆՈՒՀԻ

Երբեմն Արարիչն էր զբաղմամբ,
Յայնժամ յիւր պատկեր բաներցեց ըզքեզ,
Կոյս մի զարդարուն այնքան գեղերով,
Որ ըզքանչացաւ ինքն իսկ 'ի քո տես։

Երկինք յաչըս քո են, և աչք յերկին
Պէս լուսաւորաց փայլեն դիշերին,
Աստղունք յաչերէդ դողանան ըզլոյս,
Զը գիտեմ, թէ դո՞ւ յաստեղաց առնուս։

Վասն քո երբեմն բաներցան երանգք,
Վարդքն գիւր թերթիկ վասն քո երաց,
Վասն քո շուշան, վասն քո մեխակ,
Վասն քո մարգրիտ 'ի ծովու ծածկած։

Պատկերդ յերանգաց, այտերդ 'ի վարդէն,
Մարմինդ է շուշան, շրթունքդ են մեխակ,

Վարսապետը օրակը 'ի գլուխդ հիւսակէն,
Եւ ծածանի յուս քու ծով հեռաթռակ։

Չէ՛ ծիրանի ծիր քան ըզքեզ պայծառ,
Չէ՛ մարգրիտ 'ի ծով քան ըզքեզ մաքուր,
Սեռ է ձիւնն առ քեզ և ալեաց փրփուր,
Եւ քու մազերէդ գիշեր չէ խաւար։

Բայց վարդ, մանիշակ, լուսին և արեւ,
Եւ ծով, երբ ըսուէր, ցրտին քու առջեւ։
Արե՛ւ, մի՛ ծագի, լուսնի՛կ, դու մ'երթեր
Քանի կը շողան նորա փայլ աչեր։

Գանձս անհատնում եղ այդրէն Կենարար,
Սրտիդ ըզդայմանց կենդանի բարբառ.
Ծիր լայնատարած ծովու անսահման,
Եւ ծաղկաղբարձ դրախտ փափկութեան։

Ծով, այո՛, անեզր երբ խորհուրդ խորին
Յանշարժ հայեցուած ձուլէ ըզնոսին.
Ըզմայլած պըշնուն յայնժամ բիրք նրաղ,
Մաքրափայլ յօդոյ ուղեալք 'ի նուրբ շաղ։

Երբեմն 'ի համբոյր թռուցս արտեւան
Մաւշի գիրկընդխառն 'ի քրթթել ական,
Իբրու հոգմն հեզիկ 'ի ծովու շընչեալ
Պագնէ մրկանունքն անոր ծալ 'ի ծալ։

Երբեմն հլրեղէն նըշոյլք ցօլանան,
Ժըպիտք բերկրութեան կամ սիրոյ նըշան,
Կամ սիրուհւոյ ա՛կնարկութիւն վըսեմ,
Կամ խանդաղատանք կամ յոյս երկնաճեմ։

Յայնժամ երկնեղանդ աչք քո են ծաղկոց,
Հայելի խայտակն անճառ խորհըրդոց.
Յորում բեկբեկին ճառագայթք սըրտի,
Յորում նըկարի ոգիդ կենդանի։

Բ Ա. Գ. Դ

Ընտրեալք ըզհետ ասին
Եւ ասեալք նոցին հետայն
Փութան միշտ անմեկին,
Իբերայ անժամանս։

Հոգմունք ըզհետ ամպոց
Եւ ամպ ըզհետ լանին,
Լանին 'ի ծովուն ծոց
Եւ ծով ըզհետ նաւին,

Նաւ 'ի նաւահանգիստ,
Նաւարդ 'ի բեւեռ կոյս
Գիմեն, իսկ փոխէ միշտ
Ծովերքդ 'ի ստուերս։

Մինչդեռ 'ի զուր բազդին
Եմք անդուլ հետամուտ,

Իսկ սա 'ի մէջ մէկին
Գլնայ անմօտալուտ.

Յարաշարժ յեղյեղուկ,
Թէ երբեմն իսկ հանդչէ,
Այլ կեանք մարդկան, երբ՞ւկ,
Արագագոյն թռչէ . . .

Ի ՄԱՀԻՆՑՈ ՄԱՀՈՒ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Ա.

Սաաց անըզդաման. ո՛չ զոյ Աստուած յաւիտեան.
Եւ հաճոյից կենաց բազմեցաւ 'ի սեղան,
Կեր, արբ, ուրախ եղիր, և ոչ այլ ինչ հոգաց
Բայց միայն ըզհըրճուանս և յանկութիւն կամաց,
Բայց միայն ցոփութիւն, հոմանի և սեղեխ,
Խաղ և խընճոյք և շատ զեղխութիւնք ծայրայեղ.
Կարծեց իսկն հեշտութեանց անանց զոլ ըզպայման.
Կարծեց թէ խընդութեան աւուր չէ վաղորդայն,
Կարծեց եթէ, մոլին, կեանս այս է անընդատ,
Թէ չէ մահ, այլ անմահ կարծեց զանձն յիմար,
Թէ իբրու նաւ հասեալ մէջ նաւահանգըստի,
Խարիսխ արկանէ մարդ 'ի ծոց այս աշխարհի,
Եւ մընայ անյողդողդ և անտատան յաւէտ,
Նոյա ատան յարածուի ծաղր ու ծանակ արած։

Բ.

Սակայն պէտք են մեռնիլ. ո՞վ կը ժըխտէ թէ մահ
Անագորոյն սըփռէ չորս կողմ սարսափն ու ահ.
Ամէն մարդ գիտէ զայն, ամէնքն վըկայէ,
Բայց այն զոր չըգիտէ մահու վրճռեալ ժամն է։
Այո՛ պէտք են մեռնիլ. պէտք է որ այս մարմին
Ախտաւոր և տըկար հաշի բոլորովին.
Պէտք է որ 'ի հողոյ շաղեալ փըչուն զանգուած
Դառնայ անդրէն 'ի հող, զերկիր կաւ բըրտի փըշրած.
Եւ այն որ .քաջաւաղչ պայծառ կենաց փայլէր
Պէտք է որ նըւաղի, նեխուի ցեցակեր,
Որդնալիր և գիշին փոսոյ մը մէջ թաղուած
Այն որ երբեմն աշխարհս անսահման էր կարծած,
Այն որ երբեմն իշխան տիրէր միահեծան
Ծովու և ցամաքի և սանձէր ըզգազան,
Արքելայր ըզկայծակն և հըլու առնէր զայն,
Սըլանայր սուր մրտաք մինչ 'ի յերկնից կայան։
Տըպայ և ծերունի, հարուստ և չըքաւոր,
Թագուհի զեղապանծ, փառահեղ թագաւոր,
Իմաստուն և անմիտ, մեծ և փոքր հաւասար,
Ի մի ձոյլ, ինչպէս խառն 'ի հօտին է ոչխար,
Զոր կը տանին 'ի սպանդ, կամ զերիվ աւազոյ կոյտ,
Ընդ որ աւել ածեալ տանին ալիք յանդունդ.
Նըման այս աւազոյ կուտին, և այս հօտին,
Մահն ըզմեզ հարթ առնէ 'ի տորև իւր քողին,

Եւ այս վարագուրին ներքեւ, զոր նա ձգէ,
Զամէն անհարթութիւն հոգոյ հաւասարէ։
Ամէն իղձք և բաղձանք և խորհուրդք մեծամեծ,
Գոռոզ հպարտութիւնք և բուռն կիրք տրխեղծ
Փարատեալ շիջանին, ներփակեալ 'ի դամբան,
Եւ զամէն ծածկէ «Այս է տապան հանգստեան»։

Գ.

Այո՛ հանգիստ միայն անգանոր է օրէն.
Ո՞ւր այլուր, կենաց մէջ, մարդիկ հանգչել կարեն.
Եւ ի՞նչ կ'արժէ այնքան ցաւոց և վշտաց նիւթն,
Արդեօք կ'արժէ՞ որ մարդ ցաւէ ընդ իւր կորուստն։
Ի՞նչ է կեանքն, ե՛կ տեսնենք և քննենք զայն ուշով.
Ծընանի մայր ցաւով և տրտմեալ դայ լալով,
Երախայ է անմիտ, և մանուկ անզգայ,
Պատանի խրատեալ, պատրանաց ենթակայ,
Դիւրազգաց, և 'ի յոյզս կրկին բուռն անսանձ.
Երիտասարդ, երած, վրհատեալ, սրտախանձ,
Յաճախ յուսալուր, յամենայնի ըղձալ,
Ինքն ինքեան իւր ցաւեր 'ի յերեր տատանեալ.
Այր, ընդ բեռամբք ծանու խոնարհեալ ոգնաբեկ.
Անթուլ աշխատաւոր և անխոնջ յերթեւեկ.
Ծերունի, ախտաժէտ, հիւանդ և ցաւագար,
Անդամալոյծ և խուլ, խեղ և հաշմ և անկար.
Միայն 'ի դերեզման ատիւք արդարոյք

Ամէն ժամ մէկ մէկ մահն անոր կենաց տարեալ։
Թէ՛ մանուկ և թէ՛ ծեր, գերի է նա կարեաց
Որ բուռն զօրութեամբ իշխեն վերայ կենաց.
Նօթի և ծարաւի, հարկ ապրուստ հոգալոյ,
Ի տօթոյ և ցրտէ հարկ պատըսպարելոյ,
Եւ առաւել հարկեր անհրաժեշտ մըրցելու
Բիւր վտանգաց ընդ դէմ և բիւրուց կըրքերու,
Բիւրատար դըրգռութեանց և ախտից մարմնական,
Որոց յաճախ անզօր է լինել յաղթական,
Որք հիւծեն և մաշեն ըզմարմինն ապիկար,
Աչք խորեալ, դէմք դըժգոյն են, վըտիտ և նիհար.
Եւ յաճախ այսպիսի կենաց դըժոխըմքեր
Նախ քան ըզծերութիւն զառամեալ, կիսամեռ,
Նախ քան ըզմահ մեռեալ և կամ վաղամեռիկ,
Կ'երթայ զեշ նահատակ 'ի կենաց դատաստիք։

Դ.

Մեռնիլ վաղամեռիկ, 'ի ծաղիկ հասակի,
Թողով կենաց վայելքն և շըրջանքն թերի,
Մեռնիլ պատանեկիկ, կամ ժիր երիտասարդ,
Ա՜հ, դիտեմ, յիրաւի, ոչ որ հաճի ընդ այդ...
Բայց ի՞նչ այս մահուան մէջ կայ դըժկամակելի
Որ այնքան ծանրաբեռն և դառնագէտ թըւի.
Մի թէ մահ չէ՞ վախճան մարդկային յաւերու,
Եւ եթէ դարերով ապրէր մահկանացու,

Ո՞չ դարձեալ մեռանէր, և թէ դար մի յեռոյ
Կամ կանխաւ ծընանէր, չէ՞ր դարձեալ ոանելոյ
Դըրոշմեալ 'ի ճակատ մահու դատակընիք.
Մեռնօղն է զատամեալ թէ՛ և լինի մանկիկ։
Եւ արմատն իսկ հանուցց նոյ ինն հարիւրամեայ
Եւ ճոխացեալն ամօք հազար Մաթուսալայ
Ոչ առաւել քան զայն են որ ապրի օր մի.
Եւ բիւր հազար թէ ամք յաչս ընդ ընկնի,
Վաղուն է միշտ երեկն, իրարու յար նըման . . .
Իսկ արդ մահն է միշտ մահ, կանուխ կամ անապան։

Ե.

Հրամ՝, 'ի ծայր վտակաց հատեալ անզուգական,
Փայլէր քաղաքումն մեկեղեցաց համայն,
Որ ծագաց մինչ 'ի ծագ աշխարհի՝ յաղթական
Տարած էր անընկալն զէնքն հրամէական.
Յերզերաց Տիբերի յերզերս Գանգիսի,
Եւ յԱլպեանց մինչ 'ի ծագս արևուր Մաւխի,
Օրէնքս և պատուէր բաշխէր բոլոր ազանց
Կապիտոլինին յանմատչելի բարձանց.
Արիք և Անարիք, որք Իրան և Թուրան,
Թարգմանեալ են 'ի Հայ Երան և Տաներան,
Հրպատակեն նըմին մինչև 'ի Բուշատան,
Լիբիա, Բարբարոսք և բոլոր Խըժատան,
Մինչ 'ի Դարբանդն, ուր է Դուռն Երկաթի անոք

Բայց Ամուճն և Մաճուճ, որ է Գոգն և Մագոգ.
Ասիա, Ափրիկէ, Հայաստան, Եգիպտոս...
Եւ Կլէոպատրա ընկճած, 'ւ Անտոնինոս
Զիւր բաղդէն ապառում կընքած էր ,Ակտիոն,
Հոկտաւիանոսի թողեալ ըզկայսրութիւն,
Որ զաթոռն իւր հիմնեց հաստատակեցութեան
Ամբարեաց վերայ և եռապետութեան։
Քառասուն և չորս ամք իշխեց կայսր Օգոստոս,
Եւ Հրոմ .քան զերկինքս բարձրացաւ զոռոզ.
Շքեղութիւն այնքան տարածէր անդ .յայնժամ
Որ յակինթն և զմրուխտ խառնէր 'ի համադամ,
Եւ ժողովուրդ մարդեալ յոխութեանց 'ի հանդէս,
Խընդրէր հանապազօր միայն հաց եւ կրկէս։
Խնամատն խարհրդովք վայրէր անդ Ագրիպպաս,
Վիրգիլ Կայսեր .քերթող, մլատերիմ Մեկենաս,
Էին, զորոց անուն անմահացոյց Վիրգիլ,
Վիրգիլ, որ ասիսեց ըզյաւս անպարտադիր
Կայսերական արքոյն խացելոյ կարեվէր
Մահուամբ Մարկեղոսի միոնոր որդւոյ իւր,
Մահուամբ ծաղկահատակ որդեդրին Կայիոյ,
Եւ միւս սիրելւոյն, զեռահաս Լուկիոյ.
Որոց կայսրքն վոխան որդեդրեաց ըզՏիբեր,
ԸզՏիբեր, Լիվիայ զորդին արիւնահեղ...
Ա.ռ նրմին կայսերաւ եկաց Ովրատիոս,
Որ եղ չափ և պայման արհեստին .քերդուածոց,
Ա.ռ նոքաւ Կիկերոն, .յԱնտոնեայ չարաչար
Ընդանեալ, և Ովիդ, զոր աքսորեաց Կեսար.

Հուսկ առ նոքա խաւար փարատեցաւ նըսեմ,
Զի Փըրկիչ աշխարհի ծընաւ 'ի Բեթղեհէմ։
Հիւպատոս, Տըրիքուն, և քահանայապետ,
Կայսըր ծիրանաւոր, հայրենեաց հայր և պետ,
Ամբոխ եօթանասուն և հընգիւ զառամեալ,
Զախտ մահու ջեռանէր, փառաց 'ի ծաղ հասեալ.
Եւ այն որոյ 'ի ձեռն երկրիս երանութակ
Էր, անկաւ 'ի մահիճ մահու, մարդ հասարակ.
Բայց խորագէտ միաւոք դէր 'ի վեր ոսկեառեա,
Որոյ համար ըսին .քերթողք զըրոյց այսպէս,
«Թէ չէր պարտ ծընանիլ կամ ոչ թէ մեռանիլ»
Դարձաւ առ ժողովրդաբ զիւրեւ որդառեալ,
«Ողէ, հարցուց, ըսէ՛ք ինձի եթէ ի՞նչպէս
Եւ կայսրըս խաղացի ըզկենաց ըզհանդէս.
Եթէ լաւ, խընդացէ՛ք և ծափս հարէք, հա՛ պա»,
Եւ կայսրըն մեծաղօր զայս ասացեալ, խընդայ,
Եւ ընդ մէջ ակըմբին բիւր ծափահարութեան,
Խլեալ զաչս և զոգին փրչէ արեանն,
Շընական հեղձութեամբ անարդելով ըզփառս
Այն որ 'ի դիւցազանց դասելի էր 'ի կեանս։

Այն օրինակ երբեմն Ղապանիոյ արքայն
Կարոլոս հինգերորդ, Օգոստոսի նըման
Աշխարհակալութեամբ և բազդիւ աջողակ,
Որ 'ի գերմանական կայսրութիւն վերելեալ
Եղեւ և յաղթական Եւրոպական ազանց,
Թողեալ ըզդաւազան և ըզդահ գերապանծ,

Այլ ոչ Օգոստոսի հեղնութեան հետեւող,
Էջ 'ի վանս Յուսինեայ, որ 'ի Յերդոմատոր.
Եւ մնուցեալ 'ի թագաւոր, պատուէր տայր միանձանց
Պաշտօն հանգուցելոյ կատարել անդ անկարծ.
Որոց ոպբերդական ընդ մէջ ձայնարկութեան
Անանդեց զիւր ոգին կայսրն միահեծան։

Հեթանոս կեցարար և քրիստոնեայ կայսրք
Երիցս դերադաս, Հեթումն ասասածատէր,
Պարծանք ազգիս Հայոց, և արքայս սիրական,
Որոյ շատ պատիւներ ըստ թագաւորաց Խան,
Օր մ'արքունի վաստոյն իւր հրաժեշտ տալեալ.
Եւ կրօնաւորի քուրձն և խորք ըզգեցեալ,
Հեզահոգի վարուք, զարմած և խոնարհ,
Եկաց ժուժկալութեան օրինակ չընաշխարհ,
Եւ ելեալ ի բարձանց Կիլիկիոյ զահոյն,
Առանձնացաւ 'ի վանս և հանգեաւ արքայորն,
Մատթեոսի «իմ ոյսդ, իմ ոյսդ և տերբ Կոյս,
Տերբ խաչդ օգնական Լեւոնիս ամէնեսս...»

Յետ այնպան հրաշքաց որք մերթ գտանային,
Մերթ զաշխարհ վաստակեալ վաստաք շրջագային,
Մերթ իմաստուն վարք իւր ասողունք վայելցան,
Յետոյ թողին 'ւ 'ի հոգ ուսոյ էին դարձան,
Յետ Օգոստոսներու 'ւ Աղեքսանդրոսներու,
Յոզոմեն և Սոկրատ և յետ այլ շատերու,

Որք փառաց սահմաններն ըրին անմերձելի,
Եւ բաց յանուանէ ինչ չըթողին յաշխարհի.
Հաւատամ ինձ, լաւ է մեռնիլ քան եթէ կեալ,
Զի դէթ յանմահութիւն մընայ մարդկան յուսալ։

Զ.

Ապանց Վասիլոսին վերայ գեղաձիծաղ,
Հոլմահաբ զվագին ալեայ հանդէպ ծանծաղ,
Բարձրադիտակ կանգնէր տմարանայ զբաբել,
Զոր պատէր ծառայան շուրջանակի անհարել,
Բլրակ մի որուն ծագ փայլէր գալարագեղ,
Ծաղկունք որոց բուրմունք արփուէին անուշեղ,
Նոճիք երկնաճեմիկ, ուռենի վարսագեղ,
Որոց սան ու տերեւ խոնարհէր 'առ 'ի շեղ,
Որոց մէջ երգէին թռչունք հանապազօր։
Այսքան վայելչութիւն զերբեր դրախտ երկրաւոր
Զարդարէր զայս վայրերս և զայս բընակարան,
Որուն մէջ յօրանոյր, իբր արքայ յիւր ատոյն,
Մեծատուն մի որ ոչ զընչեցն հաշիւ գիտէր,
Ոչ ըստարդկան որ այնքա՞ն երկիրպատդանէր։
Ոչ վերանձն և ոչ ոիշտ և ոչ ատատաձեռն,
Եթէ էր իսկ ագահ, բայց ոչ թէ անյագ էր.
Բաղդին ամէն չնորհաց եղած վիճակաւոր,
Կ'ապրէր ինչպէս, ապրի ատկական մէկ զինաւոր,
Պատրաստ 'ի յարձակումն անվեհեր ամէն դէմ,

Ուր կոչէ անյապաղ զինք ձայն զօրավարին։
Այսպէս աշխատեցաւ բաւական տարիներ,
Առանց մէկ հանգչելոյ, դիզեց շատ գումարներ։
Վերջապէս եկաւ օր, օր դաժաբեր մահու,
Յորում Օրհաս կանգնած առ մահճաք մահացու,
Անողոք դոչէ մեղ մլատանել 'ի ճամբան
Որուն ծայրն անվրէպ եւանէ 'ի դամբան։
Ոչ դանձք, ոչ դիտութիւն, անզօր է ամենայն
Այն ատեն, թէ՛ և մէկն է կրէտս ալքայն,
Կամ հրմուտ և ներկուտ մինչ 'ի Վեցհազարեակ,
Եւ կամ Շիրակացւոյն 'ի Հանուրաշարչանակ։
Մեծատունն ընտանեօք պատէր շուրջանակի,
Կին և եղբայր 'ւ որդիք, ազգականք 'ի սրդի,
Սրբեալ զարտասուս որ զաչերն թանայր,
Եւ ճընշեալ ըզխինդն որ 'ի սիրտ ընդանայր...
Մէկ մ'ի կինն և, յորդիս, մէկ մի շուրջ նա հայէր,
Մէկ զանցեալն ըսիլատ կենաց պայմանս ածէր,
Մէկ զուրն յոր զընալ մինայր առաջիկայ,
Թողեալ զամեն գործերն երեսն վերայ,
Թողեալ ըզիտատ որ պատան ծոխամերձ,
Ոսկեմեալ ոսկեհուռն պատուոյն հանդերձ.
Բայց այն որ առաւել տարնոպ էր իւր սրտին,
Առաւել քան ըզտուն, քան զորդին և ըզկին,
Առաւել քան զամէն ինչ որ է յաշխարհի,
Բաժանումն էր զանձուցն ոսկւոյ և արծաթի։
Ա՜խ, դոչեց, իւր յեռին շունչն վերջեալ յայս բան,
Մինթէ կա՞յ ինչ արդեօք, անդրր քան ըզդամբան,

Որ արժէ զիմ գանձերն, 'ի յաւիտենութիւն . . .

Ո՛վ Տէր, ոչ թէ ընդ վայր ասացեր «Դիւրագոյն Մալխայ ընդ ծակ ասղան եղիցի անցանել, քան թէ յարքայութիւն մեծաւոյն մտանել»։

Է.

Երանի՜ աղքատին 'ի մահիճքս մահու,
Երանեալ է թշուառն յայնմ ահեղ 'ի պահու.
Նա չունի 'ի թողուլ գանձոց շատերման,
Հարստութիւնք անքաւ կուտակեալ քրքանաչան.
Նա չունի ծոխիանց վերայ ամարանց,
Ապարանք, փառաւոր շէն քաղաքաց 'ի ծոց.
Չունի անդին զարդեր և օգք մարդըրտայեռ,
Չունի ակունք ազնիւ և բեհեզեայ պատեռ.
Եղկելին մի՛ դուցէ օրական չունի հաց,
Գուցէ չունի մէկ յարկ, գուցէ և ոչ մի բարձ,
Յորոյ վերայ դընել ըզգլուխն անուէրոնջ,
Փաքրիկ մի անկողին ուր հանգիստ առնէ շունչ,
Ուր յաւադին անդամքն և վըշտացեալ մարմին,
Յետ առօրեայ անդուլ աշխատանացն ի դին,
Պահիկ մ'ի դադարեն 'ի քուն խաղաղական,
Պահիկ մի թոյլ առնու այս ոգին փութաջան,
Պահիկ մի այս ճակատ պարզեալ և խընդագին
Փարատէ իւր հոգերն ու արբէ իւր քրքին։

Գուցէ չը կայ մէկ ձեռն 'ի ճըմլել միանգամ,
Զունի մէկ ազգական, և ոչ իսկ բարեկամ,
Զունի լըսած երբէք անուշ մըխիթարանք,
Որ ըսփոփէ իւր սիրտն ու սըրբէ անոր ժանգ,
Խօսք մի սիրայորդոր, ձայն մի խընդակցութեան,
Զայն խըրախոյս տալոյ, կամ ձայն ցըխրակցութեան։
Թէ ունի կին և ուստր, անոնց ալըրն լըսէ
Հանապազօր քաղցի, զոր ո՞ յոգեցուցէ։
Լըքեալ և պարտատեալ, խեղճն յամենայնէ զուրկ,
Չը գիտէ ի՞նչ կերպով ալրբել զանոնց արցունք։
Ո՞ր մէկ վիշտըն թողու, երթայ տարաբաժին,
Կամ ընդ ո՛րըն տրտմի չը լինել անմեկին . . .
Բալոր կեանքն է եղած անվերջ մի ապաշու,
Հոգն էառ զիւր քըրտին և վարձըն զըլացու,
Հոգմունք տարան ըսփիւռ ցըրեցին անոր ջանք
Ասանդական 'ւ ամուլ, և չ'եռուն արձագանք.
Լեզի խառն ընդ մըրուր ըմպեց ջուր շիթ առ շիթ
Հայն 'ի մխրոյ շաղեց և 'ի ձանձախարիթ։
Այսպիսի տառապեալ կենցաղավարութեամբ,
Եղած էր նահատակ հանապազօր արեամբ.
Ինչէ՞ կըրնար զըրկել զինքն երբ հասանէր մահը.
Ոչինչ ունէր կորուստ, այլ ամէն էր 'ի շահ.
Մահ զնա փըրկելով յամէնօրեայ ցաւոց,
Դառնութեանցն էր վախճան, ըսպեղանի 'ի խաց.
Այնուհետեւ երբէք ոչ քաղց և ոչ ծարաւ,
Ոչ տարուռ 'ի ցըրտէ, ոչ ասթադին հարաւ,
Եւ ոչ մի ինչ երկիւղ կըրնար նըմին ազդել,

Եւ ոչ մի ըզգացմամբ սիրտն անըզգայ բախել։
Եղկելին զիւր հանդիսա 'ի ծոյ մահու առեալ,
'Ի քուն յաւէժական կըրնար գըտնել դադար,
Կըրնար իւր քաշած վիշտքն իրեն թեւ հոլանել,
Անով յերկինս 'ի վեր սըլացեալ հասանել,
Այն որուն որ աշխարհս եղած էր քաւարան,
Կըրնար յանդարդ յերկինքս խընդրել օթեւան,
Այն որ հեռեւեալ բանին սէրուբնական,
Խաչն 'ի յուս էր շարկած 'ի կենաց Գողգոթայն։

Ը.

Ոչ մեծատան նըրտնն ապրեցայ ես վարթամ,
Ոչ կարօտալ հացին եղէ մուրացկան,
Ոչ յաթոռս ոսկեհատ բազմեցայ գահերէց,
Ոչ գեղանաքարշ կենաց ապրեցայ իւր ըզգեց.
Ցանդարդս մանկութեան կեցի քիչ տարիներ,
Եւ յետոյ ալէկոծ և շատ ես 'ի յերեր,
Աւելի շատ տարտամ և տառապեալ կենաց,
Փոքր ինչ այլ խընդութեան արդարեալ ժամաց։
Այս ամէնն անցաւ վայրկ զերկ սրբոյ սըլացեալ,
Վաղանցուկ օրերս ըստուեր անհետացեալ,
Ոչ հետք մի հաճոյից, ոչ յուշ խընդութենէ,
Միայն արտօսր ու կոծ հոգւոյն դառնութենէ
Ընային, ընդ որով ճըլնշեալ քան ընդ ամօք,
Ցանրաբեռնի մարմին և քարշի ըզգեստովք,
Հեշտագոյն քան ըզվարդ թարշամեալ դալկահար

Այն որ քան ըզպողպատն էր անուաշ անվթար,
Եւ երիտասարդի թարմ ճակատուն վերայ
Տարաժամ կընճռոց բոյլ բիւր ակօսներ բանայ...

թ.

Տրտում է անձն իմ մերթ և հոգի դառնացեալ,
Յաճախ 'ի լոյս պայծառ զիս կը պատէ մրուայլ,
Յաճախ աչք իմ ցօղեն և սիրտ իմ լքանի,
Երբ բեռինք ծանրանան և ճընշեն զիմ ոգի,
Յորժամ ախտք և մարմնոյ տիրեն հիւանդութիւնք
Եւ մարդկային բնութեան կըցարդ տրկարութիւնք.
Մանաւանդ յորժամ հեռ, նախանձ և դըրդռութիւնք,
Անհաշտ ատելութիւնք և անիրաւութիւն
Զընկերն ընկերին դէմ զինեն անխըղճաբար,
Մաղթօք և ճիրանաւ պատառատել զիրեար,
Զերթ վագերք, յոխորտունք և գիշակեր գազանք։
Յայնժամ սիրեմ ըզմահ, յայնժամ ատեմ ըզկեանք։
Կ'ըսեն ասկայն թէ կեանք 'ի մահիճս մահու
Գեր 'ի վեր է անվիս անհատնում գանձերու,
Թէ յառաջքան թողուլ զայս պատեան հողեղէն,
Ոգւով չափ մըրցի նա ընդ մահ ըսպառազէն,
Թէ Բանն Աստուած ինքնին բնութեամբըն մարդ-
կեղէն
Զը հանդուրժեալ դոչէր. Անյա՛ զբաժակս յինէն։
Բայց ոչ թէ երկիւղի էր ձայնն աստուածային,

Այլ առ 'ի գութ մարդկան որոց ոչ գիտէին
Զեղեռն յանիրաւի և զգին արեան հեղլոյ,
Որ 'ի ժանեաց մահուն զինքեանս էր փրկելոյ։
Այնուհետեւ մահուամբ նոքին ըսպանեալ մահ,
Արդարն ոչ երկընչի, ըստ բանին Եղիշայ.
«Որ ըզմահ ոչ գիտէ. խորշի 'ի նըմանէ,
Իսկ այնըմ որ գիտէ, մահ անմահութիւն է։»

Ժ.

Ի յերկի՛նս, 'ի յերկին, ա՛նդ է մեր օթեւան,
Զոր պատրաստեաց որդւոց իւրոց աջ տէրունեան.
Որ ոչ անձկաւ դիմէ յերկնաւոր 'ի դարման,
Լաւ համարեալ ընդ քրիստ յածել 'ի վայրի առան,
Նըման է առին ճոխ, ասնուտեառքն ժըլատ,
Որոյ են հոյակապ դարպասք և մեծ պալատ,
Պարտէզք զեղածիծաղ, զինչ դըրախտ փափկութեան,
Գանձք անհատնումք ոսկւոյ, հըրապոյրք հեշտութեան,
Որ զայս այլոքին հանդերձ բարձի թողի առնէ,
Եւ երկիւղածօրէն ըզհայր իւր խընայէ,
Երթայ աշխատ լինի անխանջ իբրու վարձկան,
Սողայ զեռնախըշտի, յոլջա է նորա կայան,
Զառնու երբէք դադար, ոչ 'ի քուն լինի նա,
Մինչեւ մահու մանդատն հընձէ զինքն անխընայ։

ԺԱ.

Ողջո՛յն, ո՛վ Գողգոթա, Քառաթեւեա՛ն, ողջո՛յն,
Որ հոլանեալ կանգնես 'ի դոյժ Մահոյեղոյն,
Փարոս բարձրադիտակ, ատաղ բեւեռային,
Առ որս անքննիմ հուսատոյն աչք յառին,
Մարդ-Աստուծոյն երբեմն հեծելութեան խորան,
Ծառ մահու և կենաց ազնիւ ազգի մարդկան,
Որ 'ի կող դահավէժ Գողգոթայիս վիշտոց
Հանապազօր դայթիւք դեղերի հոլամած,
Եւ այս հուսաչանաց վայրիս մէջ անխորհուր
Իւրաքանչիւր վերէ զիւր վրան առ ատամբ էր,
Իւրաքանչիւր էր խաչն ունի բարձեալ 'ի յուս,
Իւրաքանչիւր կերէ զայն 'ի Գողգոթա կոյս։
Այո՛, կեանք Գողգոթա, և մարդն լինքնին է խաչ
Ի ոչիչ չարչարեանն բաներեալ նախ առաջ,
Եւ յորէ ծընընդեան դատապարտեալ 'ի մահ,
Առ որ կենաց դիրունք յորդեն ընդանապարհ,
Ճանապարհ հեծութեանց, կընքեալ 'ի Գողգոթա,
Ուստի բարձունք անմահք նըշմարին թափորայ։
Ողջո՛յն, դարձեալ ողջո՛յն, Քառաթեւ ոչխարանեան,
Հեծելութիւն բոլոր զինուորացս հեծութեան,
Ընդքեզ ողջունէ մարդն յարգանդէ կենաւոր,
Ընդքեզ ողջունէ նա 'ի մահիճս մահու . . .

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Ժ. Ա. Մ Ա. Ն Ա. Կ

Ժամանակն յոր հանդչէին
Մարդիք մէջ անմեղութեան,
Յորում ժամու հետ մըկան
Կաւուն սիրով կ'ապրէին,
Շունը կ'երթար գայլին հետ
Գոյր ու եղբայր անմեկին,
Առիւծ չ'էր արիւնախանձ,
Ոչ օձը թափէր թոյնը,
Ճընճղուկը վերայ տանեաց
Չ'էր վախնար դընել բոյնը,
Եւ ոչ ծիծառ ծառէ ծառ
Կըրէր իր ձագուկները,
Մարդկութիւնն այն առեանը
Մէջ խընդութեան կը ցընծար.
Կանայք սիրով հետ արանց
Էին, և ոչ թէ առանց

Մինչ երեկոյ լեզուներն
Գլուխս ճամթեցուներին . . .

Ո՜վ երջանիկ ժամանակ
Ցորում ապրեցան մեր հարք .
Երանէ՜կ այն օրերուն որ
Գիշերը գիշեր, օրն օր ,
Եւ յորում մարդը էր մարդ
Եւ ոչ կը ճանչնար ըզմարտ ,
Ոչ կաղ ու կուրիւ և ոչ
Վայնասուն ահեղագոչ,
Ոչ մութ կը պատէր օդը ,
Ոչ երկրի վրայ բօդը ։
Ո՜վ դու անգին ժամանակ ,
Դուն մէկ թութի տերեւէ
Կը շինես շքեղ դիպակ ,
Դուն մէկ թրթռ ազոխէ
Կուտաս գինի անապակ .
Դուն 'ի սրտոյ մարդկանէ
Անփորձ, անճարակ և խակ,
Կը շինես մեծ մեծ մարդիկ ,
Հրամաներ տարօրինակ ,
Արուեստաւորներ ճարպիկ ,
Գիտնականներ գերազանց .
Դուն ոմն ու քէնն անիծած
Կը փոխես 'ի հաշտութիւն .
Դուն վերջապէս ազնուութեան

Ի վայրէս մահկանացուն
Կը տանիս վայրն հանգըստեան։
Այս ամէնը ամէն որ
Գիտէ, և այս չ'է ինչ նոր.
Բայց այն զոր նա չըգիտէ
Հանդերձեալին պահածն է . . .
Թէպէտ ես չ'եմ մարգարէ,
Բայց կը յուսամ 'ի սրտէ
Այն հաճելար վուխթեան
Ամէն ազգի մարդկութեան,
Յորում ոչ տէր, ոչ ստրուկ,
Ոչ հարուստ և ոչ աղքատ,
Այլ հաւասար ազգք և լեզուք
Լինին եղբարք հարազատ,
Եւ ապրին ուրախ զուարթ
Քով քովի հաշտ և ազատ։

ՀԱՅՏԱՔ, ՅՈՅՍ, ՍԷՐ

Հայք տարահալած յերկրէ հայրենի,
Թափառեալ վերայ օտար եզերայ,
Ինչպէս Հրէայք 'ի Բաբիլոնի,
Կուլային յուշովը իրենց տանեայ։

Պանդուխտ, լքուածներ, և դեռնախքշտի
Տարածեալ վերայ ապայտակայ,
Յաճախ մերկանգամ և յաճախ հոլթի,
Կըշտայեալ միայն յուշովն հայրենեաց։

Հայրենեաց յոյսը անոնց լոյս աչաց
Էր, և լոյսն աչաց հայրենեաց յոյսը,
Իրենց առաջնորդ հաւատոյ լոյսը
Յոր կը դիմէին Հայեր փառապանծ։

Ամէն հաւատքէ, ամէն յոյսերէ
Է հրզօրագոյն հայրենեաց սէրը,
Առանց որոյ մէն մի ինչ ոչինչ է,
Առանց որոյ չէ ոք ինք իր տէրը։

Ս. Ո. Կ Ո Ց Ս. Ո. Ա. Կ

Ա.

Ի սկզբանէ էր բայը,
Բանն Աստուծոյ առ Աղամ.
«Ահա՛ ես քեզի կըտամ
Իբրեւ ընկեր Եւայը.

Եւ իբրեւ բընակարան
Մի դըրախտ լի ծառերով,
Որոյ պըտուղը համով
Ճաշակեցէ՛ք միաբան.

Բայց 'ի պըտղոյ այն ծառին
Որոյ անուն դիտութեան
Է ծառ բարւոյ և չարին,
Որուն մերձ ոտնի մահուան»

Եվաւ որ մէկ օձ ծառին
Ան վերեւ կեցած մէկ օր,
Խօսեցաւ մեր նախամօր
Ի բերանոյ Սատանին.

«Ինչ ես կեցեր կը դիտես
Ապուշի պէս այս ծառը,
Ու չես ճաշակեր միրգը
Որը կեանք պարգեւէ քեզ,

Եւ կը լինիս դուն անմահ
Յար և նման Արարչին,
Որ ստեղծեց քեզ, դըրաւ
Մէջ փառիկութեան դրախտին»։

Եվաւ որ Եւան հաւատայ
Բելիարին չօձ ծըպատած.
Կերաւ նա խընձորն անդին,
Եաւ կերցուց ընկերին։

Հապա թէ խեղճեր կերան,
Իրենց մերկութիւն տեսան;
Զոր տերեւներով ծառին
Փութամտութիւն ծածկեցին։

Բ.

Ի սկզբանէ էր բանը,
Եւ բանը էր Աստուծոյ.
«Քու քրտինքով քու թանը
Ուտե՛ս, հեռի յեղեմայ»

Ի սկզբանէ էր բանը,
Եւ բանը էր առ Եւային,
«Դուն ծընանի՛ս երախային
Երկնելով զերթ երկանը . . .»

Ի սկզբանէ երախայ
Գոչեց, աւաչեց «անկայ.
Վայնասուն, աւաղ, աշխար,
Աշխատանք. ա՞յս է աշխարհ . . .»

Մէկ մ՚այլ կուգայ կը հանի
Իւր մեռելոյով Գըրոցը,
Կը փըշէ ահաւոր փոցը,
Կը զարնէ ու կը տանի . . .

Եւ ամէն ինչ կատարեալ . . .
Այս ամենայն չարիքը
Թերեւըս չէին հասեալ
Թէ չուտէր Եւան միրգը։

Աւա՜ղ. Նախամարդկութեան
Վայրը մեր դըլխուն բըրդաւ.
Վա՜յն ի վերայ սերընդեան
Որը անկէ սերեցաւ...

«Հարքըն մեր ազոխ կերան,
Եւ մեր ատամունք հարան։»
Անուշ է յուսել խաղող,
Վա՜յ որուն ուտէ ազոխ...

Գ.

Այս առակ է շատ բարակ.
Ով կ'ըլայ խեռ 'ւ անառակ
Նա կը լինի խայտառակ,
Աշխարհի առկոց առակ։

ՓԻՂ ԵՒ ՄԸՐՋԻՒՆՔ

Ա. Ռ. Ա. Կ

Իմաստուն Սոլոմոն որ 'ի գիրս Առակաց
«Ընկերքն իմաստութեան, կ'ըսէ, երկիւղ Տեառն է»,
Եւ յԵկղեսիաստէն «Ամեն ինչ ունայն է»,
Իսկ երգ երգոցին մէջ, բայց ի «Հարսին ըսուանց»
Եւ բարուց անբանից և հէգ բանականաց,
Զորքս կը համարի գերադաս քան ըզմարդ,
Կը պատմէ մրջիւնաց եւ փղոխի առակ զայդ.

Փիղ մի քիրա ոտքերով կը քայլէր ուրախէս,
Եւ իր գարշապարաց ներքեւը կը փըշրէր
Ինչ որ կը հանդըպէր, ոտքն և կամ գեռուն,
Մինչառներ անխընայ և մըրջիւններու բոյն.
Այնպէս որ անճարակ այլ ևքս մըրջիւններ,
Իրենց համբարներուն այս պատուհասին դէմ,
Կը դիմեն Իմաստնոյն ոտերատնօք 'ի քեմ։

Սատիկ ինչ բան նա մըրջմանց չկատին.
—Ես չըկըրցայ հետեւել բանականաց գընդին
Որ չըփախեն վերայ անմեղուկ մըրջիւնից.
Ի՞նչպէս կ՚ուզէք որ խօք հասկըցնեմ անբանից։
—Եթէ դու անկարող ես, պատասխանեցին
Միջատքն առ Սոլոմոն, փիղն ըղդատացընել,
Մենք թերեւս գտնենք... Դուռ մ՚ըսկսան փորել
Ըստորեւ գետնին ուր տեղ էր կենդանին
Բընակել. քիւրք քիւրաց փոքրիկներն միջատաց
Աշխատեցան անդուլ գիշեր և ցերեկ օր,
Փորեցին, կըրեցին փոքրիկ դըրքն 'ի բաց,
Եւ հանդըրուանին տակ ուր փիղը էր տեղը
Հանդիպել, բացին խոր փոս, ուր կընճըթաւորն հէք
Գըլըրեցաւ յանկարծ . . . Միջատներն այն տեղն
Սոլոմոնեան փղին ծակատեալը մէջ ամէն,
Խածատեցին կընճիթ, ակընջեր, տոք ու ձեռք,
Անդամ որ կենդանին վիրաւոր, արիւնքաւոյ,
Ինկած փոսին մէջէն վեր կանգնել չըկըրցաւ,
Եւ այն փոսը իրեն 'ի գերեզման դարձաւ . . .

«Ըզփոքրին քան ըզմեծ ես յաճախ մեծ տեսայ»

ԱՂՈՒԷՍՆ ՀՈԳԷՎԱՐՔ

Ա. Ռ. Ա. Կ

Ապուէս, կամ՝ որ նոյն է, աղու այս, գերհանճար
Ըստուգաբանօրէն, չարաճըճի ճարտար,
Որ բոլոր կենդանեաց ահ ու դողն է եղած,
Նոյն իսկ մարդկան սեռիս այլ խաբկանքներն ելած,

Որ ապառաւն բերնէն շորթած է բանիրը,
Որ, ձիւն մէկ կիւղալ, գայլին ակռաները
Թափել տուաւ, և այծն ինչեցուց ջրհորը,
Պըրծաւ եղջիւրովը, ու ձրդեց զայն խորը.

Հին և նոր ամէն ազգ, ամէն առակախօս,
Եսոպոսէն մինչև 'ի Մըխիթարը Գոշ,
'Ի Վարդան, մանաւանդ 'ի Լաֆոնդէնն անմահ
Անոր անմիւս արկածքն են պատմած առակաւ։

Նա ունի յատկապէս իւր նախնիքին ասանդուած
'Ի գիրըս Լատինաց և 'ի գիր Հայկական,
Որոյ անուն կոչի Ազուէսադիրք լսման,
Մասեան շատ խելացի իմաստներ հաւաքած։

Բայց այն որ ապուէսուն փառք և պատիվը
Կը հրաչակէ պանուն, պարծանքը և դովը,
Զոր բարձիթող ըրին առակախօսներըը,
Այն է զոր կը պատմեն ամէնքոյ ոտղերը։

Պառկած էր հոգեվարքը 'ի մահիճս մահու.
Յանկարծ ել կանգնեցաւ ոչխարը ահարկու
Բելիսար. (զի ա՛յլ դէպ երբէք հանիրծակել
Չ'են կըրցած ապուէսուն հետ միրցանքի ելնել)։

—Բարի եկար, պարոն. ի՞նչ կ'ուզես, բարեկամ,
Ըստ ապուէս. զինի, օղի և հանդամ,
Հրամայէ՛, լիով կան այս մեհեանքը,
Հոս է ամէն բարեաց առատ անդաստանը.

Առ ակռան խժռանել կըրնամ .քեզի ճարել
Նոյն խակ եղէ կ'ուզես հաճոյքներ առատել,
Փող և փողոյ հընչիւն, և այն շըքեղ ապրանք
Շատ գեղանի, յորոյ ի են .քու ապարանք։

—Ոչ փողոյ, ոչ ճաշի բաղձանքով եմ եկած
Այս տեղ, զիտես դուն թէ առանցմէ զերազանց

Ի հոգի զոր առնել առնել է իմ պաշտօն,
Զ'ըլլա՛նք ժամանակաւ, արի՛ երթանք, հապ՝ օ՛ն։

—Շատ բարի Բելիար։ Հիմա քեզ կ'ապաշեմ,
Տո՛ւր իմ չմուշկերը, ու քեզ կը հեռանամ։
—Ո՞ւր են հարցուց դուռը։ — Սա խարխանին մէջը
Կը պահեմ դոպերէ անմերձ, կարարիչը։

Վերցո՛ւր։ Վերցուց, ու հոն ուզեց մտաւ Բելիար.
Փրնտրուեց չմուշկերը ասկոյն չի դտաւ,
Մինչև ուրուէս վարէր փոքր կարարիչը.
Եւ մինակ խարխանին մէջ ապուշ փարձիչը...

ՎԵՐԱՐԿ ՆԵՍՈՍԻ

Ա՛վ դու, որ դարձեցիր նախճիրք երկաստան,
Հերակլ, խեռ և կուլ, սիրահար լիազական
Դըշխային գեղապանծ վայլով Համափայլի,
Հերակլ, լապանիշ ցրլոյն Կենաւարուի,
Որն որ առեւանգել փորձած էր ըզքոյ կին
Ըզհէգ Ցաժանակիր, քե՛զ խանդացաւ երկին։
Հոգեվար ձիացուլ շապիկն արիւնաւած
Իբրու նըւէր անդին պարգեւեց առ կինն այն,
Որ 'ի ձեռքն Ցոյլի յուղարկեց զայն առն իւր.
Հերակլը հագաւ զայն, և իսկոյն խեղացնար
Խարոյկ մը բուրնկցուց և զինք երեց հրակայն։

Ի՞նչ է բարոյութիւն այս խրատին առեղծին։
Աւասիկ. Զինք է կենախուզ մեր կենաց.
Դա իսկ է պատուհասը կրնամոլ արանց,
Եւ անողոքաբար հալածէ ըզնոսին։
«Մարդոց բարքը երբէք ոչ այնքան է բարի,
Ոչ նաև այնքան չար ինչպէս որ կարծըւի»,

Իմաստունը կ'ասէ։ Հապա Խիկարը ես,
Որ չեմ փիլիսոփա, ես կ'առարկեմ այսպէս.
«Կանանց վարքը երբէք ոչ այնքան չարաչար,
Ոչ այնքան է բարի որքան կ'ասուի ընդ վայր»։

Հելլէն ազգը նախնի որքան իմաստասէր,
Նոյնքան թերթեւամիտ և մոլեռանդ իսկ էր.
Իր Հռոմէից տուճարը դից և դիցուհեաց
Եղծերով կեղծերով էր հաստակ խրճուուած.
Դիք երկրի և երկնի, կենդանի և մահու,
Դիք դաշտց և փողոց, դիք ահի և սիրոյ,
Դիք դըրախտի պոյծաւ, դիք խաւար դըժոխոց,
Դիք ախտից և բարդի, ճըգնաժամի պահու,
Ամէն մնարդութեանց, ամէն խառնակութեանց,
Ամէն տարապարհակ և բուռն հակասութեանց։

Եւ ինչ որ տարօրէն է և զարմանալի,
Այս դից անուանքը են, իսկապէս հայկական.
Հերակլը է խեղկուղ, Հսիքալը հանճարեղ,
Դէժանիրն է դաժան և կամ տաժանական,
Նեռան պատմուճան, կամ Նեռս նեռահար
Թարգմանի ազգահար 'ի բան երբայական...

ԲՄԱՑԲ ԵՒ ՀՄԱՑԲ

Կ'ասեն թէ կանանին հազար ու մէկ քմայք
Ունի, որք իր վրայ կ'իշխեն միահեծան.
Քմայք են բնական որոց միշտ գերեցան
Կանայք, զորս տրտու պէս կ'որսին հրմայք։

Կընոջ սիրտը թագուն է մի դանձ, ոսկեհանք,
Զոր շահագործելը է արուեստ մի խրթին.
Կրնայ վարձահատոյց հանքն ընել բանուորին,
Կ'ելլայ որ խարակէ ա՛յլ ինչ հոն չգտնանք։

Զայրոյս իբրեւ դուռով կ'ամփոփանեն կանայք,
Թերեւոյս իրաւամբ, թերեւս յանիրաւի.
Կ'ասեն. «արանց դուրծ է ինչ որ է կանանի»,
Որք պիտի կախարդեն զարոյս միշտ իբր հրմայք։

Արդուզարդեր, ժանեակ, նաղեր, լացեր, քմայք,
Անյագուրդ բաղձանքներ, թախանձանք, զայրոյթներ
Բնոյթ են կանայի լոկ հակասութիւններ,
Յաճախ հաճոյական, մերթ անհաճոյ հրմայք...

ՈՉ ՇԱՏ

Ոչ շատ, ոչ շատ, ոչ քիչ անքաւ.
Արագութեան դանդաղութիւն,
Առատութեան նըւազութիւն
Կը յաջորդեն, կ'ըսէ Համքաւ։

Ոչ շատ արծաթ ոչ շատ ոսկի,
Ոչ զեղխութիւն և ոչ կըծծի,
Ոչ ապարանք, ոչ կանանոց,
Ոչ ճոխ սեղան, ճոխ խոհանոց։

Շատ արծաթն է շատ ծանրը բեռ,
Զոր անդիի աշխարհ մեզէն
Կըրել տանել չէ քիչ օրէն,
Եւ յորմէ հոս չէ տեսեր խեր։

Թէ վայելել դու չըգիտցար,
Ժառանգորդներ գիտեն ազէկ.

Գէմ լինէին շընարհակալ
Եւ ողորմիս հանէին մէկ։

Ոչ շատ ոչ շատ, քիչ փոխ, քիչ շաղ.
Ասք յամբ 'ի քայլ, ձեռք աջապակ
Դիւրակեցիկ կեանք և յաջող
Կը յարդարեն, սիրտ զոհունակ։

«Ով յամբ երթայ նա ողջ կ'երթայ,
Ասին, 'ի դէպ հեռու ճամբայ».
Ժիր փութաջան աշխատութիւն
Կը տանին 'ի հանգըստութիւն։

Ոչ յուրտ, ոչ տաք, գարշը է բաւ.
Տօթը կ'երէ, յուրտ կը տառէ.
Տարիանք նոյնն յար նրման է,
Կ'երի կը տաի հարմաշաւ։

Երիտասարդ ըրաւ մարդը՝ բնութիւն,
Տըւաւ անոր կար հաւատար,
Առ 'ի սերունդ շարէ 'ի շար...
Մընացեալն է շատխօսութիւն։

ՏԵՐԵՆ ԱԹԱՓ

«Տըխուր է անձն իմ մինչ 'ի մահ» .
Տըխուր ասուեայ յոյսերը են,
Տըխուր Անդեայ լոյսերը են .
«Տըրտում է անձն իմ մինչ 'ի մահ» ։

Տերեւները կը թօթափին,
Դեղնած թառմած չոր ըսուեղներ ,
Ցուրտ ձըմեռան նախապշաւներ
Աշնանահար կը թօթափին ։

Խըռիւները դեռանին վերեւ
Կը սըփռըին դորպեր իրրեւ ,
Հեծեծելով ոտքերու տակ ,
Պէս հերձուած ցընցուս դիպակ ։

Ցաւոց ճիւղեր հերձաւորեւ ,
Խամրած չորցած կըտոր կըտոր,

Աստին անդին ոլոր մոլոր
Խորշակահար սլփռած սև սև . . .

Էր երբեմն որ ցանկը և ծառ
Կը խայտային դալարագեղ,
Պըտղաբերաց տեսքով շքեղ,
Համով հոտով մըրգապարար . . .

Տերևները կը թափթըփին . . .
Նըման, մարդիկ կը դան կ'երթան
Աստեաց Անդին անհատական,
Տերևաթափ ոսոք մարդկային . . .

«Տըխուր է անձն իմ մինչ 'ի մահ».
Տըխուր Աստեաց ցոյսերը են,
Տըխուր Անդեաց ցոյսերը են . . .
«Տըրտում է անձն իմ մինչ 'ի մահ . . . »

ՈՒՆԱՑՆՈՒԹԻՒՆ ՈՒՆԱՑՆՈՒԹԵԱՆՑ

Ամենայն է ոչինչ, և ոչինչ է ամէն.
Ցոչընչէ ըստեղծեց այս աշխարհըս Որ էն,
Բընութիւնը փառաք զարդարեց Արարիչ,
Ու մարդը մըտաւոր կարողութեամբ մի քիչ.

Մի՞ արդեօք Խիկարի խելքը է դերազանց,
Գէթ այնքան ոլքան է իմաստութիւնն ազգայ.
Ճըշդիւ ո՞վ է անմիտ և ո՞վ է մըտացի.
Իսկ ո՞վ կըրնայ քակել այս հանդոյց խըրատի...

Ոսկիոպլա աւան է դինէւէտ Գոպլթան,
Զոր երդիչը դիւթեց շընորհիւ իւր բամբռան,
Ինչպէս որ շընորհիւ իւր քընարին Որփէ
Դըժոխքը կախարդեց ուր էր Եւրիդիկէ.

Խելամըտութիւնը գաղտնեաց անահտական
Զանացինք ամփոփել հոս, թէպէտ անկատար.

Քանզի իմաստութիւն դիցուհւոյն է անճառ,
Եւ խորին խորհրդոց ալքիւր անհատական։

Փոքրն յոր ակնարկեց Վերին իմաստութիւն
Է զոր մահկանացու ամէն, մրոտքոցն համբակ,
Կը փորէ և պեղէ անդուլ մինչեւ յատակ,
Գուք ուր կը դադարէ ամենայն դիտութիւն...

Ամենայն է ոչինչ, և ոչինչ է ամէն.
Ցոչընչէ ստեղծեց այս աշխարհը որ էն,
Բընութիւնը փառաք զարդարեց Արարիչ,
Եւ մարդը բանաւոր կարողութեամբ ոչինչ...

ԱՆՀՈՒՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

Աստուածները, կ'ըսէ առակարծը Սոլոն,
Երկու չըգնաղագեղ շինեցին բան. կին մարդ,
Թագուհին էակաց, բուսականացը վարդ,
Մի առակարծութիւն զոր կըրկնեց Սոլոմոն։

Իսկապէս կին և վարդ ոչ բարի են ոչ չար.
Վարդն ունի հոտ անուշ, իսկ կինը գեղ անճառ.
Սակայն նաև ունի վարդը խայթիչ փուշեր,
Ու կինը կը ուժէ քըմահաճութիւններ։

Վարդը կըմնար լինել ծաղիկ շատ գեղանի
Եթէ չէր վաղանցուկ, ուրեմն մահկանացուի.
Կինը մի արարած կը լինէր գերագանց
Եթէ չը զառանցէր 'ի մէջ հակասութեանց։

Կինը, այն մեծաղօրն իշխանութեան գերոյ,
Որով կը տիրէ նա հըզօր սեռին վերայ,

Թէ երբէք յաւելոյր հեռը պարզմտութեան,
Յայնժամ կը լինէր մի մեծ կատարելութիւն։

Այր մարդը է սակայն թերեւս աւելի
Քան ըզկինն ախտից մէջ ստոգուած խորշելի.
Գուցէ իւր մոլութիւնք և ապականութիւն
Գերազանցեն կինոջ քրմացը հաճութիւն։

Մարդկանց մէջը կայ շատ խելքեր հատու բարակ,
Կան բիւր խառնուածքներ, ո՛րը սեւ ո՛ր ճերմակ.
Կայ ճոխը և ազահ որ ունի շատ ոսկի,
Կայ որ չունի աղնիւ մեռոյէն մի ունկի։

Բաղդը գիտէ. մէկուն կը շրջայէ ոսկին,
Միւսին արնանկութիւն, տանջանք ամէն մէկին,
Ուրիշի մը հանճար որն որ չըներ ըստակ,
Այլում դըլուխ դատարկ, ունայն խելապատակ։

Քանիներ որ թըմրած իրար 'ի քուն թանձրութեան
Կուգան ադիս տըխմար, անդին ապուշ կ'երթան,
Առանց հասկընալու ոչ գիրենք ոչ գիրար,
Եւ թէ ինչո՞ւ եկան, կ'երթան ինչո՞ւ համար։

Ո՞վ կըրնայ պարծենալ 'ի յըստակ գիտութիւն
Մարդկային սըրտի խոր և խաւար խաւերուն,
Եւ թափանցել մըտաց հակասականութեան,
Ո՞ր դըպիր, ո՞ր քննիչ, ո՞ր իմաստակ է այն։

Ինչ որ կը համբաւեն «բանական մարդկութիւն»
Ըստուգիւ է մի խումբ այլասեռ էակաց
Ապատնար, ախտաժետ կամ խեղկատակ, եկած
Այստեղ ներկայելու մի կատակերգութիւն։

Հաղներգուն Անմահից և դիւցազանց, Տանդէ,
Երգեց Աստուածային կատակերգութեան մէջ
Իտալական ազգին փառայը ելեւէջ,
Փա՜ռք զոր Տարտարոսին կատաղեաց կը մատնէ...

Պալզաքի Մարդկային կատակերգութիւնը,
Նրկարագիր ճշգրիտ ընտապարծ մարդկութեան,
Կը ներկայէ անոր եղերերգութիւնը,
Որը վերագրելի է խեղկատակութեան։

ԻՄԱՍՏՈՒԹԻՆ ԱԶԳԱՑ

Մեծ խմաստասէր մ'ըսաւ.
«Հաճոյքն է միայն իրաւ.
Խըրատ, խըրատ, մէկ հատ է.
«Մի միայն պրպտը պաշտէ՛.
Երբ որ ըլայ փորըդ կուշտ
Երանելի ես անշուշտ.»

«Այս օր է օր, վաղը չէ.
Կե՛ր, խըմէ՛, պառկէ՛, հանգչէ՛.
Մի՛ հարցըներ թէ ի՞նչ է.
Կեանքերնուս ժամը կարճ է.
Տըխմարը կը դանդաչէ,
Կէս դիշերին ժամ կանչէ.»

Եպիկուրի հակառակ,
Զենոնը ըսաւ առանկ.
«Հաճոյքը մի աղբիւր է,

Դէպ 'ի ծովը կը հոսէ.
Ժուժկալ մարդն է ապառաժ,
Զոր ոչ հով շարժէ, ոչ 'ժաժ։

Թէ ունիս խելք ու հանճար
Մի՛ հաներ զայն 'ի վաճառ,
Զըլայ թողուն անվրճար.
Ի՛նչ որ է, բարի կամ չար,
Մարդ ինքն իրեն է պատճառ,
Դուն գըլխուդ վրնտրուէ՛ ճար։»

Պիւռոն մերժեց զարշում.
«Կասկածին մէջն է ուռում,
Զըկայ հաստատ գիտութիւն,
Յարաշարժ վարկածութիւն
Զաշխարհ կը յեղաշրջէ.
Հա՞ւ թէ հաւկիթն առաջ է...

«Ով չէ մըտեր յոլովանքը
Նա չըգիտեր փոլովանքը.
Որտեղն շո՞ւնը բարակ
Թէ ազուէսն է բանբարակ.
Զոլին որո՞ւ է զաւակ,
Գուռա՞կ է թէ առանակ...

Մարդկութիւն չըտուաւ
Կը ծըփայ միշտընջական

Ընդ մէջ բիւր հակասութեան.
Պապշատ հետ Եպիսկոպի,
Արհամարհ հետ Պիւռոնի,
Յերկուսայոց հետ Զենոնի.

Երբոր Զենոն մերկանդամ
Պրծաւ ի սասէ ծովուն,
Փառք տուաւ սասուածներուն,
Ոչ վասին զի ողջանդամ
Փրկանքէն էր խոյրուած,
Այլ զի բեռն էր թեթեւցած.

Նա ինքն սանդխասան
Հեղնած էր ցաւն հարուածի.
Խելապատակ Զենոնի
Զ'էր ճոխած, ինչպէս կոխածայն,
Յորմէ ելաւ անելկուն
Անդրդուելականութիւն...

Ընդհակասութիւնը
Ի Շընակասութիւնը
Խելկատակ իմաստակին,
Որ տակաւէն ծաղրական
Պատգամ կուտար. «Մարդն է մի
Անիեսուր երկոտանի»...

Այսպէս եկաւ մարդկութիւն
Եւ այսպէս պիտի երթայ.
Մարդը պիտի չըդադարայ
Երբէք կըշռապատութիւն.
Միշտ յերկուացող, միշտ հաւքակ,
Պիտի մընայ անճարակ...

Իմաստութիւնը ողջոյ,
Ըստ երեք չափ հաւասկայ,
Գոյութիւն ունի զատ զատ.
Մանուկ, է դիւրահաւատ,
Պատանի, նանրահաւատ,
Ծերունի, թերեհաւատ...

ԵՕԹՆ ԶՍՐԵՐ

Կ'ասեն թէ Աստուծ երբ ստեղծեց զաշխարհ
Վեց օր աշխատեցաւ, եօթներորդ օր հանգեաւ։
Ստոյգն չկայ, աւա՛ղ, ոչ թոյլ և ոչ դադար,
Հանապազօր երկունք, հանապազօր է ցաւ։

Ստուած մարդն ստեղծեց, մարդ ստեղծեց զմարա.
Քան ըզդազան վայրի չար է մարդը առ մարդ,
Մէկ պատառի համար կ'ուտէ դըլուխ անթիւ,
Մէկ հացի համար է ամէն կապ ու կըռիւ։

Սըրարշաւ կը դիմէ դըժբաղդ ազգը մարդկան
Դէպ յանողոքելին ճակատագրական,
Զոր ոչ կանխաւ դիտայ, ոչ թափանցել կըրցաւ,
Եւ զոր իւրաքանչիւր եօթնեակ հետը բերաւ.

Գլուղ-կլուղ ծլուէ դլուեց չարքն ահաւոր
Ոլք ըզմեզ պաշարեն ըստ պատշաճի աւուր,
Որոց թիւը եօթն է, տարբը, ցուրտ ու սարսուռ,
Կաղ կլուխ, բօթ ու խօթ, հուր բորբոքը և ջուրբ։

ՆԻՐՈՒԱՆԱ.

Հընդիկ պուտայական մի պոնդ մերկիմաստակ,
Նիրուանականութեան քարոզ գերահրուչակ,
Մի տէրվիշ կամ ֆաքիր,
Մէկ օրին Պոմպայէ ինկաւ, յանկարծօրէն
ՅԵւրոպա, ճիշդ զերծ մի ոմն լուսնաբընակ
Ինոյ 'ի մեր Գընատակ։

Տեսաւ նա ատանօր անթիւ հրաշալիք,
Մարդկային հանճարոյ անլուր զարմանալիք
Ճարտարապետութեան.
Ամէն կողմն տեսաւ 'ի ծով և 'ի ցամաք
Բազում կիրառութիւնք, գոլորշւոյ, և կայծակ
Էլեկտրականութեան.

Տեսաւ կրկէսներու խաղերը և թատեր,
Յար և նման սուտեր ու փուտեր ու դատեր
Ու վէճի առարկայք.

Տեսաւ թէ ասոնց մէջ հաւասարազօր դեր
Կատարողքը էին կընահաճոյ մարդեր,
Կամ մարդահաճ կանայք.

Մի ուրիշ դասու մէջ, անհամար դըրուածներ,
Օրագիրներ, վէպեր, վիպակներ, յորձանքներ
Գըրքերու յորդառատ,
Ճոռոմաբանական մըտայ հակասութիւնք,
Նորանոր գիւտերու անվերջ արտադրութիւնք.
Հանճարոյ գոտեմարտ . . .

Պոնդը վերադարձաւ յետերթ Գանդէսի.
«Եկէ՛ք, ըսաւ, երթանք, նոր բան պատմեմ ձեզի,
Զոր երբէք չէք լսած.
Մարդիկ կանայակերպ և մարդակերպ կիներ,
Տարաժամ ծերացած հըրէշ մանկամարդեր,
Եւ ծերք տղայացած.

«Տեսայ ես մեծաշէն պալատներ վառաւոր,
Որոց մէջ մեծատուն կը հանդչի մեծազօր,
Անյագուրդ յափրացած,
Մինչեւ թշնամներու անդին խումբ բիւրաւոր
Զունի իւր անդամոց խըշտի դեռնատարած,
Եւ ոչ պատառ մի հայ.

«Տեսայ լարախաղներ կառքով օդապարիկ
Մինչեւ 'ի լուսնկայն երկնքու յաւակնած,
Եւ 'ի վար ընկեցիկ.

Տեսայ նաւաստիներ 'ի բեւեռս ընթացիկ,
Որք էին շընչասպառ ժայռէ 'ի տար նետուած,
Հաշմանդամ եղկելիք.

«Տեսայ մեքենաներ բիւր ձիերու ուժով,
Վիթխարի գործիքներ մըղուած շոգեշարժով.
Շատ լաւ, շատ դեղանի
Էր այս ամէն բաներ, բայց ոչ մի դըրական
Եւ կամ թէ գործնական տեսայ ատոնց մէջ բան,
Եւ ոչ մի ապրանի.

«Ի՞նչ պէտք են դարաւոր հընարիմացութեան
Եւ այն ինչ որ է լաւ այսօր և շահեկան,
Անշահ է վաղօրեան.
Ի՞նչ օգուտ է դըրոյ որք միւնոյն իմաստ
Կըրկնեն հանապազօր, և ոչ մի բան ըզգաստ
Զամբեն .քան ըվեռայն.

«Խըղճալի մարդկութիւն, անզօր և ապիկար.
Պէ՞տք է որ նա լինի աւելի խելագար
Քան թէ խկապէս չար.
Կ'արժէ՞ որ վատնէ հոս իր բոլոր զօրութիւն,
Եւ այսօր վայելած վաղանցուկ հաճութիւն
Վաղուան թոռլու համար,

«Լսա՛ .քու վերարկուն. — Կ'աղաւեղի այն վաղիւ,
Դարձեալ լսա՛, — Նորէն կը ճենճռոտի կեղտիւ,
Կ'ըլայ պատառ պատառ,

Միթէ՞ լոկ կապայի լուացուքիեան համար
Մարդիկ մենաշընորհ բաւական յայս աշխարհ
Իբրեւ լուացարար։

«Միթէ չէ՞ լաւագոյն ձրգեալ որ գլլորէ
Երկրագունաը իրեն շրջան օր քան օրէ,
Եւ փառք տալ առ Պուտա,
Որ ուսուց մեզ անուշ քունոյ անյուշութիւն,
Արտացքս թրմրութիւն և մարմնոյ թուլութիւն
Զոր Նիրուանան կուտայ . . .»

ՎԱՐԴԱՎԱՌ

Ես այս սուտ աշխարհէ դարձուցի երես,
Վըշտահար 'ի մարդոց, դիմեցի 'ի վարդ,
Թերեւս լաւագոյն է վարդ քան ըզմարդ.
Ըսի թէ թո՛ղ խոյսիմ անոր վուշով ես։

Նրատայ անոր քովիկ լալով ողբալով.
Հարցուց թէ. «Ի՞նչ ունիս, ով թըշուառական.
Արդեօք ո՞հ ես եղած սիրոյ, հաւատալով,
Ու կուգաս դանդատիլ, ախտակին նըման.

«Պատմէ՛ ինծի հոգւոյդ ցաւը դառնագէտ.
Մի՞ արդեօք խոցոտեց զայն անդութ կերպիւ
Սիրելւոյ դեղատանձ ձեռքն մի խայթիւ,
Երբ դուն կը պաշտէիր զայն բոլոր սրտէդ.»

Ըսի թէ. «Ով վարդիկ, ես շատ սիրեցի,
Շատ այլ ապաշեցի սիրուհւոյն աղնիւ,

Ահիւ և դողութեամբ, ողոքոյ բանիւ.
Բայց նա մնաթիկ չբրաւ իմ ողբ ու լայիւ»

Այսպէս խօսեցայ ես վարդին առաջի.
«Դուն չես դիտեր, ըսաւ, սիրտը կանացի
Մինթէ վա՞ւ է թէ սառ, ինքն այլ չըդիտէ
Յաճախ թէ կը սիրէ և կամ թէ կ՚ատէ։

«Պատմեմ քեզի մի վէպ ըստուգապատում,
Ըրէ՛ մնաօք ճըշդիւ խօսքիս հետեւում.
Խորհըրդաւոր է բան, որոյ դիւցազունք
Են ինքըն Անահիտ և Վարդգէս մանուկ.

«Դիցուհին փառապանծ և ամբարհաւաճ
Սիրեց ըզպատանին սիրով անսահման.
Օր մ՚այլ ատուածուհին այն յոյժ քըմահաճ
Մերժեց պատանեկին զոհն հարիւրեզեան.

«Ցուսաբեկ և դըժբաղդ լըքուածը Վարդգէս
Այն ատեն եկաւ ի՞նչ ըրաւ, գիտե՞ս.
Ինձմէ մի փուշ առաւ ու սիրտը ծակեց
Եւ վազած արիւնէն իմ վերայ սըրսկեց։

«Ես էի ՝ի վարուց անոր ընկերակ,
Շուշանի պէս մաքուր անարատ հոգակ,
Յանկարծ եղայ ճըշդիւ ինչ որ եմ հիմակ.
Բոլոր պէս վառվըռուն և կարմիրորակ։

«Տարաւ առատութեամբ նըւիրեց այսպէս
Զիս 'ի զոհ դիցուհւոյն, որ այնու 'ի տես
Հաճեցաւ, գըթացաւ դըշխոյն վեհապառ,
Եւ կարգեց յիշատակ ըզսոճն Վարդավառ...

«Գընա՛ այնպէս արա՛ դու այլ, ա՛ռ այս փուշ,
Փուշը սիրտըդ մըխէ՛, արեամբ լեցո՛ւր կուժ.
Որքան անդութ լինի կին և խուժադուժ,
Նա չէ կարող լինել յայնժամ ուխտադրուժ»։

Խորհուրդը խընդութեամբ վարդին լսեցի,
Վիրաց սիրտս առջև սիրելւոյս բացի.
Գիտաց թէ չեն լսար արիւնը արեամբ,
Այլ վէրքը կը լսայ դորով գըթութեամբ։

ԾԱՌ ԳԻՏՈՒԹԵԱՆ

Ծառը գիտութեան, զոր գըրեց Մովսէս,
Հոգեբանական մի դաս է այնպէս,
Որուն նըմանը ոչ մի Սոփեստէս
Կըրցաւ հանճարել, ոչ իսկ Մենիպպէս։

Պըտուղը ծառին էր կարմիր խընձոր
Որ տերեւոց մէջ կիսով ծածկըւած,
Իբրեւ պատանի մի յոյժ ամօթխած,
Կաթեցուց շողիք շըրթնէն նախամօր.

Ու կերաւ անկէ ու կերցուց մեր Հօր.
Ո՜վ միրդ պատուական և անուշահամ...
Մէկ մ՚ալ տեսնեն որ էին մերկանդամ.
Ապուշ մընացին խըպնած կորակոր...

Պըտուղն այն աղուր այնքան դառնահամ
Եւ դըժուարամարս եղաւ չարաչար,

Որ այնուհետեւ Եւան ու Ադամ
Մընացին յաւէտ ըստամոքսահար։

Ցեռոյ պըտուղն այն մի շատ դեր խաղայ.
Նա մըտաւ մըրցմանց մէջ ադալանդեան,
Ցեռոյ յարոյց վէճ տարաձայնութեան
Մէջ աստուածներու Պեղեայ հարսանեաց։

Ցեռոյ 'ի պարտէզ Երեկոյնական,
Պաշտած խընամօք երեք քոյրերէ,
Նաև պահպանուած չորս վիշապներէ,
Մանակից եղեւ երկոց Հերակլեան։

Գիտե՞ս միթէ երբ պըտուղը ծառին
Է ախորժական մարդկային քըմաց,
Նաև անվընաս է ըստամոքսին,
Որ հըզօրագոյն է բըռնաւորաց.

Նայէ՛ որ հօր պէս դու զայն խընամես,
Ըզգոյշ լե՛ր, չըլլայ որ ձեռք դըպցընես,
Մանաւանդ չըլլայ թէ եղես ուտես.
Զիմաստ առակիս վա՜յ թէ չըգիտես...

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԽԻԿԱՐԻ

Խօսքը է իմաստունին.
«Օրը է անօրինին.
Հասաւը բարակ մէկ գին է,
Վերն Աստուած, վար ոսկին է։
Աշխարհս է մի ծածկագիր,
Եթէ կըրնաս հասկըցի՛ր,
Գունա մի կըլոր 'է գըլոր,
Տակը գայոլին վա՛յ որ։
Դըմակ մի կայ շատ պարարտ,
Աւիւծին քերանն է այդ.
Երնե՛կ թէ խըլել կարես,
Սա ուտես, նա չուտէ քեզ։
Վանէ՛ չարը դըռնէն դուրս,
Տանիքէն կը մըտնէ ներս.
Եկո՛ւ վառէ՛ մոմ ու տե՛ս
Մարդկային սըրտին խորը.
Ինչպէս որ Դիոգինէս
Փորձ ըրաւ լապտերովը։

Խենդն ըսաւ, խելքը հաւատաց
Հազարումէկ առեղծուած . . .
Երկրիս վրայ չէ ինչ նոր
Նոյ նահապետէն մինչ որ.
Բու պատմութիւնդ է իմին,
Իմինըս դրրացին։
Մարդկութիւնն է ալեւոր,
Ցընդած, փրատուած, դարաւոր.
Նա յԵդեմայ ծործորը,
Խաչաւ կարմիր խընձորը,
Սակայն մինաց ծոծրակը,
Ինկաւ ինք իր ծուղակը.
Նմանեցաւ մի էակ
Բաւուդիւ շատ այլանդակ . . .

Մէկ մի կար, մէկ մի չիկար,
Մէկ խելք կար, մէկ Խիկար.
Ո՞րն է լաւ, ո՞րը վատթար . . .
Հակրցօղին բարև տա՛ր . . .

ԵՐԿՆԱՑԻՆ ՎԻՃԱԿ

Վիճակ վիճակի մէջ է.
Ամէնը մէկ ոչինչ է,
Կեանքը մի սուտ ու վէճ է,
Կաղ ու կլուխ անվերջ է.
Մարդ մարդու քահանայ չէ,
Կէս գիշերին ժամ կանչէ։

Հանէ՛, աղջիկս, հանէ՛.
Սուտկա վիճակ մըն է.
Աշխարքիս ինչքը է փոխ,
Հոն կը մընայ փառքն ու փոշ.
Բանն ան է որ յաջողիս,
Ճերմակը դուրս, ուրը ներսուս

Վիճակ, վիճակ վրճիտ է,
Աղքատութիւն ոճիր է.
Հարուստը սարէ՝ի դար
Կը քըշէ կառքն անվրիժար.

Աղքատը 'ի հարթ ուղի
Շիտակ ճամբէն կը շեղի։

Հանէ՛, աղջիկըս, հանէ՛,
Ասիկա էդի մըն է,
Ուր որ կը բռնի մէկ տեղ
Խաղողը, ոչխը ու սեխ,
Ուր տանձը ծառէն չի,ցնար
Կոթը վեր ու միրգը վար։

Վիճակ, վիճակ է հարկինք.
Ասիկայ է մէկ հարսնիք,
Ուր որ հարսը ու փեսան
Պլտակ ոսկի կը ,յուսան.
Ու կը փաթթեն հիւս 'ի հիւս
Գլխու ցաւ և պատիր ,յոյս։

Հանէ՛, զաւակըս, հանէ՛.
Ասիկա պանդոկ մի է,
Ուր որ կ'երթան ու կուգան
Պանդուխտն և օտարականն.
Վա՛յն 'ի վերայ չըհասին,
Խօսքն է կանուխ եղածին։

Վիճակ, վիճակ բարի է,
Զարին դործը չարի է.
Կամ ան է որ կ'ըսեն դէշ,
Կամ ան է որ կ'ըսեն էշ.

Սոխին անուշը չըլլար,
Կընոջ ապուշը չըլլար։

Կինն է դուռտըր Եւայի,
Նա ծառն ի վեր կը նայի.
Արգիլեալ պըտղոյն համը
Մընաց անոր բերանը,
Թէպէտ խակ էր և թըթու...
Հակըցո՛ւր նօթի մարդու...

Հերիք է որ պըտուղ էր,
Զար սատանան ալ գովեր...
Մխանգամ որ զայն խածաւ
Իւր խաղբութիւն իմացաւ,
Եւ ուզեց միօրինակ
Էրիկն ընել խայտառակ։

Էրիկ մարդը ընածին
Թըմբըութեամբ է վարակած.
Նա իր կընոջ քըլայէն
Կըպած կը փընտրուէ հայ...
Երեք բան պէտք է մարդուն.
Հայ, Չուր և արքայութիւն...

Այս առակը հընուց է.
Ո՞վ սերմանեց ո՞վ հընձէ.
Ո՞վ կըրնայ ըսել գոնէ
Բարին ու չարը ո՞րն է.

Ի՞նչ է իմաստն այս կեանքիս,
Ի՞նչ խորհուրդ այս աշխարքիս։

Ամանկ եկաւ ու կ'երթայ.
Ո՛ր ը կուլայ, ո՛ր խընդայ.
Կեանքն է դըրախտ մ'ուր Ադամ
Մըտաւ ելաւ մերկանդամ,
Եւ ուր խելօք մէկն ա՛ն է
Որ ոչ մըտնէ ոչ ելնէ։

ԱՌԵՂԾ

Երանի՜ որուն ականջ ձայնի խրատու լսէ.
Ի՞նչ օգուտ խուլին խորհուրդ, նա ձոյն 'ի վեր կը
վազէ.
Խրատ սարը կը հարթէ, ուղին մէջտեղէն կիսէ.
Հարցընողը կը գտնէ ճամբան, կ'ըսէ առակը։

Ճարը կը վանէ չարը, անճարը կ'ուտէ բանջար,
Կը մընայ նօթի ծարու ով չունի ուշ և հանճար.
Կամքը կը շինէ կեանքը, բաղդը է ուտա չարաչար.
Երկինքն է պարզամիտաց, խորագէտին աշխարքը։

Առեղծ մի կայ շատ խրթին, հասկցի՛ ր եթէ կրնաս.
Ի՞նչ է այն զոր կոչեն մարդ, խորհուրդ խորին և
անհաս,
Արարած զարմանալի, ոչ կատարեալ, ոչ պակաս,
Վիժած որուն ձիրքը է լոկ մտաց զառանցանքը։

Նա չէ գիտուն որ գիտէ զաշխարհի իմաստութիւն.
Ով գիտէ չըգիտելը նա՛ է ճըշմարտիւ գիտուն.
Համեստ ըստորնութեան մէջ է ըստոյգ երանութիւն.
Ով խորշի նենգութենէ նա է բուն խորամանկը.

Անմըտութեան է արդիւնք անյապ զօշաքաղութիւն,
Հաճոյից սովորական ելքը է տրհաճութիւն.
Կընամարդի մեղկութեան, ապիկար անկարութիւն.
Կինը է յաճախ մի բեռ հեծած մարդուն քամակը։

Այս է գաղանիք զոր ամէն մարդ պէտք է որ լաւ գիտայ,
Հանգիստ ապրելու համար այս աշխարհի վերայ.
«Մէկ քիչ անտարբերութիւն և շատ մ՚այլ համբերութիւն.»
Նա անքոյթ 'ի ծով կենայ կը քըշէ իւր նաւակը։

Գըլուխ ամենայն բանի է ըզգուշաւորութիւն
Մեծ քան զամէն զըրկանք ա՛յն է զոր կընէ մարդ մարդուն.
Զբաւական և չըլըսել է մեծ առաքինութիւն,
Մեծ ևս է այն որ լեզուին դընէ երաստանակը։

Ի՞նչ շահ անիրնայ տանջել մէկ շունչ եղնելու հոգին.
Թէ հազար աշխատ լինիս խօսքը է ճակատագրին.
Գանդատը է տրխմարին, յամառութիւն յիմարին,
Յաջողութեան գաղտնիքը է անդրդուելի կամքը։

Երէ՛ մոմ, վառէ՛ ճրագ, մարդու սիրտը մի՛ երեր.
Գոռալով գարուն չի դար, ոչ պահքով կ՚երթայ ձրմեռ.
Սիրէ՛ հարթ ճանապարհը, բարձ ու բարձունք մի՛ սիրեր.
Սարը կը պատեն տարեր, գահավէժներ յատակը։

Կեանքը է մի գօտեմարտ, կրրկէսի խաղ, կամ տատրինճ.
Վա՛յ անոր որ յաղթուի, կեցցէ՛ յաղթողը կըտրիճ.
Բայց 'ի զուր է զօրութիւն, հանճարը և ամէն ինչ,
Եթէ բաղդը չէ գրծած ճակտին վրայ իւր վարկը։

Մութը կը պատէ ամէն արարքը արարչութեան,
Ներկայն է անպատոյգ ինչ, ապագայն անհասկան.
Ո՞վ կրնայ պատռել ըղքօղ յաւիտենականութեան.
Ամէն գաղտնիք են ծածկած այն վարագուրին տակը։

Աշխարհքը, ո՛վ սիրելի, գիտցի՛ր թէ աշխատանք է.
Ամէնը տառապանք է, ամէնը աշխատանք է,
Խելացի մարդուն համար, ամէնը ըզբօսանք է.
Պատանքը կը պարտըկէ այս աշխարհի պատրանքը...

ՊԱՌԱԻ ԵՒ ՍԱՏԱՆԱՑ

Երբ կ'լսեն թէ կռուիս կը ծագէ կիներէն,
Ես չեմ լսեր այս կամ ոչ թեթեւօրէն.
Խընդիրն է շատ խրթին և առակ է բարակ.
Գիտեմ թէ շատ ապք է կընոջ խելապատակ,
Թէ յաճախ կը ծագէ մի կայծէ մեծ կրակ,
Յաճախ անվերջ կռուոյ պատճառ է մի մուճակ.

Երբեմն սատանայ կեցաւ մերձ 'ի հընոց,
Ուր կ'երէին կոճեղք վայրի խրեու ըզբոց.
Բաղնիք մի էր մօտիկ, ուրկէ յանկարծ ելաւ
Բաղնեպանը, ջուրուկ մի կրնիկ շատ պատռաւ,
Կռռընած դողդոջուն ձեռքով ցուպին վրան,
Եկած էր քընեալ հընոցը ու կամ թան։
Տեսաւ ըզԲելիար և խոկոյն զայն ճանչցաւ.
—Բարո՛վ ես, բարեկամ, ի՞նչ ես կեցեր, ըսաւ,
Հա՛ պա եկո՛ւր հանէ՛, ուսշտ մը ջուր պարպուէ՛,
Հոգուդ մ'ըներ, ղենջակ քու պոչդ կը ծածկէ։

— Գընա՛, պատասխանեց դեռը, վրդովկ պառաւ.
Կարծես թէ քեզի պէս բանը գործը հատաւ.
Ես եկայ այլ և կին մի իրաւ ձըգելու,
Ինչպէս որ կը վայլէ հարս ու վերանելու.
Կինը հիմա մըտաւ հոս 'ի լուայարան,
Էրիկը կը խաղայ սադրինճ 'ի պրճարան.
Ատանք ոչ վէճ դիտեն, ոչ կրուիւ և ոչ կապ.
Բանի յարուցանեմ փորձանքներու յորձանք,
Բանի որ հալածեմ, ատոնց հարկինք կ'ըլլայ.
Այս ի՞նչ բան է, մարիկ, ատանկ բան չի տեսայ։

— Իրաւ որ, Բելիար, դուն ես մի խելագար.
Արդեօք այս պարզ գործին պէ՞տք է մի շատ
հանճար.
Այս տեղը չէ դըժոխք, այլ աշխարհք է դիտե՞ս,
Ով որ հոս չի կըրթի, դուն անոր խելը տե՛ս։
Զոյգ մի կարմիր մուճակ նոր թէ ինծի կուտաս,
Շատ չի քըշեր տեսնես որ, յեղաս բաղանեաց,
Ընեմ շուն և կատու կատղած անհաշտելի
Քու օրինաց ըմբոստ այդ զոյգը տատրակի։

Սատանան խոտայաւ ու երդմամբ հատատեց.
Յայնժամ կախարդ տուաւ իւր զենջակը. պատեց,
Գարշապարը վերցուց ու բաղնիքը մըտաւ,
Հարսին կոշիկն առաւ, պրճարանը գընաց,
Սուրճ մը խըմեց, բերած կոշիկները փուքթաց
Էրկան մուճակներուն հետ փոխեց ու փոխաւ.

Երբոր իւրաքանչիւր առն երթալու եղաւ,
Իւրաքանչիւր բընիկ կոշիկը չի գըտաւ.
Հարկադրեցաւ բոպիկ գընաց առնը ինկաւ.
Վայնասուն սոսկալի այն ատենը փըրթաւ.
—Կոշիկըս, կին ըսաւ, բաղնիքէն տարեր ես.
—Մի թէ ձեր բաղնիքը այր մարդ կը մըտնէ՞ ներս.
—Դո՞ւ միայն կաս.—Դուն ալ լիրբ կընկան մէկը ես...
Ու կըռիւը մեծցաւ, և իրարու երես
Եւ իրարու գըլուխ կըռիւեցին, պատռեցին,
Ըրին արիւնըլայ և հաշտութիւն չըրին։

—Բարո՛վ ես, ապայէլ, հապա՛ իմ վարձքս տո՛ւր.
—Բարին կաթէ՞ վըրադ, ցուպըդ ինձ երկընցո՛ւր.
Ահա՛ կոշիկներըդ գըրի ցուպին վըրայ.
Ինձի մի՛ մօտենար, կին դու, քեզմէ վախցայ..։

ՄԱՄՈՒՍ ԳԱՆԳԱՏԸ

Մեր առեղովը, որդեակ,
Հիմակուան պէս չէր աշխարհք.
Տըղան ամօթ պատկառանք
Ու մեծերու դիտէր յարգ.
Տանը մէջ հացն էր առատ,
Ու շուկան ծուխ անհամար.
Անթիւ ոսկի ու արծաթ
Ճամբուն վըրայ կը վըխտար.
Աստուծոյ վախն էր յարգի.
Երնեկ այն ժամանակի։

Որդի՛,
Վըրադ բարի։

Հիմա բան մըն է կ՚երթայ,
Թո՛ղ առը-որ երթայ բարով.
Հասարը բարակ մէկ դընով,
Հարցընող մէկը չըկայ.
Սղախինը է խաթուն,

Հարսը կեսուրէն դիտուն.
Խօսքը ինկաւ մինչ ոտրան,
Գլուխ վերցուց երախան.
Օրը է նորելուկի.
Ա՛ւ ի՞նչ ձուն է որ, հոգի։
Ցըրա՛ւ,
Վա՛յն 'ի վերա։

Հընուց մանչը աղջկան.
Չէր տեսներ քըթին ծայրը.
Աղջիկտես կ'երթար մայրը
Հետ խընամուցի կընկան.
Եթէ հաւնէր աղջիկը,
Մէկդի կ'առնէր մայրիկը,
Կը խօսէր հետը ծածուկ.
«Ասուծով կ'ուզեմ, քուրիկ,
Զաւակըդ զաւկիս ընկեր»,
Ան ալ «Ողջ եղիր», կ'ըսէր։
Որդի՛,
Վերտ բարի։

Հարսնիքը կը հանդերձէր
Ուրախ զըարթի վառաւոր.
Երեք օր երեք դիշեր
Կը ժողվուէր հարսնեւոր.
Զեղուն առատ կերուխուտ
Ու կը տիրէր հոն խընդուտ.

Հարսը փեսին կուտային
Ու ոսկի կը սեղային.
Հարսը տալով աջ կուտար,
Հետը կուլար ու կ'երթար.
Տըղա՛ս,
Վայն 'ի վըրաս։

Այսօր արձակ հաւնարձակ
Կ'երթայ կըտրիճը հարկինք.
Ամէն կողմ օղակ օղակ
Թեւ թեւի մանչ ու աղջիկ
Ժուռ կուգան, խանարհելով
Սիրեմը պարտադայով.
Թէ կարգըին վերջապէս,
Լուծը կ'ըլայ մէկուկէս.
Քանի կ'երթայ վեր ու վար
Թիւը կ'ըլայ անհամար.
Որդի՛,
Վըրադ բարի։

Աշխարքէս խիպը վերցաւ,
Ոչ համը մընաց ոչ հոտ.
Վարձկանը եկաւ տարաւ
Հոգին հետը նաև հօտ.
Լըսացին տուան ու իրաւ
Մէկ ջուր մաքուրն ու ազատ.
Խըրատը եղաւ անարգ,

Պառաւի բանդագուշանք.
Եթէ ասանկ որ երթայ
Տէրը թող մեզի դրթա՞յ։
Տըղա՛ս,
Վայն 'ի վերան։

Խօսքիս հետեւանքն է որ
Եղաւ կեանքը մի խոնջանք,
Խոնջանքը եղաւ ասնջանք
Մրատց մարդկան կորակոր.
Զիկայ ողջախոհութիւն,
Եւ ոչ ինչ վրատահութիւն.
Ոչ այր մարդու, ոչ կընոջ։
Կինը եղաւ համբարու,
Եւ այրը արիւնարբու.
Վերցաւ շընորհքը Տիրոջ։
Որդի,
Տէրն ողորմի։

Հիմա, թէ մըտիկ կ'ընես,
Տըղա՛ս, մէկ խըրատ ասամ .քեզ.
Հեռու կեցի՛ր ընկերէ,
Նա մանաւանդ կիներէ.
Ընկերն է .քու թըշնամի,
Կինը Եւան կըլմանի.
Ընկերը .քեզ կը խաբէ,
Կինը... քեզ, է. քէ, խըփէ՛...

Լաւ է մընալ ամուրի
Քան շըփուիլ մուխ ու մուրի...
Տըղա՛ս,
Բարով մընաս։

ՆՈՂԿԱՆՔ

Ողջամիտ կեցի՛ր, քաղաք, կ՚երթամ մեկնիմ ի քաց
Քու սահմանէդ, ուր ցաւ, նոգկանք ու ձանձրու-
թիւն
Կը տիրեն շարաչար և անիրաւութիւն.
Կ՚երթամ դէպ ուր ոտից մարդկան հետք չեն
կոխուած։

Մի միայն շահը է, որ կը դառնան առանց.ք
Անյարգ և անիմաստ, յարաշարժ անիւեր.
Մի միայն ևաբ չէ՞ որ կը վառէ հոգիդ,
Եւ բրնաբարութիւն օրինացեալ պատրանք...

Մինա՛ս քարեաւ, քաղաք, յորմէ տարահալած
Խարտեաշ թափառականն են համեստն ու խնամտ.
Ուր են փառաւորեալ արտութիւնը ու սատ,
Եւ ուր այր անբղդամ կ՚ըսէ. չկա՛յ Աստուած։

Ուր բարձրացուց զՕձեալն 'ի խաչ, անպատուհաս,
Եւ անպարտ արձակեց ըղհէնըն Բարաբբաս,
Ուր Արդարը բանտի մէջ տրուաւ գըլխատել,
Եւ կառափն 'ի ձեռին Չարուկը պար բըռնել...

«ՈՒԼՈՒՆՔ ՇԱՄԻՐԱՄԱՅ Ի ԾՈՎ»

Ուլունք դըշխային 'ի ծով,
Ուլունք և պըչրանք յուռթով,
Ուլունք, օղակ և մանեակ
Յեռեալ ոսկւով մարդըրտով,
Եւ անդին քառամանեակ
Ականակուռ կապիճով։
Ուլունք դըշխային 'ի ծով,
Ուլունք, յուռութք և բըժժանք.

Ուլունք դըշխային 'ի ծով
Ուռկանք էին և դարանք,
Զորըս դըշխոյն խորամանդ,
Մաշած մոլի տըռփանքով,
Կը լարէր կախարդանքով.
Կ'ընէր զԱրայն առեւանգ։
Ուլունք պաղպաջունք 'ի ծով,
Ուլունք, յուռութք և խաբկանք.

Ալիք վըրվրադէղ 'ի ծով
Անելեցին դեղմնորակ
Ու տարան մինչեւ յատակ
Ուլունքը հանդերձ յուռթով.
Կուլ տըւին զանոնք ժըժմակք,
Ծովու ահաւոր նըհանգք.
Ուլունք խաբուսիկ 'ի ծով,
Ուլունք, հըմայք և պըչրանք.

Ուլունք դըշխային 'ի ծով
Եղեն ձըկանց ուտելիք.
Ձըկունք այլ մոլեգնելով
Յուռթեցին ծովուն ալիք.
Եւ 'ի ծովէ 'ի չորս հով
Սըփռեցաւ ահեղ ուրով...
Ուլունք ոլորունք 'ի ծով,
Ուլունք և պատկանդարանք...

«ԱԻԱՂ ՓՈՌՍՑՍ ԱՆՑԱՒՈՐԻ»

Ես տեսայ վարդը վառ առաւօտեան
Համբարիւռ սրիռած բոյր անմահական,
Ես տեսայ հաստատ կոկոններ սիրուն
Բոլորած վարդին պլսակ ոսկուն։

Անոյշ ընդ երեկ, և ոչ հեռք կային
Ոչ կոկոններու, ոչ ոստոց դալար,
Վարդենին չորցած, վարդն էր դալկահար,
Թառմած, խորշմած, ինկած 'ի գետին։

Այր Լիբանան տեսայ ես առուն
Երկինք բարձրացած, ոստերով կանանչ,
Եւ քշած 'ի խոր արմատ հաստաքուն,
Որով կը սատէր մշրշկայ շառաչ...

Անցայ ընդ երէկ, բուն էր ջախջախած,
Ոտեր ու աերեւք գետինը փըռուած.
Յանժամ յիշեցի ես Արտաշիսի.
Բանն «Ամա՞ղ փառացըս անցաւորի»...

ԺՈՂՈՎՈՂ ԳԼ. Ա.

«Տանջանք հոգւոյ, գիտութիւնը
Ունայնութիւն ունայնութեան,
Կ'ասէ «ամէն է ընդունայն»
Սողոմոնին ժողովող:

«Ի՞նչ օգուտ է աշխատութեան
Արեգակին տակը մարդկան.
Ազգեր կը գան, ազգեր կ'երթան.
Իսկ երկիրը կայ յաւիտեան:

«Արեւ ամէն օր կը ծագէ,
Ամէն օր մարը կը մթանէ.
Հիւսիս հարաւ կը փըչեն հով.
Գետք կը հոսեն, չիլեռնար ծով:

«Ինչ որ եղած է այն է որ
Պիտի լինի, և ոչինչ նոր

Է արեւուն տակ, որ մեզմէ
Դարեր առաջ կատարուած է։

«Ես Սոլոմոն եղէ արքայ,
Եւ խընդրեցի զիմաստութիւն.
Ընդ ասուեղոք տակայն տեսայ
Ունայնութեանց ունայնութիւն։

«Խօսեցայ յանձն-իմ և ասի.
Թէ ունայն է գիտութիւնը.
Տեսայ թէ իմաստութիւնը
Տանջանք մտաց է և սրտի...»

Ո՞Վ ԳԻՏԷ

Ո՞վ է որ գիտէ
Բարին և չարը,
Մարդն ու աշխարհը,
Ո՞վ է որ գիտէ։

Ո՞վ է որ գիտէ
Թէ ի՞նչ է կեանքը,
Մահն ու վերկեանքը,
Ո՞վ է որ գիտէ։

Ի՞նչ խորհուրդ է որ
Մարդ ըլլայ տրկլոր,
Աղուշ և անարդ
Քան զամէն էակ։

Արդեօք չար մի դև
Փըչե՞ց աշխարհի,

Արհլամբն կամ սև
Սատանի շունչ մի...

Մի՞ արդեօք կատակ
Մակարդն է երկրի.
Արդեօք աւելի
Լա՞ւ է իւր յատակ...

Աւա՜ղ, չէ՛ աշխարհ
Ինչ որ մարդ կարծէ.
Իսկ թէ միւս աշխարհ
Ի՛նչ է, ո՞վ գիտէ...

Ա Ն Դ Ա Ր Ձ

Զըգիտցաւ երբէք մարդ երբը ապագային.
Կ'երթայ ուր կը տանի զինքը ճեռն Անդարձին,
Որ թաւալագլորը մէջ անվրայ անխընայ
Կը ճընշէ չընչաւոր և կը սեղմէ ըզնաւ։

Ինչպէս որ, հաստատեալ 'ի ըստեղէն մարմնոյ
Երկնաքար, մղրած և ոյժը նըւազած,
Կը գիմէ դարուվար 'ի ծոցոյ խիտ ամպոյ
Եւ կ'իյնայ 'ի գետին կըտոր կըտոր եղած,

Այսպէս մարդ լեռ ու ձոր կը կըտրէ ու կ'երթայ
Դէպ 'ի ուր չըգիտէ. պանդուխտ վրտարանդի,
Մըղած խարազանաւ Անդարձ ճակատագրի,
Ոգեսպառ ուղղոյն մէջ կ'իյնայ ու կը մընայ...

Ի՞նչ պիտ՝ ըլլան երկունք որոց համար այնքան
թափեց քրտունք անդուլ և խընամք ընդու-
նայն . . .
Մի՞ գուցէ Դանայեանց լեցուց տակառը ծակ . . .
Անդարձն է անողոք և մի անլոյծ առակ . . .

Թ Ա Ռ

Կը ձիւնէ երկին,
Կը թափեն ամպեր
Տեղ ու տարափներ
Վերայ ցամաքին.

Ոստաքանց ծառեր
Զինապատ հիւսքեր
Եւ արծաթայեռ
Կը կապեն փունջեր։

Փունջերուն վերեւ
Մի թրուչուն մոլար
Թրռաւ հեւ 'ի հեւ
Եւ չըգլտաւ թառ.

Ոչ մի փոքրիկ կուռ
Պըրծած փոթորկին

Սատէն, զոր 'ի բուտ
Տանէր ընկերին։

Դարձաւ թրուչնիկը
Դէպ 'ի ծառին բուն,
Ուր որ էր իր բոյն
Եւ իր ընկերը։

Ցուրտէն ընկերն այն
Կըտրըւած էր ատռ,
Եւ կարկած բերան,
Ակտո՜ւ, չընչաապառ։

Ընկերն ընկերին
Փարեցաւ, ճըչեց,
Ու բերան բերնին
Հոն շունչը փըչեց...

Երնէ՜կ սիրելեաց
Որ գըտնեն մի թառ,
Կամ անքոյթ դադար
Զուգակից կենաց...

ԻՆՔՆԱՍԷՐ

Ո՞վ է մարդը բարւոյ և չարին անըզգայ
Որ չէ միանգամայն անգութ և անըզգամ.
Ինքնասէր չըգիտէ ոչ ազգ, ոչ բարեկամ,
Ի՛ապրի իբրեւ թէ բաց իրմէ բան մը չըկայ...

Անձնապաշտին համար իւր անձն է իր Աստուած.
Զոր սիրտը չըկարէ սըրբել աչքի մը լաց.
Փոյթ չըներ թէ տեսնէ կըրակին մէջ մ'էյնող,
Աստուծը կամ կըծկած, կուզը և սապատող.

Հաւատք չի ընծայեր ոչ սուտ ոչ ճըշմարտին.
Ինքնասէր կը ցաւի վերայ այլասէրին.
Մարդասիրութիւն է խորհուրդ պարզամըտաց.
Միթէ կը զգա՞յ երբէք սանդը տուան հարուած։

Ինքնասիրին մլատայ, երկու բանէ 'ի զատ,
Մընացեալը է սուտ. եան ու իմ ինքնուրոյն.
Եթէ աշխարհ ամէն լինի աւեր և քանդ,
Փըլատակաց վըրայ կը շինէ իրեն տուն...

ՆԱՒՈՐԴ

Նաւորդ նաւակոծեալ 'ի մէջ կենաց ծովու,
Հոլովեցի նորա շրջանը ամենածիր,
Ընդդէմ ալիքներու մրրկելով անձանձիր,
Ընդդէմ յորձանքներու, ընդդէմ փորձանքներու։

Այսպէս տատանելով նաւեցի յուշիւ եւ,
Անցնելով 'ի միջէ սատակաշունչ հովերուն,
Պարզած առագաստով գալարուն երերուն,
Եւ անցայ գընացի նաւելով եւ այսպէս։

Զկկրցայաւ յաջողուած ընել աշքերուս չիլ,
Ոչ չարժանուն թիկունք դարձուցի դասալիք.
Թողուցի իմ նաւուն դար վար յուշիկ յուշիկ
Հովուն առջեւ իյնալ, և սահիլ ու անցնիլ.

Երանի՛ նաւորդին որ 'ի ծով իւր կենաց
Գիտաց նաւարկելու որպէս քաջ նաւատի,
Եւ ընթացքը ուղղել իրեն համեստ լաստի
Դէպ 'ի նաւահանգիստ եկեւեղական դաշտաց։

ՅԵՐԿՈՒԱՆՔ

Արարչութեան խորին խորհրդոց տիրական
Ո՞վ է մարդ որ պարծի խնայամուտ լինելու
Եւ կարդայ բընութեան միտքը հասցընելու.
Ո՞չ ապաքէն ամէնն է մեզ երկբայական...

Կանգոնով կը չափենք երկինքը ու երկիր,
Ծագայ 'ի ծագ ոչին կ'երթանք ,յսկան ,քըթթել.
Ափսո՜ս որ չըդիտենք պարզապէս որոշել
Ինչ որ մեր աչքին տակ տեսնենք ամէն իժիր։

Ո՞ր կարկինով մեղու կը չափէ իր ըլջիջ,
Ինչպէ՞ս ճուկը կ'ապրի 'ի ծով չի խեղդըւած,
Կամ կը թըռչի թըռչուն օդին մէջ վար չ'ինկած.
Հըրաշք անհասական չե՞ն մի այսպիսիք ինչ։

Եւ ո՞ւր է հանճարեղ վարպետ մի ոսոյնանկ
Կարող արտադրելու մի շերամի խողակ,

Եւ շարելու բարակ թելերը մանածոյ
Որոնք կ՚ելնեն կերպաս ոսկեհուռ բանածոյ . . .

Բընաւ մարդ չըգիտայ արդեօք ինչո՞ւ համար
Երկրիս վրայ եկաւ բուսաւ իբրեւ ըշտակ,
Թէ ի՞նչ է մերենայն այն շատ տարօրինակ
Զոր կ՚անուանեն մարմնոյ մեր կազմածը ճարտար.

Զոր մեծ հընարագէտն յարուցաւ Արարիչ,
Շարամանելով զայն ՚ի հոգւոյ և նիւթոյն,
Զոր չըգիտայն մեկնել Սոլոմոն կամ Նեւթըն,
Կամ՝ նըմանը չինել և ոչ մի ոսկերիչ։

Ո՞վ կըրնայ ըսելու իմաստը այս կենաց,
Եւ թէ ի՞նչ է մահը և ի՞նչ անմահութիւն.
Ո՞չ արդեօք սա տեսակ մ՚է հոգեփոխութիւն,
Զոր Մերկիսեդեկներ աւանդեցին Հընդկաց։

Եթէ երբէք տեսնես բարին հալածական,
Եւ չարը խընդութեան մէջ փառաց մեծարուած,
Գիտցի՛ր թէ երկնաւոր խորհուրդ է անթափանց,
Եւ դատաստան տարբեր դատաստան է մարդկան . . .

ԿԻՆ ԵՒ ԱՑՐ

Եթէ երբէք ըսեմ թէ կինն է մի բարկք
Որուն նըման չըկայ և ոչ մի արարած,
Թէ նորա սիրտը է մի փափուկ առեղծուած,
Զոր 'ի զուր կը չանան լուծելու այր մարդիք.

Եթէ երբէք ըսեմ թէ նա մի լուսաւոր
Զահ է կամ մի պայծառ աստղ ճաճանչաւոր,
Շող Աստղական գեղոյ որ 'ի վերայ արդեղ
Մահկանացուայ կ'իշխէ դըշխոյի պէս շքեղ.

Եթէ երբէք ըսեմ թէ այդ սիրտը կանանց
Յաճախագոյն անդունդ մի է խաւարչըտին,
Որուն մէջ մոլորեալք չարաչար կորընչին,
Եւ թէ յաճախ այդ վիհ գործ է նոյն իսկ արանց.

Եթէ երբէք լսեմ թէ նոյն չափով տրխեղծ
Են խորհուրդք կանացի որքան սիրան է անեղծ,
Ասէ՛ք թէ ո՞րք են սիրտ և խորհուրդ առնական
Որոնք լինին ամբիծ քան ըզկանացական . . .

ՍԿԵՊՏԻԿ

«Խօսքը մեր մէջ, Տէր Աստուած,
Ըստ երբեմն այր անզգամ,
Որքան խորհիմ և կամենամ,
Քու գոյութեան չեմ հասնուած .

«Այս ի՞նչ աշխարհ, ի՞նչ մարդկութիւն,
Մէկ իրարանց մի է կ՚երթայ .
Ոչ իրաւունք, ոչ օրէնք կայ,
Ամէնն է սուտ և նենգութիւն .

«Մէկը է կուշտ, միւսն անօթի
Կը տառապի գեռնի երես .
Մէկ ոսկորի համար, շան պէս,
Գլխուն կ՚ուտէ այր ընկերի .

«Իսկ դու, անխոյլդ հանգիստես,
Մեզ կը ծաղրես, լուռ մնալ կեցած .

Իրաւ որ, դու ի՞նչպէս կ'ուզես .
Որ Հաւատամ ես առ Աստուած»։

«Բանքդ են, քան Տէր Աստուած,
Իմաստակի, քարուքանք սրկար .
Արդարեւ կոյր և ապիկար
Է յերկուացողը մոլորած։

«Զառանցողին բանդ ապուշանք,
Անօրինին գործած զբրկանք,
Կամ անպատշաճ ծոյլը ի՞նչպէս
Կըրնան ասել թէ ոչ եմ ես։

«Համարէ՛ թէ չկայ Աստուած .
Բընութիւնը և կամ դիպուած,
Ինչպէս կ'ասէք, կըրնա՞ր միթէ
Ճանճ մ'ստեղծել իսկ յանկարծէ։

«Ոչինչ չեղեր 'ի յոչընչէ . . .
Ոչ մի արար ապարդիւն չ'է .
Ինչ որ կարծէ մարդ թէ է չար
Ցաճախ են բանք զոր չիմանար։»

ՄԵԾ ԵՒ ՓՈՔՐ

Ա.

Ծիրանւոյ մէջ ծընաւ, մեղր ու կաթով սընաւ,
Երբէք չըգիտաց ցաւ, ոչ կեղ և ոչ քաղցկեղ,
Բոլոր յաջողութիւն էր կեանքը, բոլոր գեղ,
Երբէք չըշըլացաւ աչքը կամ թէ լացաւ։

Բայց շատ աչքեր լացուց՝ և շատ երդիք քանդեց,
Իր տունը փառաւոր վերկանգնելու համար.
Շատ դիականց վրայ իրեն կառքը քըշեց
Նա, հասնելու համար նըպատակին՝ ի ծայր։

Ընթանչացաւ աշխարհ՝ ի տես այս մեծատան,
Եւ հրուշակեց ըզնա մեծ քան ըզՍողոմոն,
Մեծ քան ըզմեծ Հուրայն, քան զԱրամազդ Ամոն,
Եւ այս փառք տեւեցին մինչեւ՝ ի գերեզման.

Հոն, այս ճոխ դանձերու տակ երբեմն ընկճուած
Բեռնակիր, կամ պահակ ոսկիներու պարկաց,

Իւր հեռը, փոխանակ փողերուն ժանգոտած,
Խուրձ տարաւ նըզովից 'ի փոսն ուր էր պառկած։

Բ.

Ոչ սընոտի փառք ունքացեալ մեծատուն
Եւ ոչ կեղծուպատիր գերիմաստ իմաստուն,
Փոքրոյն հանդիսացաւ մեծ, այգուոյն տաշտաւոր
Բարունակ գիտութեան, տրեկ ոկուզաւոր.

Նա խուզարկեց կոր գիծն ու քառակուսութիւն,
Եւ ըզդայարանաց վեցեակին գոյութիւն,
Գունդին օդապարկի ղեկին անշեղութիւն,
Մինչ 'ի քացարձակին անհուն գիտակցութիւն.

Եւ տակաւին ինչ՞ ի՛ որոճար ու ի՛ երկնէր,
Երկունք գերաշխարհիկ, երբ նախանձն և հեռ
Յանիրաւի քաղեց ու կեանքը կըրճատեց...
Սրդարութիւն յայնժամ նըմա կոմոդ կանգնեց։

Մի միայն 'ի մահու արդար է դատաստան.
Պէտք է որ ճոխն իշխէ 'ի կեանքս իբրեւ մեծ,
Պէտք է որ հանճարեղն ապրի զերիզ փոքր՛ ցեց.
Եւ պէտք է որ դատէ զամէնը դերեզման...

ԱՄԱՆՈՐ

Զայն խընդութեան,
Զայն ցընծութեան
Աւետաւոր
Կը բերէ նոր
Մեղ Ամանոր
Երանաւոր.

Ոտեր հասկին
Նոր ցորենին,
Զոր կ'ընծայեն,
Ինձ յուշ կ'ընեն
Զայն զոր ընծայ
Դից Ոստերևայ

Հրատ կ'ընէր.
Կամ ըզնընէր

Արմաւենւոյ,
Զոր Արմաւիր
Կ՚ընծայէր իր
Մայր դիցուհւոյ,

Այսպէս երգով.
«Ո՞վ տար ինձի
Ծուխ ծխանի
Նաւասարդի
Փողոյ ձայնով
Եւ թմբկի».

Երբ ես յիշեմ
Ամանորներ
Բիւրաւորներ,
Որք են անցեր,
Իբրեւ ըսաւեր,
Ես կը հեծեմ,

Ու կ՚երթամ հետ
Ժամանակին,
Զինչ թիթեռնիկ
Շուրջ ճրագին,
Ուր ընկեցիկ
Կ՚ելլայ անհետ...

ԱՆԿՈՒՄ

Անկումը չարաչար զոր նախահայրն Ադամ
Եւ նախամայր Եւա դ-ըրախտին մէջ ըրին,
Հետեւանք հետեւելոյ Տեառն Հըրամանին
Անյապ ճաշակելով ըղպըտուղն համադամ,
Մահացու վիճակին պատճառ եղաւ անկման
Յոր 'ի վերուստ 'ի վայր ինկաւ ազգը մարդկան։

Տեառ մերկիմաստակ Պուտայն Սաքեամանի
Որ այդ անկումը էր ճակատագրական,
Եւ ըսաւ. «Ուրիշ ճար չկայ մեզ փրկութեան
Բայց թէ բուն 'ի հիմանց ընել արմատախիլ,
Վանելով յերեսայ երկրի յարատեւման
Նիրվանայի ըղմեր սերունդը վանդաքի.

«Ոչինչը մի միայն մի պաշտօն հաշտարար
Կարող է կատարել ընդդէմ չար արկածին,
Զոր յարոյց սատանայ առ մեզ, ոդին այն չար
Եւ անհաշտ թըշնամի սեռի մեր մարդկային.

Ի՞նչ օգուտ է ապրիլ քանի որ կայ մեռնիլ.
Միթէ չէ՞ լաւագոյն երբէք չի ծընանիլ։»

Իմաստակը յաւել. «Ինչ որ է ամէն ինչ
Լոկ տեսիլ է աչաց, այլ իսկապէս ոչինչ.
Ո՞վ է մարդ որ իրօք ատեաց վրատհանայ.
Միթէ այսօրուընէ վազուան հետք կը մընա՞յ.
Անկումը կը սպառնայ ըզբոլոր մարդկութիւն.
Թերեւըս յոչինչն է ըստուգիւ փրկութիւն.»

Եղաւ որ Կարապետ Յովհաննէսը եկաւ,
Դուռաց անապատէ, քարոզեց և ըսաւ.
«Հասած է աշխարհի ժամը կատարածի,
Ելէ՛ք ապաշխարել կենաց մեռնակեացի...
Ափսո՛ս, Կարապետին քարոզը փրկաւէտ
Մընաց ձայն բարբառոյ անապատի անհետ։

Հուսկ ուրեմն Յոհաննէս, սիրականը Փրկչին,
Աւետարանեց Բանն որ էր 'ի սկզբանէ,
Յայտնեց ըզդազանին առակը և Նեռին,
Որ զաշխարհ ամենայն պիտի ապականէ...
Յայնժամ ըզդասացած Մանազք ապաշխարող,
Կանգնեցին ճըգնութեամբ 'ի Թեբայիդ կոթող...

ՊՏՈՒՂ ԾԱՌՈՑՆ

Պըտուղ անուշ,
Խընձոր կամ նուշ,
Որ պահէ յուշ
Համբ բերնի,

Սէրն է. տենչանք,
Մըտաց պատրանք,
Սըրտի տանջանք
Անտանելի։

Սէրը սըրտէ
Սուրբ և սերտ է.
Թէ ոչ, ուտ է
Անհաւատալի.

Պըտուղ շքեղ,
Բայց որդ մէջտեղ

Կըրծէ, ու կեղ
Կըլայ սըրտի։

Օղի աղբուր,
Բայց, իրաւ որ,
Հիւթ թիւնաւոր
Արբեցօղի.

Պըտուղ Ծառոյն
Զար ու քարւոյն
Սէրն է, հոգւոյն
Սերմանողի...

ՏԱՍՆԱՂԻ

Նա մի պատանի էր չքնաղական,
Պանդուխտ, անտէրունչ և թափառական.
Մի միայն ընկեր կենաց այն տըղի
Էր եղերերգու քընար տատնաղի։

Նա քաղցրանըւագ ձայնիւ տըխրագեղած
Կ'երգէր դառնութիւնք ըրտին հեծութեանց,
Եւ եղերանաց հետ էր լսելի
Կըտրնաց աղու վինին տատնաղի։

Եղաւ որ լուեց երգը մի օրին,
Երգին հետ մէկտեղ ձայնը ջութակին.
Եւ յոգնած լքած մատունք տըղեկին
Չըլացան զարնել լարը տատնաղի։

Քանզի քընարին սըլաք սըլացաւ,
Կուրծի կուսական գընայ դիպեցաւ.
Պատանին լացաւ, կոյսը հիացաւ.
Եւ ջուխտակ երկնային հընչեց տամնաղի։

ԽՈՐՀՈՒՐԴ ՄԱՐԴԿԱՆ, ԿԱՄՔ ԱՍՏՈՒԾՈՑ

«Խորհուրդ մարդկան, կամք Աստուծոյ»
Առած հընուց է հայկական.
Արդար է Տեառըն դատաստան,
Եւ ապիկար միտք են մարդոյ։

«Գընա՛, ըստ երբեմըն Տէր
Առ Յովնան, գէտ և մարգարէ.
Նինուէացւոց ըրէ՛ պատուէր
Դառնալ 'ի չար ճանապարհէ.

«Ապա թէ ոչ, պիտի քանդեմ
Հիմնայատակ ես ըզնինէ,
Եւ անխընայ պիտի ջարդեմ
Մինչ այն որ «զորմով միզիցէ»։

Բայց մարգարէն վարանեցաւ.
Քանզի դիտէր Տէրը գըթած,

Վաղվաղակի հեծեալ 'ի նաւ
Դէպ 'ի թարախս փախչիլ փութայ։

Այլ Տէր հանեց հով սակալի
Որ կը սպառնար կորուստ նաւու...
Վիճակ ձրգեց հէք նաւատի,
Եւ ել վիճակն Յովնանու։

Յայնժամ, նաւուն 'ի փրկութիւն,
Արկին 'ի ծով զախտարը գէտ,
Եւ կուլ տուաւ զայն ձուկն մէջ,
Յետոյ փրսկեց յերդը ծովուն,

Ուր Յովնանու գլխուն վերեւ
Հովանաւոր բոյս հանեց Տէր։
Ապաստանած տունկին ներքեւ
Նինէացւոց պատգամաբեր

Խօսեցաւ. «Ա՛ռք Նինէացիք,
Տէրը ձեզի է սրբոսած,
Զի ձեր մեղաց չափը լցած,
Կը բողոքէ մինչեւ երկինք։

«Սակայն դրժած է Տէր Աստուած,
Նա չուզեր մահ մեղաւորի.
Ապաշխարել պէտք է սրտանց,
Արի՛ք, եկէ՛ք դուք մեղայի.

«Եւ կը ներէ ձեզի Նա որ
Ալեաց մէջէն հանեց կէտ ձուկ,
Եւ 'ի ցամաք հովանաւոր
Ինձ ապաստան տրաւ մի տունկ».

Նինուէացիք ախտարմոլի
Ակնածութեամբ լուան ձայնին,
Փուրձ ըզդեցան, կուրծ բախեցին
Ու ցանեցին մոխիր գլխի։

Սուգն ամբոխին թշուառական
Վերուստ տեսաւ Տէր, գթացաւ,
Նա փրկութեան գործիք ըրաւ
Շընորհած տունկն արիութեան,

Զոր ցամքեցուց յանկարծ խորշակ.
Ու երբ Յովնան ըզչարեցաւ,
«Դուն խընայել դիտես, ըսաւ
Տէրը նրմին, 'ի չոր բուսակ.

«Հապա ինչո՞ւ դատեցիր զիս
Երբ կամեցայ ես խընայել
Մեծ քաղաքին ուստի փախչել
Դու խորհեցար դէպ 'ի Թարսիս։

«Միթէ բիւրուց փրկութիւնը
Նոյնքան ինծի չէ՞ հաճելի

Որքան միակ մէկ մարդու մը . . .»
Խորհուրդ խորին անհասելի,

Խորհուրդ անճա՞ռ, կամք տէրունական,
Զոր իմանալ մարդ չըգիտաց,
Ձեռաւ հասու վերին դաղտնեաց,
Եւ ոչ 'ի փոր կիտին Յոգեան . . .

ՏՐՏՈՒՄ Է ԱՆՁՆ ԻՄ

Տըրտում է անձն իմ, տըրտում մինչեւ 'ի մահ
Երբ կը խորհիմ թէ մարդ ուսի՛ եկաւ յաշխարհ,
Եւ թէ ո՞ւր կ'երթայ նա, յորպիսի՞ օթեւան,
Ուսի՛ եկող չըկայ և ոչ դիտցողը զայն։

Տըրտում եմ տեսնելով ցաւերը մարդկութեան.
Ինչո՞ւ այքան տանջանք, այնքան քիրտըն թափել,
Մինչդեռ հաղիւ առած շունչը, պէտք է փըչել,
Եւ ամէն ինչ թողուլ ու երթալ ձեռնունայն.

Ի՞նչ արդեօք մեկնութիւն է այս առեղծուածի.
Թերեւըս դիտութիւն կենայըս առածի
Պահուած է 'ի հանդիսաւ մեր յաւիտենական։

Տըրտում է առաւել անձն իմ երբ կը խորհիմ
Խորհուրդը տըխրալի բանին տէրունական
Եթէ «Մինչեւ 'ի մահ տըրտում է անձն իմ»։

ԽՈՐՀՈՒՐԴ ԽՈՐԻՆ

Ի՞նչ խորհուրդ է անհաս և անքննին, ո՛վ Տէր,
Ցապշութիւն անհանճար մրտացրս եղկելի.
Մարդկութիւնը անդարձ և անողոքելի
Միթէ թշուառութեան վրճռո՞յ է սահմաներ...

Ինչո՞ւ, իւր խանձարրոյ հագիւ կապը լուծած,
Կը տանջեն անխնայ ըզնա ոգը ու ցաւեր,
Ինչո՞ւ ամբարհաւաճ և անյագ տենչանքներ
Կեղեքեն անդադար իւր սիրտը արնապարծ։

Արդարութեան .քո, Տէր, չըլլանը լրայեալ,
Երբ մանգաղը մահու, լանջերը խորտակած,
Ցանդունդ անծանօթին մարդն է խորասուզեալ,

Մի՞ արդեօք ահաւոր մթին այն ըստեղներ
Ծածկեն խորհուրդ խորին գաղտադողի, ո՛վ Տէր,
Զոր ոչ ոք չըգիտեր բայց միայն Ամենաց...

ԳԱՅԼ ԵՒ ԱՂՈՒԷՍ

Աղուէսը ճանճրանալով
Աշխարհի փորձանքներէ,
Յաւերէ ու դաւերէ,
Միտքը դէպ ի ապահով
Տեղ մը քաշուիլ, և ամէն
Կեանքը անցընել պահքով,
Աղօթել, ապաշխարել,
Եւ վանքի հաւեր ուտել։

Միտք դէպ ի ծը կատարեց,
Գընաց վանք մը փակուեցաւ,
Փլանը վրան հագաւ,
Մոնապոն միայնակեց,
Կարդալ դէպ ի ոսկրեցաւ,
Եղաւ սէրաբիրոջ տղայ,
Յետոյ սիրայու եղաւ,
Յետոյ եղաւ աբեղայ։

Օրին մէկը, ոռնալով
Երբ հաւնոցէն դուրս կ'ելլար,
Փորը լիք անյագաբար,
Բերնին ջուրը վազելով,
Դիմացը ելաւ յանկարծ
Գայլ մը, զոր իբրեւ տեսաւ,
Լեզապատառ մընացած,
Այսպէս անոր խօսեցաւ.

«Բարո՛վ ես, գայլ սիրելի,
Ես այլ քեզ կ'ըսպասէի.
«Աղքատն ունի պանիր հաց,
Կ'ըսեն, քունը չէ՛ տարած.»
Սա գիւղէն կուգամ հիմակ,
Ուր որ ըրի մի սակարկ.
Ինձ պիտի տան ամէն օր
Հաւ կամ վառեակ յինաւոր.

«Ես ի՞նչ ընեմ, բարեկամ,
Այսքան շատ ուտելիքը,
Ինձ կը բաւէ վառիկ մը,
Մընացածը քեզ կը տամ.
Ա՛ռ սա պարտամուրհակը,
Գընա՛ պահանջէ՛ հարկը,
Դիմացի ագարակը,
Ուսաի առի տոմսակը.»

Որկրամոլ և անմիտ գայլ
Հաւոաց ու վերցուց իր քայլ.
Ինչ ձիւն որ գլխուն եկաւ,
Երբ հասաւ հոն, հասկըցաւ.
Գունդ մը ահաւոր շուներ
Գազանին չորս կողմն առեր,
Ու ակռայ կըրճըտելով
Կ'որոտային գոռալով։

Գայլը վախէն սառեցաւ,
«Հիմա ի՞նչ ընեմ, ըսաւ
Աղուէսին.— Ցոյց տուր, եղբայր,
Մուրհակը, աղուէսաբար
Ըսաւ աղու սատանան,
Այդ գիրը չ'է անպիտան,
Այլ իմ ձեռաց յատուկ գիր
Է ապահով անցագիր։»

Ո՞վ մըտիկ կ'ընէ այնպէս
Մուրհակ, տոմսակ և քարտէս.
Շուներ չ'են քաղաքավար,
Գայլն ըրին պատառ պատառ.
«Ափսո՜ս, հառաչեց լալով
Գայլը հոգին փըչելով.
Ո՞վ ազդ. չար և չընացող,
Ուր չկայ մէկ կարդացող։»

ՅԱՒԱՆԱԿ ԵՒ ԽԱՐԴԱՒԱՆԱԿ

«Գողը գողէն գողացաւ,
Ասուած տեսաւ զարմացաւ».
Հինաւուրց է այս առակ,
Ըստուգիւ շատ բանաբակ.
«Կամ կե՛ր կամ կ՚ուտեմ»ը բան
Եղած է կանոնական.
Կեանքն է խաբող խաբողի,
Բանն ան է որ յաջողի։

Ի դատակերտին
Զոր կառոյց նախնին մեր Մըշակ,
Եւ զոր հինք երկրին
Ոչ ուղղախօսիւ կոչեցին Մաժակ,
Կար մի այդեպան և մի աւանակ.
Այդ այդեպանին անուն էր Սիսակ,
Շատ խաբեբայ մարդ,
Կըծծի և կախարդ,

Որ զիւր աւանակ
Ծեծ ու փետի տակ
Էր էշ նահատակ
Ըրած այլանդակ։
Լոկ մորթ ու ոսկոր
Եղած կորակոր,
Օրին մէկ խեղճը
Տընկեց իր պոչը,
Գետին փըռեցաւ։
Սիսակը վախցաւ
Զըլլայ թէ եալէ իշուկը ճողի.
Փութաց ու ներկեց իբրեւ ըզջորի,
Յարդով ու խոտով պորտը պարարեց,
Լըցուց ու գիրցուց, ու ծախու հանեց։

'Ի հըրապարակ Կեսարիոյ կար
Մեծ ոճնավաճառ,
Ուր մի Վանեցի մըտացի խիկար,
Մըղտեսի աղբար
Տեսաւ սուտ ջորին և ըսքանչացաւ,
Ու ծախու առաւ,
Յետ շատ քաշքըշուկ մի սակարկութեան,
Յոր իբրաքանչիւր մընաց յաղթական։
Գանձեց գումարը
Սիսակ աղբարը,
Կըծիկը դըրաւ,
Փողն առաւ փախաւ։

Հեծաւ Վանեցին ու կ'երթար. յանկարծ
Յորդ անձրեւ տեղաց.
Ցըսպունգ համակած տէր և անասուն,
Երբոր տուն հասան,
Հոն տեղ վայնասուն
Փըրթաւ 'ի մի ձայն,
Ի տեսիլ Ջրուոյն այլակերպութեան,
Որն որ փոփոխած էր իւր կերպարան
Պարզ մի իշուկի, ինչպէս էր ծընած...
Մըղաւեալ տեսաւ էշը խարդախած,

Իսկոյն հասկըցաւ խաբէութիւնը.
Բայց չի կրնըցուց ըզգօնութիւնը.
Էշը պառկըցուց, ոտքերը կապեց,
Դանակը սրբեց, գըլուխը կըտրեց.
Ջարդեց միսերը, դըրաւ 'ի չանան.
Ապուխտը հանեց ու տարաւ շուկան...
Հոն Սիսակ եկաւ ու համոեց ըրաւ,
Հանեցաւ ապրանքն ու ամբողջ առաւ.
Համրեց Վանեցւոյն ձեռքին մէջ փողը.
Բարո՛վ վայելեն դընող ծախողը,
Խաբող խաբուողը
Ու փոխն 'ի փոխը։

Բայց Սիսակ աղբար
Զըղջաց չարաչար.

Գընաց Մըղտեսուն ու գանգատ ըրաւ։
Վանեցին խընդաց երեսին, ըսաւ.
«Էշը, ո՛վ աղբար, դուն ջորի կ՚ընես...
Ի՞նչ զարմանք է որ ապուխտ ընեմ ես»։

ԷՇՆ ՈՒ ՁԻ

Օրին մէկ յաւանակ
Կ՚ըսէր ձիուն ասանկ.
«Ո՛վ եղբայր,
Երանի՛ է քեզի,
Դուն ո՛չ բեռ ո՛չ քաղցի
Դիպեցար.

«Ես ծեծ ու փէտի տակ
Բեռնաբարձ յաւանակ,
Խեղճ էակ
Մի եմ, որ թէ հազիւ
Կ՚ուտեմ օրը խրուխ
Կէս գըրիւ.»

«Խրատ մը տամ քեզի,
Ըսաւ իշուկին ձի.
Ե՛լ յօրանջէ՛,
Սուտ հիւանդ տանջուէ՛

Ու գետինը փլուէ՛
Զլուընչէ՛.

«Այն ատեն քեզ հանդարտ
Կը թողուն, պարոն տատ»։
Եւ իրաւ,
Էշն այնպէս որ ըրաւ
Ու տէրը զայն տեսաւ,
Գլխացաւ.

Գլնայ բեռնաւորեց
Զին, իշուն տեղ քըշեց
Սատկագին.
Այնպէս որ զըղջացաւ,
Թերանը բացուեցաւ
Նըժուգին.

«Պարոն տատ, լսեցի
Մեր տէրն որ իշպանի
Կը զուրցէր.
«Այս էշէն չըկայ խեր,
Վաղ առաւ մորթէ՛ զան,
Տա՛ր շուկան.

«Անոր միսն ու մորթը
Ծախէ՛ ու բեր փողը.
Ու հանգչի

Աւանակին հոգի»։
Այս խօսքը իշուկին
Ակընջին

Զարնելուն պէս, ցատկեց
Մէկէն առողջացաւ.
Ու շարկեց
Բեռը, պախուրցը խածաւ.
Ու ձայնը չըկեցաւ,
Զըռընչեց։

Հիմա, Բարաղամու
Նըման գիտուն եղաւ.
Նա կ'ըսէր.
«Երկաթը չի փայլիր
Բայց եթէ կըռանով
Ու սալով».

«Յաւանակին փորը
Չի կըշտանար խօսքով.
Այլ խոտով.
Խոսը աշխատանքով
Կը մընէ ծործորը
Ծամելով...»

Առակիս հեղինակ
Իր կողմանէ յաւել

Յոլդորակ.
Ըսաւ թէ «առաւել
Աշխատանքը է փառք
Եւ պարծանք.

Ըսաւ թէ «այս պարտէզ
են յաւիտենական
Բընութեան.
Եւ թէ աշխատութիւն
Կ'ընէ լոկ ըզմարդիկ
Լաւագոյն» ։

ԵՂԵՐԱԿԱՆ—ԵՂԻԱԿԱՆ

«Մարը տըղան անիծեց.
Եղիա՛ Եղար գըրօղ,
Քեզ պիտի տանի Կըրօղ»,
Ըսաւ տըղուն մայրը մեծ։

Այսպէս կ'ըսէ Եղիան
Յիւր իմաստուն քառարան,
Որուն յարգ գիտցաւ սակայն
Օտարուհի մի միայն։

Հէք Եղիա կ'ամբիշնար
Կընոջ քամակ բեռ ըլլալ.
Բայց չեղաւ ամօթահար
Յեկեղեցւոյ 'ի դուռն, այլ

Մուրաց ցուպը 'ի ձեռին,
Ոչ եթէ իրեն համար,

Այլ կեցող աղքատներին,
Որոց բաժնեց ըզդենար։

Մայր մ՚ալ աղջիկն անիծած
Էր, ոչ զի սա կարդացող,
Այլ և չէր իսկ արբեցող...
Խլմանն է տէր տիրուհեաց։

Ի՞նչ գիտէ գինւոյ համը
Այն որ գըրէ ու կարդայ.
Տո՛ւր անոր համադամը,
Ապուշի պէս կը մընայ...

Հայ ազգ չըգիտեր յարդը
Գիտութեան, ու կ՚ըսէ թէ
«Այս անմիտ մարդոց գործ է.
Զայն չ՚առներ հացարարը.

«Գիտութիւնը Շուկան է.
Գըրող կարդացող մարդը
Անարծաթ վարժապետ է.
Հացի տեղ կ՚ուտէ յարդը»։

Խեղճ Եղիա... «Դուն, ըսին,
Գընա՛ ելիր կախաղան,
Եղբը քեզի մահարձան
Կը կանգնենք մէջ մեր սըրտին։»

Գրնա՛մ մեռիր, եկ սիրեմ:
Այս է սովորեալ ձայնը
Զոր ամէն օր կը լսեմ.
Կեցցէ՞ մեռնող խաժանը...

Եղիան էր զարմացող
Վոլդէրի ու Լիդրէի,
Ամէն գլուխ որոճող
Անյագուրդ, անդլուդեալի...

Բայց աւա՜ղ է հանճարի,
Նոյն իսկ Հոմերականի.
Եղ՞ւկ Եղիականի...
Եղ՞ւկ. Գլուխն անճարի...

ՀԱԻԿՈՒՐ

Ա.

Ամբոխ լատինաց, հաւկոր Հայկական,
Էր հաւահիրմայ Եարուբական,
Յորոց Հրոմը էր զայն ժառանգած
Հանդերձ Պատգամաց և Ոգորութեան։

Օդին մէջ թռչնոյ զընել թռչիւներ
Հրմայից դորձ էր, և հաւեր պահել
'Ի խաւարամած հաւնոյի արգել
Ուր լոյսը աչայ հաւուց նրատէր.

Ցեռոյ հանելով 'ի դուրս այն հաւեր,
Հարցուկ կը ցանէր գեռնի վերայ կուր,
Որն որ կըսցելով կ'ուտէր հաւը կոյր,
Եւ այս ուռեսաը հարցուկ կը մեկնէր։

Գարի կամ ցորեն, կուտ իւրաքանչիւր
Աչողակ բաղդի կամ ձախողութեան
Էին նըշանակ, զորըս հարցուկներ
Կը հըուչակէին տաճարին յատեան։

Բ.

Կին մի դեռատի, տեսքով դեղանի
Դէպ 'ի տաճարը ճեպով կը դիմէր.
Քալուածք տիրական, հասակ նազելի,
Բայց յաւ դառնաղէտ 'ի դէմս երեւէր։

Խընդրեց նա հարցուկը հարցափորձել.
«Հաւկուր եմ, ըսաւ, աչօք, և կ'ուզեմ
Հաւնոցիդ պատգամը 'ի քէն լսել.
Արդեօք է՞ հընար որ պայծառ տեսնեմ,

Տեսնեմ սիրելւոյս դէմքը իսկոյի
Հեռուանց 'ւ 'ի մօտոյ, դէմքն այն դեղանի.
Կ'ուզեմ դիտել թէ արդեօք ինծի պէս
Կը սիրէ՞ նա դիս, և հաւատա՞մ ես։

Հարցուկն արձակեց իւր հաւը հաւկուր,
Նետեց բըռնակիր կուտ 'ի կերակուր.
Դիտեց ուռելը կուտերն համերամ,
Եւ խօսեցաւ այս օրինակ պատգամ.

Գ.

«Չէ՛ օրէն դատել հաւկուր հաւկուրի.
Մինթէ առաջնորդ կ՚ըլլա՞յ կոյր կուրի.
Սակայն հըզօր է իմին ոգելը,
Եւ աւասիկ է ոգմանըս ելը.

Քու տեսութիւնը հաւասար հաւկուր
Պիտ՚ ըլլայ տեսոյ քու սիրականի.
Գընա՛, ով բամբիշ, զոհէ՛ զոհ հարիւր
Հաւկուրաց պաշտպան դիցուհւոյ մեծի»

Գընայ բամբիշը և ըրաւ այնպէս,
Զոհը Աստուծոյն մատոյց անթերի.
Հարիւրեղեանի արդիւնքը զոհի
Եղեւ պատգամոց լըրում լիապէս։

Հանահաւասար տիկնոջ, սիրական
Հաւկուր աչք եղեն, բամբիշին նըման...
Հարցուկ հարցուկի երբոր հանդիպէր,
Հարցերն յիշելով, յիրար կը ժըպտէր...

ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ

ՈՈՍՏՈՍ կամ ԱՐԳԻԼԵԱԼ ՊՏՈՒՂ

Ա.

Պարսից առասպելայ ներկուռ աւանդապահ,
Քերթողահօրդ Հայոց ոգի հոմերական,
Եւ դու Աւարայրին երգիչդ եղիշայ,
Որ յոճ ատտիկեցի հեղուս մեղրածորան,
Դու ևս եղծ աղանդոց ո՛վ եպերիչ անմահ,
Կողբացիդ, շընչեա՛ յիս զիմաստս քո և ըզբան.

Որ գիտակ ես Պարսից կեշտին որմզդական
Եւ Կըրկին ըսկըզբանըն, բարւոյ և չարի,
Ուստ՝ Որմզդայ մուծաւ պաշտօն և Արհըման,
Զոր առաջին դենպետ մոգուց Խարամանի
Եւ մեծ օրէնաւոյցըն զըրադաշտական
Ի գիրըս զենտադրոշմ աւանդած է Մանի.

Ի՞նչ է բարին և չար, կամ ո՞ր այն է որիշ,
Ո՞վ է մարդ որ գիտէ առնել զայն մատնանիշ,

Եւ ի՞նչ է մարդն ինքնին եթէ ոչ մի զանգուած
Զարին խառն ընդ բարւոյ և անկատար վիժած .
Եւ որ այսրէն և առա բարին է առժամայն
Ո՞չ ապաքէն է չար այլուր կամ վաղուդայն ։

Ի՞նչ է սարքերութիւն ընդ այնքամ որ հազար
Ունէր հաս արքառոյ և դուար անհամար ,
Որն որ կընոջ այրոյ մէկ դառին ցանկացաւ
Եւ զայն յափշտակեց զբրկանաւ և անպարտ ,
Եւ ընդ արենախանձ դառոյն Պոնաբարտ ,
Որ սրփռեց դիակամբ զերկիր մինչ ի Մոսկաւ ։

Ի վայրկս դալարուոջ յորում , խառն ընդ բանջար
Կը բուսնին և որոմն և դըժնիկ չարաչար ,
Ոմանք կ՚ընկոչմանին վարդին վրայ քընքուշ ,
Այլոց ձեռք կը քաղեն միայն տատասկ և փուշ ,
Ոմանց ի ծիրանիս է ծընունդ և մահն այլ ,
Այլոց ամենայն ինչ է պրուտ արդիլեալ ։

Ի ծաղրս էլպրուսի է մի ծառ ծաղկազարդ
Զոր անուանեալ կոչեն Պարք Էլնարի Ֆէրհաս .
Պատուլ զարմանալի է ծառոյն այնորիկ ,
Որն որ անմահութեան կը ծրէ մեզր անուշ .
Բայց վա՛յ որում քաղէն մատերքն անըզգոյշ
Ի մի և նոյն ատոց չարաբոյն մահամիրդ ,

Ռաման յորում Ռաստոմ, ի զարմէ Սագճըկի,
Կը բընակէր, պալատ մ'էր, ոսկւոյ և կըճի
Սիւներով զարդարուած, որուն 'ի Ֆարսիստան
Զըկայր նըման և ոչ իսկ մի միայն դարպաս,
Զոր անուանք հովանուոք, դալարիք հանապազ
Կը պատէին, նաև մի չըքեղ բուրաստան.

Ուրանոր կ'երդէին սոխակք գեղգեղաձայն
Եւ թռչունք ճրուտականք ոտ 'ի յոտ ոստուցեալ,
Եւ վոհմակք անասնոց վայրի և ընտելական
Ընձոյ և յոլոզի. նաև կապիկն ու դայլ
Հաշտ մրոջք կ'ապրէին ընդ իրեար համարձակ,
Եւ երբէք լսելի չէր անդ կռիւ և կագ.

Ուր որ ընկոյզմանեալ ի վերայ մաշկեղէն
Մորթոյ խարտիշագեղ վադեր կամ նոխազի,
Գալարուն խողովակ ոսկի թելիւ հիւսկէն
Ռոստոմ ի ձեռին, ծուխ կը ծըխէր Շիրազի
Ի վանակնեայ վըճիտ ոսկեզօծ նարկիղէ,
Ուստ' եղած գոլորշին կը ցընդէր զերթ հիւլէ։

Էր Ռոստոմայ քաջին հարճ անընմանակից,
Տեսլեամբ հըրաշալի, մականուամբ Նազելի,
Եւ ժըրաժիր գլխով կին մի զարմանալի,
Եւ ամէն երկրաւոր ձըրքերու մասնակից,
Եւ ամէն երկնաւոր շընորհօք զարդարուած.
Հուրի մի կամ փէրի, յերկնից յերկիր ընկած.

Զոր գընած էր Բասում, ի գերեաց շահասան
Սարահարթին Հայոց և կամ 'ի Վրաստան,
Որոյ հետ միամօր նաև դուստրը սիրուն,
Սիրուն գեղով դիմաց, Սիրուն ունէր անուն.
Կոկոն մի կիսաբացիկ վարդի այնքան քընքուշ
Որ կ'ըզմայլեցընէր ըզմարդ հոտովն անուշ։

Յանկարծ ծափ ըզծափի զարկաւ Պայազատն այն.
Իսկոյն մեծ դահլիճին դ.ըրունքը բացուեցան.
Ընդ որ մըտան նաժիշտք բարձեալ ըսկաւառակ,
Յորում կը բուրէին հոտաւէտ խընկամանք,
Յոր վերայ բիւրեղէն կը փայլէին անթիւ
Բաժակներ և սրուակք օշարակայ լըրիւ։

Պայատէրf պարերգուք և աղմէf աղաղակք
Եւ մատղաշ աղջկունք և դընչուք գեղանիք
Ձեռն ի ձեռըն կապմած օղակ օդապարիկ,
Ման եկան ի կայսաւ կայթըս .յուշկապարիկ,
Եւ .քաղցրաձայնութեամբ ամէն միաբերան
Կ'երգէին ներդաշնակ Ֆիրդէվսեայ երգարան։

Կոյսը շըքեղ, Սիրուն, .քան զամեն էր կուսան.
Սըլացաւ իբր արծուի այս հոլաթեւ գուսան
Ի միջոյ գուսանաց գընդին արագաթռիչ.
Անդ էր զարմանալի տեսիլ ապշեցուցիչ,
Եւ այս թարմ օրիորդ իւր .քայլուքն ոլորուն
Եւ մանուածոյ շարժմամբ կը .յաղթէր ամենուն.

Այնքան արագաշարժ Սիրուն կ'ելեւէջէր
Որ կարծես թէ ոտիւք 'ի գետին չէր դըպչեր.
Կարծես թէ օձակերպ օդերեւոյթ մի էր.
Կարծես հողմոյ նըման ամպոց մէջ կը սահէր,
Եւ, նոր Հերովդիադ, կը յուղէր վեր ի վար
Զուշ քաջին Ռոստոմայ որ յակճիռըս անդ կայր.

Բ.

Լեցո՛ւր, ըսաւ Ռոստոմ առ կոյսն գեղանի,
Մատրըւակ հիահրաշ, լեցո՛ւր մէյ մ'ալ գինի
Անմահական մատամբ յանմահական բաժակ.
Լեցո՛ւր, ով պատանի, ըղհեղուկն անապակ.
Անուշ ևս է գինի պաշտեալ ի սիրելոյ
Փեսրակերպ մատանէ զաւակին Նազելոյ։

Հեղուց նա ըղհեղուկն ազու և կարմրորակ
Զոր մայրըն ետ նըմին յականակուռ սըրսակ,
Եւ այս մատրըւակիս մատանց գոյն հինայած,
Յորոյ երանգ այտերն էին շառագունած,
Եւ շուրթն որ կը փայլէր իբրեւ զորդան կարմիր
Յըմպելոյն ծիրանւոյ չէին զանազանիր։

Ո՞վ խորոց մարդկային բընութեանըս մեղմեխ,
Ուսաի կը բըխէ բուրն ցանկութեանց հեղեղ.
Անդունդ մի են անհաս ոգւոյըս խառնարանք.

Ո՞վ կարէ թափանցել ի վիհն այն անատակ,
Եւ ո՞վ կըրնայ պատմել ըզխորհուրդըս խորին
Որ.ք մինչեւ կուսական ի կուրծ կ'ոգեւորին.

. . . . . .

Բլուռնք են բընութեան հըզօր, անզբաղելի...
Աղջիկն անտիսական իւր թեւով.ք փարելի
Յօրինեց մի մանեակ շուրջ ըզպարանոցաւ
Դիւցազին, խրատապինդ՝ւ անլոյծ շըրջանակաւ.
Այսպէս գըրկախառնեալ մանուկ և հոմանին
Կարծես անմահութեան շողոյ մէջ լոգային.

Եւ վըշեաց մինչ յուզել պատանեայ աւիշն այն
Որ Նարի Ցերհատին էր թոյն արբեցութեան,
Եւ թըմբիր կարծրակուռ կայոյց հեղձամըղձուկ
Սիրելեայ երկոյսունց զոդիս սիրալըլուկ.
Որոց կեանք, ըստ Սաառեայ, հալեցան սառնորակ
Ի տապոյ արդիլեալ պըտղոյն զարմանորակ։

. . . . . .

Երեւցաւ մայր կուսին հերարձակ, գունատած
Շիշ՝ի ձեռին հիւթոյ ոգեղինի, դեղնած...
Նորա սեւ բըբերուն մէջ տատ սըրտմըտութեան
Կայծակունք ցայտեցուց ամպրոպաւ դառնութեան.
Որոտաց ոխերիմ վըրիժուց իւր ոգին,
Եւ անկաւ՝ի վերայ դըստեր իւր դիակին...

Գ.

Եւ որ 'ի ծով կենայքս 'ի ալեայ ահոց
Ընդ մէջ մրրրկածուփ նաւարկելով ալեաց,
Իբրեւ ըզխաղալի հոսանաց անդընդոց,
Խորտակեցի զիմ լաստն հանդէպ ծովափանց,
Եւ հազիւ մազապուր ի ժանեաց խեռ ծովուն,
Մատնեցայ ցամաքի փոթորկած հովերուն.

Որ ի մարդքս ցաւոց եմ վորձ տարապայման,
Եւ ըզլեզի քամած եմ մինչեւ ցըմբրուր,
Որ 'ի ճակատագրին ներկըրթած վարժարան,
Քաշուս եմ ագիտից և հեծութեանց ներկուռ,
Ով Տէր, դառնակրկիծ հառաչեմ ի խորոց,
Եւ քեզ վերառաքեմ զաղաղակս ողբոց։

Ինչո՞ւ ուեղ և տարուի դառնութեանց չարաչար
Զորքս հեղեր 'ի դորձ ձեռայ քոյ դերհանճար.
Մի՞թէ դու ըստեղծեր զաշխարհ և ըզմարդն այլ
Ի պահու բարկութեան քոյ սատի անողորմ
Որպէսզի խարխափէ նա 'ի լժանձքը մթոայլ,
Եւ չախչախէ զբաւխը զարնելով ընդ որմ...

Այս է վրճիռ անդարձ մարդկայինքս ուեռի...
Ով որ այս էջերուս դիպուածով հանդիպի,
Եթէ յեռ անարուեստ տողիցքս ընթերցման,
Հարցընելու ելայ թէ արդեօք այս ի՞նչ բան,

Եւ ի՞նչ է մեկնութիւն վիպայ որ կը թաղչին
Ընդ անուամբ ինչ պլատոյ և Բասասայ քաջին,

Աւասիկ միտք բանից մեր յլատակ և յոյժ պարզ.
Չէ ինչ նոր և անլուր արդիլեալ պլատոյն ճառս,
Այլ է սովորական և ամենուն ծանօթ,
Պատահար օրական, մեկնութեան անկարօտ,
Հին ոլքան է աշխարհս որուն հետ ստեղծաւ
Եւ որուն հետ մէկտեղ պիտի առնու զլրաւ։

Ո՞վ է մարդ որ ըզլէպն այն չըգիտէ պլատոյն
Որն որ չար սատանայ կըլլեցուց Եւային
Եւ զոր սա կըլլեցուց իսկոյն իւր ընկերին։
Իսկոյն իբրեւ ըզծուխ ցընդեցաւ հեշտութիւն,
Իսկոյն բացուեցաւ .քօղ նոցա աչըքներուն,
Եւ տսկալով տեսան զիրերաց մերկութիւն։

Թէ ի՛նչպէս դըրախտէն վանեցան վտիկութեան
Եւ լերկ դեռնի վերայ ձեռն 'ի ծընօտ նըստան,
Ի՛նչպէս սարդ տատայնի որսալով ապրեցան
Եւ կըրծեցին զարմատս լեղի դըժընկան,
Թէ ինչ կաղ և կըռիւ, մէկ ապրուստի համար,
Ֆըշեցին գաղանաց դէմ, դիտէ Կենարար։

Զայս ամենայն պատմած է Գիրքն Սըրբազան
Իւր առաջին գլրոց մէջը, որ մի միայն
Կ'ընդգըրկէ ըզբոլոր աշխարհի գիտութիւն,
Եւ ամէն հանճարոյ է պարունակութիւն.

Այնպէս որ այս Գրքոյս, անհուն ճըշմարտութեամբ,
Կ՚արժէ զիմաստութիւն ազգայ բիւր սերընդեամբ։

Այլ ինչ որ չէ բաած գիրքն Մովսիսական,
Եւ ինչ որ կամին էջքըս ապացուցանել
Այն ինքն է մարդկային սրտի բաւիղ անել,
Ուր կը բուանին պըտուղք պէսպէս արդիական.
Երանի՛ որ գիտայ ճաշակել համադամ,
Եւ լեղի ընդ ոբնգաւ չիփըշեայ դառնահամ.

. . . . . .

ՎԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ՅՈՐԴՈՐԱԿ

Մի փիլիսոփա և քաջ վիպասաց
Կ՚ասանդէ վերայ արքային Հոնաց,
Որոյ անուն է արքայ Ատիլա,
Եւ զոր Աստուծոյ կոչեն պատուհաս,
Թէ, ախան ծոմս աւազի գունակ
Հիւսիսականաց քշելով բանակ,
Զարկաւ աւերեց քանդեց անխնայ,
Յելից արեւս 'ի մուտս նորա,
Մեծ մնան աշխարհի, այնպէս որ գետին
Ուր ոտք իր ձիուն էին կոխկըրտած
Ոչ մի խոտ բուսյուց, և գետեր ցամքած
Յատակ անչքրդի մատուցին աչայ։
Այս սարսափելի հրոան յուղկահար
Զերբակալ ըրած ազգապետներուն
Սովոր էր ընել առաջարկութիւն
Այսպիսի. «Ի՞նչ եմ ես, բարի՞ թէ չար»։

Եւ չար ու բարի ըստվն անխնայեր
Կուսար գլխատել։
Եկաւ սրբարշաւ
Հլուռմայ առջեւ բանակը դրաւ.
Առաջարկն ըրաւ, սովորեալ խընդիր
Բարոյ և չարին, առ կայսր ինքնակալ
Վալենտիանոս, որ անաբեկեալ,
Մընայ շրջարած և սարսափահար...
Յայնժամ Լեւոն էր հայրապետ արդար
Բազմած ամբոյն վերայ Պետրոսի.
Հադաւ իւր փիլոն, եկաւ առաջի
Բրոնակալ Հոնին, անտատ ի վրանդ.
Նորա երեսայ վերայ կը փայլէր
Գերապանծ վառայ այնպիսի պատկեր
Որ բրոնաւորին ոգեց պատկառանք։
Ասաւ. «Դու ոչ չար ես, ոչ բարերար,
Այլ չարը մենք ենք, և 'ի պատուհաս
Մեզ, յուպարկեց Տէր ըզքեզ, Ատիլա,
Որ կը վարես զայդ պաշտօն չարաչար...
Բայց դիտցիր, ո՛վ քաջ, թէ նոյն Ատրուած,
Ի հակառակորդ ամբարտաւանին,
Նա իւր շընորհներ կուտայ խոնարհայ,
Եւ նեղոցամիտ է մերժաւորին։
Զկրէ՛ այս քաղաք ուր իր պաշտամանն
Ամբոխն է դրրած յուխտեանական
Եւ ուր կը փայլին իւր վառք սրբոյն,
Զոր անարդողայ ձեռք կը գօսանան։

Թէ զաշխարհ ամէն գլրաւել զօրեա,
Կլրնա՞ս հետ տանիլ միմիայն լուսայ
Բոլոր դանձերէն որ քեզի մընայ,
Երբ մերկ առաջի ահեղ ատենին
Ելեա ահաւոր քու Դատաւորին...
Գրնա՛, ով հլզօր, և մի՛ գործեր չար.
Հլզօր քան ըզքեզ կայ Տէր մի անճառ...

Ի լուր այս բանից ահաբեկեցաւ
Սիրտ բռնաւորին, գլնաց մեկնեցաւ...
Խորշի՛նք 'ի չարէ և գործե՛նք բարի,
Առ մեզ կը ձայնէ Հայրապետն արի։

ՎԵՐՋ

ՑԱՆԿ

Ներածութիւն Ա.

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

Ծաւ կենաց 1
Ծուռ աչխարհ 6
Գաղանիք երանութեան 12
Արծաթ 17
Ինդիր երջանկութեան 23
Անկ լուանոց 27
Խորք խորոց 34
Ծաղկոցք կենաց 46
Տուփ Պանդորի 51
Ցիրաէվսի 61

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

Խիկարի կատակը 69
Հայասան 72
Ցաւ 74
Ունայնութիւն ունայնութեանց 79
Ի մանկիկ դեռահաս 82
Մաղթանք մօր 84
Իղձք 86
Երգ բաղանեաց 88

Երանուհի 92
Բարդ 95
Ի մահիճս մահու 97

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Ժամանակ 115
Հաւատք Յոյս, Սէր 118
Սակաւ առակ 120
Փիլ և մրջիւն 124
Սգուէան հոգեվարք 126
Վերարկ Նեռոսի 129
Թմայք և հմայք 131
Ոչ շատ 132
Տերեւաթափ 134
Ունայնութիւն ունայնութեանց 136
Անհուն կատակերգութիւն 138
Իմաստութիւն ոգւոյ 141
Եօթն տարի 145
Երուանդ 147
Վարդավառ 151
Ծառ գիտութեան 154
Իմաստութիւն խիկարի 156
Երկնային վիճակ 158
Սակրդ 162
Պառաւ և Սատանայ 166
Մահու գանգատը 169
Նոկտանք 174
«Ուլունք Շամիրամայ ի ծով» 176
Սաւոլ փառաց անցաւորի 178
Ժողովոլ Գլ. Ս. 180
Ո՞վ գիտէ 182
Անդարձ 184
Թառ 186
Խնքնասէր 188

Նաւորդ 190
Յերկուանք 192
Կին և այր 194
Սկեպտիկ 196
Մեծ և Փոքր 198
Սմանոր 200
Անկում 202
Պառաղ ծառոյն 204
Տանտաղի 206
Խորհուրդ մարդկան, կամք Աստուծոյ 208
Տրտում է անձն իմ 212
Խորհուրդ խորին 213
Գայլ և աղուէս 214
Յաւանակ և խարդաւանակ 217
Էշն ու ձի 221
Եղեբական Եղիական 225
Հաւկուք 228

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

Ոռատում կամ արգիլեալ պտուղ 233
Վերածութիւն. Յորդորակ 242

ՎՐԻՊԱԿՔ

Էջ	Տող	ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ
74	14	Բազմ	Է
75	24	ըզդեւոց	ըզդիւաց
104	3	Խազաղ	դազաղ
105	22	,ապրի	կ'ապրի
107	10	չոնի	չ'ունի
107	10	ապարանք,	ապարանք
107	15	անտերոնջ	անտերունջ
108	21	մահը	մահ
112	4	նուաստոյն	նաւաստոյն
112	19	դառծեալ	դարծեալ
118	1	ՀԱՒՏԱՔ	ՀԱՒԱՏՔ
128	6	կափարիչը:	կափարիչը
160	17	ըղացին	ըղանցին
179	3	Արտաշիսի. բանն	Արտաշիսի բանն.
203	11	կատրաձի	կատարաձի

441991

Կեդրոնատեղի. Ս. Հրաւերեալի եղբ.
Կ. Պոլիս, Բաղրէի ողու խաչի թիւ 77.

BIBLIOTHEQUE NATIONALE DE FRANCE
3 7513 02061099 3